



## Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ  
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial  
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով  
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

**Share** — copy and redistribute the material in any medium or format

**Adapt** — remix, transform, and build upon the material



14PP

22 29  
4-23 28

2010





Printed in Turkey

۱۴۵۰

۲۲  
۹-۲۳

۲۰

ԴԱՍԳՐԱՔ

ՀԱՂԱՎՐԴԱԿԱՆ ԴՊՐՈՑԱՅ

---

ՀԱՏՈՐ Գ.

ՊԱՏՄՈՒԹԻՒՆ, ՍՈՒՐԵ ԳՐՈՅ.

ՅՈՐԻԵԽԵԱՅ

ԱՄԲՐՈԽԻԱՍ Գ., ԴԱԼՖԱՅԵԱՅ.



ԽՈՅԵՐԴԱՍԵԱՅ.

Խ. Տայար, Խալիկանակ Աւուսսար, Հայոց.

1860.

30817-42

|2081

Հրամայեցաք տպագրել, եւ յետ տպագրութեանն առաջի առնել ուր հարկն է զսահմանեալ թիւ օրինակացն :

Թէոդոսիա, 27 Մայիսի 1860:

ԳԱ.Բ.Բ. Պ. ԱՅՎԱԶՅԱՆ.



2727  
39

13377-57

# ՊԱՏՄՈՒԹԻՒՆ

## ՀԻՆ ԿՏԱԿԱՐԱՆԻ.

ԳԼՈՒԽ Ա.

ԱՇԽԱԲԴԻՍ ՍՏԵՂԾՄԱՆԵՆ ՄԻՒԶԵԻ ԶԲՀԵԼԵԼ.

1963 — 3308 Քրիստոնէ առաջ.

ԴԱՍ Ա.

Ստեղծումն աշխարհի և արարածոց.

Հ. Սուբբ զբոց պատմութիւնն ինչ է :

Պ. Աստուծոյ տուած ու պատուիրած ճըշմարիտ կրօնքին պատմութիւնն է, որ կսովբեցընէ մեզ Աստուծոյ մեծութիւնն ու մեզի համար ըրած սքանչելի գործերը . եւ այն

զիքքը՝ յորում այս հրաշալիքը պատմուած են՝ կըսուի Աստուածաշունչ, այսինքն Աստուածոյ շնչովը ազդեցութեամբը գրուած, որով եւ Սուրբ Գիրք. եւ աշխարհիս մէջ անկէց հին զիքք չկայ: Նոյն գրքով կսովորեցընէ մեզի Աստուած բացայայտ կերպով թէ ինքն ով է, մեք ուսկից եղած եմք եւ ինչ պիտի լինիմք:

Հ. Հին եւ Նոր Կոտակարան ինչ ըսել է:  
Պ. Հին Կոտակարան ըսելով պէտք է հասկընալ այն ուխտն որ Աստուած Խրայելացն՝ այսինքն Հրեից ազգին հետ ըրաւ, օրենք տալով նոցա Մովսէս մարգարեին ձեռքովը: Խսկ Նոր Կոտակարան է այն ուխտը զոր Քրիստոս Տէրն մեր բոլոր մարդկային ազգին հետ ըրաւ՝ տալով նոցա Աւետարանական օրենքը:

Հ. Աստուած քանի օրուան մէջ ստեղծեց աշխարհ:

Պ. Վեց օրուան մէջ:

Հ. Ի՞նչ կերպով ստեղծեց:

Պ. Նախ ոչնչէն գոյացուց նիւթը, եւ անկէց կազմեց տիեզերաց այլեւայլ մասունքը:

Ա. Առաջին օրն ասաց. « Եղիցի լոյս » եւ մէկէն լոյս ծագեցաւ:

Բ. Երկրորդ օրը երկինքն ստեղծեց:

Գ. Երբորդ օրը մեկտեղ ժողվեց Երկրիս վրայ տարածուած ջրերը, եւ այն ջրերուն անունը դրաւ ծով. յետոյ հրամայեց որ Երկիրս ամէն տեսակ բոյս ու ծառ քուացընէ:

Դ. Չորրորդ օրը ստեղծեց արեւն ու լուսինը եւ բոլոր աստղերը:

Ե. Հինգերորդ օրը օդին մէջ բռչող բռչուններն ու ծովու մէջ լողացող ձկները:

Զ. Վեցերորդ օրը Երկրիս վրայ զբանուած բոլոր կենդանիները ստեղծեց:

Հ. Ե՞րբ ստեղծեց առաջին մարդը:

Պ. Վեցերորդ օրը ստեղծեց նաև աշխարհիս առաջին մարդը, որ մեր նախահայրն է, իսպատկեր իւր եւ ինմանութիւն. վասնզի թէպէտ եւ մարմինը հողէ շինեց, բայց տուաւ նմա բանական հոգի, որպէսզի կարող լինի իւր արարիչը ճանաչել ու սիրել. եւ անունը դրաւ Ադամ:

Ճ. Առաջին կինն ինչպէս ստեղծեց:

Պ. Ուզելով Աստուած ընկեր եւ օգնական մը տալ առաջին մարդոյն, խոր քուն մը ձգեց վրան, կողերէն մէկն առաւ, անով շինեց զեւա մեր նախամայրը:

Հ. Եօրներորդ օրն ինչ ըրաւ Աստուած :

Պ. Ստեղծագործութիւն ընելէն դադրեցաւ, եւ նրամայեց որ եօրներորդ օրն իրեն նուիրուի, եւ այն օրը շաբաթ՝ այսինքն հանգիստ անուանեց : Ցեսոյ Եկեղեցին իյիշատակ չարութեան Քրիստոսի փոխեց զայն յաջորդ օրուան եւ կոչեց Կիւրակէ, որ տէրունական՝ այսինքն Տեառն Աստուծոյ նուիրուած օր ասել է :

---

### ԴԱՍ Բ.

Դրախտ.—Մեղք նախահարց.—Արելի մահք.

---

Հ. Աստուած Աղամն ու Եւան ուր դրաւ :

Պ. Եղեմայ դրախտին մեջ, որ զուարձալի պարտեզ մի եր՝ ամէն տեսակ զեղեցիկ ծառերով, քաղցրահամ պտուղներով, անուշանոտ ծաղիկներով ու ջրերով լի, ուր կընային ամենայն երջանկութեամբ անմահ ապրիլ՝ թէ որ Աստուծոյ հնազանդ մնային :

Հ. Աստուած իրենց ինչ բան պատուիրեց :

Պ. Անոնց հնազանդութիւնը փորձելու համար ասաց որ դրախտին ամէն ծառերուն պըտ-

դեն կարենան ուտել, բայց ծառ գիտութեան  
բարւոյ և չարի ասացուած ծառոյն պտղեն  
չուտեն :

Հ. Աղամ եւ Եւա այն հրամանը պահեցին :

Պ. Ոչ. վասնզի սատանան մեր նախածնո-  
դաց երջանկութեանը վրայ նախանձելով՝ ու-  
զեց զանոնք քշուառացընել. օձի կերպարանք  
մտաւ, զնաց Եւային քով, այնպէս հասկը-  
ցուց անոր որ երեւ արգելեալ պտղեն ուտեն,  
Աստուծոյ նման կլինին, եւ չարն ու բարին  
կիմանան : Խարուեցաւ Եւա, պտուղը փրցուց  
կերաւ, Աղամայ եւս տուաւ :

Հ. Այն անհնազանդութենեն ինչ եղաւ :

Պ. Աղամ ու Եւա իրենց երջանկութիւնը, ան-  
մեղութիւնը եւ անմահութիւնը կորսնցուցին.  
Աստուծ օձն անիծեց, զկինը դատապար-  
տեց որ ցաւով ծնանի զաւակները եւ ամուս-  
նոյն հնազանդի . ամուսինն ալ դատապար-  
տեց որ աշխատութեամբ՝ ճակտին քրտին-  
քովը ճարկ իւր հացը մինչեւ որ մեռնի ու  
մարմինը հող դառնայ՝ ուսկից ստեղծուեր եր:  
Յետոյ դրախտեն դուրս հանեց զիրենք, եւ  
որպէսզի մեկ մըն ալ ներս չմտնեն՝ դուռը  
հրեշտակներ դրաւ որ բոցեղեն քրով պահ-  
պանութիւն ընեն :

Հ. Խնչ յոյս տուաւ Աստուած մեր նախածնողաց :

Պ. Խոստացաւ նոցա որ իրենց սերունդէն Փրկիչ մը ծնանի՝ օձին գլուխը ջախջախելու, այսինքն սատանայի իշխանութիւնը պիտի խորտակէ ու զմարդիկ մեղաց գերութենէն պիտի ազատէ :

Հ. Աղամայ առջինեկ որդիքն ոչք եղան :

Պ. Աղամայ առջինեկ որդիքն եղան Կայէն եւ Արէլ. Կայէն երկրագործ էր, եւ Արէլ հովիս, որ իւր առաքինութեամբը եղրօրմէն աւելի հաճոյ, եւ իւր մատուցած զոհը՝ եղրօրը զոհերէն աւելի ընդունելի եղաւ Աստուծոյ :

Հ. Կայէն Բնջպէս վարուեցաւ Աքելի հետ :

Պ. Վրան նախանձելով՝ միտքը դրաւ որ սպաննէ զնա. Հուստի օր մը առաւ դաշտ տարաւ, եւ յանկարծ վրան վազեց ու զարկաւ սպաննեց :

Հ. Կայէն Բնջպէս պատժուեցաւ Աստուծմէ :

Պ. Անիծուեցաւ յԱստուծոյ, դատապարտեցաւ որ բոլոր կենացը մէջ քափառական պըտլուի. եւ իրեն պէս չար զաւակաց հայր եղաւ :

## ԴԱՍ Գ.

ԵՇՈՎԸ, Մարդուաշխա, և վարձատրութիւն  
եոցս .

Հ. Աղամայ երրորդ որդին ովկ եղաւ :

Պ. Աքելի մահուանէն եփաքը ծնաւ Սէր, որ  
Աքէլ եղբօրը պէս առաքինի եւ սիրելի եղաւ  
Աստուծոյ :

Հ. Կայենի եւ Սեբայ որդիքն թնջ կկոչուին :

Պ. Կայենի որդիքը կոչեցան Որդիք մարդ-  
կան, Սեբայ որդիքը՝ Որդիք Աստուծոյ :

Հ. Աշխարհիս առաջին քաղաքն ովկ շինեց :

Պ. Կայեն ըրած եղբայրասպանութեան սոս-  
կալի մեղքին համար խղճէն տանջուած' հե-  
ռուակոր տեղեր փախեր եր. քայց անով ալ  
խղճմտանքին ձեռքէն չազատելով՝ քաղաք  
մը շինեց որ մեջը մտնէ պատսպարուի, եւ  
անունը զրաւ իւր անդրանիկ որդույն անու-  
նովը՝ ԵՇՈՎՔ :

Հ. Կայենի քոռները ինչնը հնարեցին :

Պ. Ցորադ' երաժշտութիւնը հնարեց, Թո-  
քէլ՝ դարբնութիւնը, եւ Թորելայ քոյրը Նոյե-  
մա' կտաւ գործելը :

Հ. Սերայ որդոցը մեջ ոյք եղան անուանի:

Պ. Սերայ սերնդոցը մեջ անուանի եղան ենովս՝ որ իւր բարեպաշտութեամբը սիրելի եղաւ Աստուծոյ, և Մարուսադա՝ երկար ապրելովը հոգակառը :

Հ. Աստուած Բնչակս վարձատրեց ենովսայ բարեպաշտութիւնը :

Պ. Հրաշքով ողջ ողջ երկինք տարաւ զինքը, և աւանդութիւն է որ աշխարհիս վերջը նորին աշխարհ պիտի դարձունք :

Հ. Մարուսադա քանի տարի ապրեցաւ:

Պ. Մարուսադա 969 տարի ապրեցաւ, Ադամին այ աւելի. վասնզի նա 930 տարի միայն ապրեցաւ :

---

### ԴԱՍ Դ.

Ապականութիւն մարդկան.—Նոյ և Զրհեղեղ

---

Հ. Հակոյ կոչուած մարդիկը ոյք եին :

Պ. Սերայ որդոցը արգելած էր Աստուած որ Կայենի որդոց նետ խնամութիւն չընեն. բայց նոքա հետզհետէ իրենց նախահօք աստուածապաշտութենեն պակսելով՝ Կայենի

որդոցը հետ խնամութիւն ըրին . այն խնամութենէն հսկայ մարդիկ ծնան , որք իրենց ապականեալ բարքովն ու բարձր հասակովն անուանի եղան . նոցա անկարգութեանցը հետեւեցան նաև . Սերայ որդիքը , եւ սակա ժամանակի մէջ այնպէս աշխարհս ապականեցաւ , որ նոյ միայն արդար գտնուեցաւ :

Հ. Զայն տեսնելով ինչ ըրաւ . Աստուած :

Պ. Զմարդիկ ստեղծելուն վրայ զղջաց , որոշեց որ զամենքը համաշխարհական զրիեղեղով սատակէ , եւ զնոյ միայն ողջ պահէ՝ որ ուղիղ ճանապարհէն չէր ելած :

Հ. Նոյ ինչ կերպով ազատ մնաց զրիեղեղէն :

Պ. Աստուած նրամայեց նոյի որ մեծ տապան մը՝ այսինքն նաև մը շինէ , որ հարիւր տարուան մէջ լմընցաւ . այն երկար միջոցին՝ զիշեր ցորեկ կյորդորէր նոյ զմարդիկ որ ապաշխարեն , քողութիւն խնդրեն յԱստուծոյ , բայց նոքա մտիկ չըրին :

Հ. Զրիեղեղն ինչպէս եղաւ :

Պ. Հարիւրերորդ տարին նոյ տապանը մըտաւ . Աստուծոյ հրամանաւը մտան հետը նաև . իւր ընտանիքը , որ ուր հոգի էին , եւ ամեն տեսակ կենդանիներէն երկերկու հատ : Այն ժամանակ Աստուած սոսկալի անձրեւ մը իցեցուց՝ քառասուն օր ու քառասուն զիշեր

ծովը չորս կողմեն բարձրացաւ, ջուրն ամէն  
տեղ կոխեց, եւ մինչեւ ամենաբարձր լեռնե-  
րէն եւս տասնընինգ կանգուն վեր ելաւ, եւ  
քոյոր մարդ եւ անասուն խեղդուեցան (3308):

2. Տապանն ինչ եղաւ :

Պ. Տապանը այն համատարած ջրոյն վրայ  
լողալով զնաց Հայաստանի Մասիս կամ Ա-  
րարատ լերան վրայ կեցաւ. եւ երբոր ջրերը  
քաշուեցան՝ ելաւ. Նոյ տապանէն, ուր տարի  
մի ամբողջ փակուած կեցեր էր :

Հ. Նոյայ տապանն ինչ բանի օրինակ էր :

Պ. Քրիստոսի սուրբ Եկեղեցւոյն, վասնզի  
արտաքոյ նորա փրկութիւն չկայ :



## ԳԼՈՒԽ Բ.

ԶՐՀԵՂԵՂԵՆ ՄԻՆՉԵՒ ԱԲՐԱՀԱՄՈՒ ԿՈՉՈՒՄԸ.

3308 — 2296 Քրիստոսէ առաջ.

## ԴԱՍ Ե.

Որդիք նոյի , և Աշտարակաշինութիւն  
Բարելունի .

Հ. Նոյ տապանեն ելլելուն պէս բնչ ըրաւ :  
Պ. Շնորհակալութիւն եւ զոհ մատոյց Աս-  
տուծոյ : Հնդունեցաւ Աստուած նորա զոհը ,  
օրհնեց զնա եւ որդիքը , եւ խոստացաւ որ  
մէյմըն ալ զմարդիկ ջրհեղեղով չջնջէ :

Հ. Աստուած խոստմանը բնչ նշան տուաւ :  
Պ. Ծիրանի զօտին , որ անձրեւի օրեր եր-  
կինքն երեւելով՝ մարդկանց միտքը ձգէ Աս-  
տուծոյ խոստումը :

Հ. Նոյ այնուհետեւ ինչ բանի հետ եղաւ :

Պ. Զրինեղեղէն ետքը Նոյ երկրագործութեան հետ եղաւ, այզի տնկեց, եւ խաղողէն գինի շինեց :

Հ. Նոյի վրայ ինչ ազդեց գինին :

Պ. Նոյ չզիտնալով գինույն գօրութիւնը՝ շատկեկ խմեց, եւ գնաց իւր տանը մէջ քնացաւ՝ առանց վրան պարկեշտօրէն ծածկելու:

Հ. Նոյայ որդիքը հայրերնին այնպէս որ տեսան՝ ինչ ըրին :

Պ. Քամ վրան ծիծաղեցաւ.. բայց Սեմ եւ Յարէք մեծարանոք զնացին վերարկուով մը հայրերնին ծածկեցին :

Հ. Նոյ քնէն որ արքնցաւ՝ ինչ ըրաւ :

Պ. Քամայ վարմունքը լսելով՝ անիծեց նորա որդիքը. իսկ Սեմայ եւ Յարէքի ըրածին ուրախանալով՝ օրինեց գիրենք եւ նոցա որդիքը :

Հ. Նոյայ որդիքը միշտ մէկտեղ ընակեցան:

Պ. Զրինեղեղէն ետքը Նոյայ որդիքը իմիասին կընակէին Այրարատայ քովերն ու Տիգրիս եւ Եփրատ գետերուն մէջտեղուանքը. բայց քիչ ժամնաակէն այնչափ շատցան, որ հարկարեցան իրարմէ բաժնուելու:

Հ. Ո՞ւր զնացին:

Պ. Քամ Ավորիկէ զնաց ընակեցաւ, եւ Եղիպտոսը, Արարիան եւ Պաղեստինը շենցուց:

Յարերայ ցեղը՝ Փոքր Ասիան եւ Եւրոպիոյ շատ տեղուանքը: Յարերայ ցեղէն եմք եւ Հայքս:

Իսկ Սեմ' Միջագետք եւ Ասորեստան ընակեցաւ: Սեմայ ցեղէն են Երրայեցիք՝ որ Հրեայք կամ Խորայելացիք այ կըսուին:

Հ. Ասոնք ցրուելէն յառաջ ինչ ըրին:

Պ. Իրենց համախումբ միութեանը յիշատակ մի ձգելու եւ ուրիշ անգամ ջրհեղեղէ ազատելու մտքով՝ ուզեցին Սենաարայ ընդարձակ դաշտին մեջ աշտարակ մի կանգնել որ մինչեւ երկինք բարձրանայ. բայց Աստուած նոցա յանդզնութիւնը պատժելով՝ լեզունին խառնակեց, այնպէս որ իրարու խօսքը չէին հասկընար. ուստի շենքն յառաջ տանելէն յոյսերնին կտրեցին ու աշխարհիս այլեւայլ կողմերը ցրուեցան. եւ այն Աշտարակը կոչեցաւ Բարեղոն, որ խառնակութիւն ասել է:

## ԳԼՈՒԽ Գ.

ԱԲՐՈՀԱՄՈՒ ԿՈՉՄԱՆԵՆ ՄՌՎԱՆԵՍԻ ՄԱՀԻ

2295 — 4605

## ԴԱՍ Զ.

Կուտապաշոռութիւն. — Արրահամ, եւ Ղովտ.

Մելքիսեդեկ քահանայ. — Ծննւելոյ իսմայելի.

Հ. Զընեղենէն յետոյ մարդկանց վրայ ինչ երեւելի փոփոխութիւններ տեսնուեցան :

Պ. Նախ մարդկանց կեանքը կարճըցաւ, եւ փոխանակ մինչեւ 900 տարիէն ալ աւելի ապրելու սկսան քիչ ապրիւ. ինչպէս որ Արրահամ նահապետը 175 տարեկան մեռաւ, եւ որդին իսահակ՝ 180 տարեկան :

Երկրորդ, հրաման տուաւ Աստուած որ  
կարող լինին նաեւ կենդանեաց միս ուտել,  
որ մինչեւ այն ժամանակ միայն պտուղ ու  
խռտեղէն ուտելով կապրէին :

Հ. Կոապաշտուրիւնն ինչպէս սկսաւ : :

Պ. Մարդիկ իրենց ստեղծողը մոռնալով՝  
նմա ընծայելի պաշտօնը արարածոց տուին,  
սկսան պաշտել արեւը, լուսինն ու աստղերը.  
յետոյ նաեւ անասուններ, ծառեր եւ իրենց  
նման մարդոց արձաններ, որ կուռք կո-  
չուեցան, եւ նոցա տրուած պաշտօնը՝ կոս-  
պաշտուրիւն, դիցապաշտուրիւն :

Հ. Աստուած մարդկանց ազերախտուրիւնը  
տեսնելով ինչ ըրաւ : :

Պ. Ուզեց իրեն սեպհական ժողովուրդ մի  
ընտրել, որ ճշմարիտ աստուածապաշտու-  
րիւնը երկրիս վրայ մշտնջենաւորէ, ու իրմէ  
ծնանի Աղամայ խռստացուած Փրկիչը :

Հ. Այն ժողովրդեան նախահայրն ով եղաւ : :

Պ. Սեմայ ցեղէն Արքահամ անունով աս-  
տուածապաշտ անձը, որ Քաղղէացւոց Ուր  
կամ Խառան քաղաքը կբնակէր :

Հ. Աստուած ինչ հրամակա Արքահամու : :

Պ. Հրամայեց ոք հետոն անունը Արքա կինը

ՀԱՅՀ-ԸՆԴ

եւ Ղովտ եղօրորդին, ու երբայ Քանանացոց Երկիրը քնակի, զոր Աստուած խոստացաւ նորա որդոցը տալ:

Հ. Արքահամ Եւ Ղովտ միշտ մեկտեղ մնացին:

Պ. Ոչ. որովհետեւ Երկուքն ալ շատ խաշինք ունեին, իրենց հովուացը մեջ շատ կը ո.իւ կլինէք. Արքահամ հասկըցոց Ղովտայ թէ հարկ է որ իրարմէ քաժնուին: Ղովտ գընաց Յորդանան գետին քով Սոլոմ քաղաքը քնակեցաւ. Արքահամ ալ Քանանացոց Երկիրը Մամբրէի ձորուն մեջ:

Հ. Ղովտայ Բնչ փորձանք պատահեցաւ:

Պ. Ելիմացւոց քազաւորը Սոլոմն առաւ, ու Ղովտը գերի տարաւ:

Հ. Ղովտ Բնչպէս ազատեցաւ գերութենէն:

Պ. Արքահամ իւր ծառաներովը գնաց Ելիմացւոց քազաւորին յաղբեց, ու զՂովտ բոլոր ստացուածքովն ազատեց:

Հ. Այն յաղբութեան փոխարէն՝ Արքահամ Բնչ կերպով յայտնեց իւր Երախտազիտութիւնը առ. Աստուած:

Պ. Սաղեմ քաղաքին (որ յետոյ Երուսաղէմ կոչուեցաւ) քազաւորը Մելքիսեդեկ, որ միանզամալն քահանայ էր, Արքահամու առջեւն

ելաւ, օրինեց զինքը՝ նա ալ քշնամիներէն  
առած առարեն՝ տասանորդ տուաւ նմա:

Հ. Աստուած Արրահամու թնջ խոստացաւ:

Պ. Խոստացաւ որ բազմարիս սերունդ պիտի  
ունենայ, յորմէ պիտի ծնանի Մկրտչյն,  
այսինքն Փրկիչն աշխարհի Քրիստոս:

Հ. Արրահամու անդրանիկ որդին ովկ եղաւ:

Պ. Արրահամ Սարա կնոջմէն զաւակ չեր  
ունեցած. նորա յորդորանօքը իւր Ազար ա-  
ղախինը կին առաւ, եւ Խմայէլ անունով  
որդի մը ունեցաւ:

---

### ԴԱՍ Ե.

Սողոմ Գումորայ կարծանումը. — Խամակայ  
ծնունդը. — Խմայէլ եւ Խմայելացիք.

Հ. Աստուած թնջ կերպով իմացուց Արրա-  
համու Սարայէն զաւակ ունենալը:

Պ. Օր մը երեք հրեշտակ եկան Արրահա-  
մու, որ առանց զանոնք ճանչնալու՝ սիրով  
ընդունեցաւ, եւ իւր վրանն առաւ հանգչե-  
ցուց: Այն հրեշտակներն աւետիս տուին ի-  
րեն որ Սարան թէպկտեւ իննունուինը տա-  
րեկան եր՝ քիչ ժամանակէն որդի մը պիտի  
ունենայ:

Հ. Ուրիշ բնջ յայտնեց Աստուած Աքքահամու։

Պ. Յայտնեց որ Սողոմ քաղաքը պիտի կործանէ. վասնզի Սողոմայեցիք իրենց անկարգ վարքովը սաստիկ բարկացուցեր էին զնա։

Հ. Սողոմ Գոմոր ինչպէս կործանեցան, եւ Ղովտ ինչպէս ազատեցաւ։

Պ. Երկու հրեշտակ Սողոմ զնացին. Ղովտ նոցա ընդառաջ զնաց, եւ իւր տունը նրաւիրեց։ Վէս զիշերուն Սողոմայեցիք ժողովեցան Ղովտայ դուռը, կուզէին որ այն նիւթերն իրենց ձեռքը տայ որ չարչարեն։ Բայց հրեշտակները նոցա աչքը կուրացուցին, եւ Ղովտայ ալ իմացուցին որ քաղաքը կործանելու եկեր են։ Առին զնա, կինն ու երկու դրստերքը, եւ քաղաքէն դուրս հանեցին՝ ապրսպրելով որ ետեւնին չդառնան չնային։ Ղովտայ կինն այն պատուէրը մոռնայով՝ ետեւը դարձաւ, իսկոյն աղի արձան կտրեցաւ։ Սողոմ ու Գոմոր քաղաքաց վրայ ալ անձրեսի պէս հուր եւ ծծումք իջաւ, այրեց մոխիք դարձուց զանոնք՝ բոլոր մեջի մեղապարտ քնակչօքն ու քովի երեք ուրիշ քաղաքներովը։

Հ. Խանակայ ծնունդն ինչպէս եղաւ։

Պ. Երբոր Աստուծոյ խոստմանը կատարուե-

Եռան ժամանակը հասաւ, Սարա մանց զաւակ  
մի ունեցաւ, եւ անունը դրաւ Խահակ (2266):

Հ. Ազար թնջպէս կվարուէր Սարային հետ:

Պ. Խմայէլը ծնանելէն ետքը՝ արհամար-  
հանօք կվարուէր Սարային հետ . Սարան  
Աքրահամին գանգատեցաւ, եւ նա Աստու-  
ծոյ հրամանաւը տնեն դուրս ըրաւ Ազարն  
ու Խմայէլը :

Հ. Աստուած թնջ խնամք ցուցուց Ազարայ  
եւ Խմայէլի վրայ :

Պ. Երբոր Անապատին մէջ յուսահատեալ  
պտղտելով՝ ծարաւէն պիտի մեռնէին, երկը ն-  
քէն հրեշտակ մի Ազարին սիրտ տռաւաւ եւ աչ-  
քը բացաւ, որ մօտ տեղ եղած աղբիւրը տես-  
նէ. անկէց ջուր առաւ խմցուց տղուն :

Հ. Խմայէլ թնջպէս մեծցաւ :

Պ. Անապատին մէջ բնակեցաւ, եւ տաս-  
ուերկու որդիք ունեցաւ. սոքա ցեղապետ  
եղան տասուերկու արարացի ցեղերու ու Խ-  
մայէլացիք կոչեցան, եւ նոցա սերունդըն  
են Աքրաբիոյ այժմեան բնակիչները :



## ԴԱՍ Ը.

Արրահամու հաւատքն ու հետպահեղութիւնը . — Եսաւ և Յակով .

Հ. Աստուած Արրահամու հաւատքը Բնչակա փորձեց :

Պ. Օք մի հրամայեց իրեն որ իւր սիրելի ոք դին Խահակը լեռը տանի իրեն զոհ ընէ : Աստուածասէր նահապետը հնազանդեցաւ, եւ իսկոյն զաւակն առաւ, զնաց այն լեռը, փայտերը դիզեց, որդին կապեց, եւ երբ բութը վերուց որ մորքէ, Աստուածոյ հրեշտակը ծեռքը բռնեց կեցուց, եւ հրամայեց որ Խահակայ տեղը՝ քովի ծառեն կախուած ոչխարն առնու, ողջակեզ ընէ Աստուածոյ :

Հ. Արրահամու հաւատոցն ու հնազանդութեանը Բնչ փոխարէն ըրաւ Աստուած :

Պ. Խոստացաւ որ բազմարիւ ազգի մը նախահայր ընէ զինքը :

Հ. Արրահամ Բնչ կերպով կարգեց Խահակը :

Պ. Սարային վախճանելէն Ետեւ, տեսնելով որ ինքն եւս օրէ օր կծերանկայ, ուզեց Խա-

հակ որդին կարգել՝ իւր ազգատոհմէն կին առնելով, որովհետեւ Քանանացիք աստուածապաշտ չեին։ Հաւատարիմ Եղիազար ծառային պատուիրեց որ երբայ Միջազետք իւր նաքովը եղրօրը տունը, եւ նորա ընտանիքէն հարս մը բերէ Խսահակայ։

Հ. Եղիազար թնջպէս կատարեց պաշտօնք։  
Պ. Գնաց Նաքովին Ռերեկա անունով բռուր հարս բերաւ Խսահակայ, եւ Աստուած օրհնեց զանոնք։

Հ. Խսահակ քանի որդի ունեցաւ։

Պ. Երկու, որք էին Խսաւ եւ Յակոբ (2206)։

Հ. Խսահակայ որդիքը թնջ քանի նետ եղան։

Պ. Խսաւ որսորդ եղաւ. իսկ Յակոբ մեղմ քնառորութիւն ունենալով, մօրը նետ տունը կհոգար։

Հ. Այն եղրարքը սիրով էին իրարու նետ։

Պ. Օր մը Խսաւ որսէն անօրի տուն դարձած լինելով, տեսաւ որ Յակոբ ոսպէ ապուր պատրաստեր է. իւր անդրանկուրթիւնը անոր տուաւ, ապուրէն սկառառակ մը առաւ կերաւ։ Ռերեկան, որ զՅակոբ շատ կսիրէր, հնարքով մը խարեց Խսահակը, եւ նա Յակոբայ տուաւ անդրանկուրեան օրհնութիւնը։ Խսաւ սաստիկ քարկացաւ Յակոբայ վրայ։

իսկ Յակոբ ձեռքէն ազատելու համար գնաց  
Միջազետք՝ մօրեղբօրը Լարանին քով :

Հ. Ռեթեկայի քանեցուցած հնարքը ինչ է:  
Պ. Որովհետեւ Խահակայ աշքը չէր տես-  
ներ, ուլի մորթ հազցուց Յակոբին, որով Ե-  
սաւայ պէս մազուր եղաւ, եւ Խահակ գնա-  
նսաւ կարծելով՝ օրհնեց :

---

### ԴԱՍ Թ.

Որդիք Յակոբայ . — Յովսէփի կյանառուի :

Հ. Յակոբ Միջազետք ինչ ըրաւ:  
Պ. Լարանին ոչխարներն արածեց, եւ ի-  
վարձ իւր աշխատութեանը՝ անոր Լիա եւ  
Ռաքէ աղջիկները իրեն կին առաւ:

Հ. Յակոբ քանի՞ որդիք ունեցաւ:  
Պ. Տասուերկու, որ Խրայելի 42 ցեղերուն  
ցեղապետներն եղան . եւ են

Ռուքեն, Շմաւոն, Ղեւի, Դան, Յուղայ,  
Նեփրադիմ, Գադ, Ասեր, Խաքար, Զարու-  
դոն, Յովսէփի եւ Բենիամին :

Հ. Յակոր միշտ Միջազգետք մնաց :

Պ. Քանա տարի հոն կենալէն ետքը՝ Քանանացոց երկիրը դարձաւ ընտանեօքը :

Հ. Եղբօրք հետ ինչպէս հաշտուեցաւ :

Պ. Միրտն առնելու համար շատ մը ընծաներ յուղարկեց Եսաւայ. իսկ նա եղբօրք զալը լսելով՝ չորս հարիւր հոգառվ ընդ առաջ գնաց : Սարսափեցաւ Յակոր. նոյն զիշերը հրեշտակ մը երեւցաւ եւ հետք կռուեցաւ. յաղբօւեցաւ Յակորէն, եւ անունը Խրայէլ այսինքը աստուածատես դրաւ, եւ ասաց որ պէտք չէ վախնայ իմարդկանէ ինքն որ Աստուածոյ հրեշտակին յաղբեր էր : Յակորայ այս նոր անուամբը Խրայելացի կամ Խրայէլ կոչուեցան եաւ. Աքրահամու որդիքը, այսինքն Հրեայք: Եսաւ իւր Յակոր Եղբայրը տեսնելուն պէս՝ մոռցաւ նորա դէմ ունեցած ոխը, եւ հետք պազտուեցաւ :

Հ. Յակոր ուր հաստատեց իւր ընակութիւնը :

Պ. Քանանացոց Միաքեմ քաղաքը :

Հ. Յովսեփայ Եղբարքը ինչպէս վարուեցան :

Պ. Յակոր զՅովսեփի ամէն որդոցմէ աւելի կսիրեր, անոր համար Եղբարքը Յովսեփայ դէմ ոխ ունեին: Այն ատելութիւննին աւելի շատցաւ՝ երբ նա իւր տեսած երկու երազը

պատմեց, որ իրեն հանդերձեալ փառքին ու մեծութեանը նշան էին :

Հ. Յովսեփիայ երազներն ինչ էին :

Պ. Մեկուն մեջ տեսաւ որ եղբարցը նետ արտը որայ կկապէք, եւ նոցա որաները իւր որաններուն երկրպագութիւն կընէին: Երկրորդին մեջ՝ արեւը լուսինն ու աստեղը իրեն երկրպագութիւն կընէին :

Հ. Յովսէփը մամ եւ ինչպէս վաճառեցին :

Պ. Օր մը Յակոր դրկեց զՅովսէփ որ երբայ տեսնէ քէ եղբարքն ինչպէս են. անոնք զինքը տեսնելուն պէս «Ահա երազատեսը կուզայ» ասելով ուզեցին բռնել զնա սպանել. բայց երբ Ռուրեն չքողուց, նորա խորհրդովը անջուր զրի մը մեջ ձգեցին զՅովսէփ, անկէց ալ հանեցին՝ Եզիպտոս զնացող Խսմայելացի վաճառականաց ծախսեցին: Յետոյ առին նորա պատմումանն, ուլի արեան մեջ քարխեցին եւ հօրերնուն դրկեցին՝ ասելով քէ զազան մը պատռեր է զՅովսէփ (2097):

Հ. Յակոր Յովսեփիայ մահն որ լսեց՝ ինչ ըրաւ:

Պ. Վրայի հազուստը պատռեց, քուրձ հազար, եւ զիշեր ցորեկ որդոյն վրայ կողբար:

ԴԱՍ Ժ.

Յալսեփի բանտ կղրուի, և փառքի կհասեի:

Հ. Խսմայելացիք ինչ ըրին զՅովսէփ:

Պ. Տարին Եգիպտոս, Փարաւոնի Պետափրես  
դահճապետին վաճառեցին, որ քոյոր իր  
տանը վերակացու դրաւ զնա:

Հ. Ի՞նչ փորձանք պատահեցաւ Յովսեփայ:

Պ. Պետափրեսի կնոջը զրապարտութեամբը  
բանտ դրուեցաւ:

Հ. Բանտին մեջ Յովսեփ ինչ ըրաւ:

Պ. Աստուծոյ խնամօքը բանտապետին աշ-  
քը մտաւ. և. քոյոր բանտարկելոց պահպա-  
նուրինը իրեն յանձնուեցաւ:

Հ. Բանտին մեջ ինչ երեւելի մարդիկ կային:

Պ. Թագաւորին տակառապետն ու մատա-  
կարարը՝ որ յանցանք մը ըրած էին:

Հ. Անոնց ինչ աղեկութիւն ըրաւ Յովսեփ:

Պ. Տեսած երազնին մեկնեց:

Հ. Տակառապետին երազն ինչ էր:

Պ. Տակառապետը երեք կանաչ ճիւղերով  
խաղողի որք մը տեսեր էր, և. ինքը անոնց

խաղողը թագաւորին բաժակին մեջ կքամէք  
ու անոր կուտար : — Յովսէփ աւետիս տուան  
անոր որ երեք օրէն առջի պաշտօնին մեջ պի-  
տի հաստատուի . եւ աղացեց որ այն յաջո-  
դուրեան մեջ զինքը չմոռնայ :

Հ. Մատակարարին երազն ինչ էր :

Պ. Մատակարարը գլխուն վրայ երեք ա-  
ման տեսեր էր՝ ազնիւ կերակուրներով որ  
թոջունք կուգան կուտեն եղեր : — Յովսէփ պա-  
տասխանեց որ երեք օրէն պիտի կախուի , եւ  
մարմինը թոջունք պիտի ուտեն :

Հ. Յովսէփիայ գուշակուրինքը կատարեցան :

Պ. Այս . թակառապետը Յովսէփիայ  
ըրած խոստմունքը մոռցաւ :

Հ. Փարաւոն ինչ երազ տեսաւ :

Պ. Երկու տարի ետքը Փարաւոն ալ երկու  
երազ տեսաւ , որոց չկրցաւ ոք մեկնուրիւնը  
տալ : Առաջնոյն մեջ տեսաւ որ եօրը զեր կով  
եօրը նիհար կովերու կերակուր եղան : Երկրոր-  
դին մեջ տեսաւ որ եօրը պարապ ու չորցած  
հասկեր եօրը գեղեցիկ լեցուն հասկերը կը լի-  
ցին կերան :

Հ. Յովսէփ ինչպէս ելաւ բանտէն :

Պ. Տակառապետին միտքը եկաւ Յովսէփ .  
թագաւորին ասաց , եւ նա խոկոյն բերել որ-

հաւ զնա . Յովսեփի զբուցեց որ եօթը տարի առատութիւն պիտի լինի եւ եօթը տարի սաստիկ սով , որով Եգիպտոսը մեծ խեղճութեան պիտի հասնի՝ եթէ առատութեան տարիներուն մեջ աղեկ պաշար չդիզուի : Փարաւոն հաւնեցաւ , իւր քազաւորութեանը Երկրորդն ըրաւ զբովսեփի , եւ անոր յանձննեց սովին առջեւն առնելու համար ցորենի պաշար պատրաստելը :

---

### ԴԱՍ ԺԱ.

Յովսեփայ եղբարց և հօրդ Եգիպտոս գալը .  
— Յովսեփի եղբարքը կուևսէկ . — Զիրենք  
բանո դեկը կուտայ :

Հ. Յովսեփայ եղբարքը ինչ առբով Եգիպտոս եկան :

Պ. Սովի պատճառաւ ամեն Երկրէ մարդիկ Եգիպտոս կուզային ցորեն զնելու . Յակոր ալ իւր որդիքը հոն դրկեց , եւ Բենիամինը միայն քովը պահեց , որ ամենէն պատիկն էր , եւ Յովսեփայ պէս՝ Մաքելի որդին էր :

Հ. Յովսեփի Բնջպէս վայրունեցաւ Եղբարցը հետ:

Պ. Երբոր առջեւն ելան ու ցորեն զնելու հրաման խնդրեցին, խսկոյն ճանչցաւ զանոնք. բայց իւր Բենիամին Եղբայրը մէջերնին չտեսնելով՝ վախցաւ որ նորա գլուխն ալ բան մը բերած չլինին, եւ ուզեց ճարտարութեամբ իմանալ. ուստի «Դուք լրտես եք», ասելով բանտ դնել տուաւ զանոնք:

Հ. Ե՞րբ հանեց բանտէն Եղբարքը:

Պ. Երեք օրէն. հրամայեց որ պարկերնին ցորենով լեցընեն, թերած ստակնին ալ անոնց մէջ զնեն, եւ ճամբու պաշար եւս տալով ճամբեց զանոնք. բայց քովք պատանդ պահեց Նմաւոն Եղբայրնին՝ որպէսզի Բենիամինը թերեն:

Հ. Երկրորդ անգամուն Բնջպէս ընդունեցաւ:

Պ. Պալատին մէջ փառաւաոր հացկերոյք ըրաւ. նոցա, եւ Բենիամին Եղբօրը վրան խանդադատեցաւ, այնպէս որ չկըցաւ ինքզինքը քոնել, դուրս ելաւ լացաւ:

Հ. Եղբարքն Բնջ ըրին:

Պ. Եղբարքը շատ զարմացան ու շփորեցան՝ Երբոր իրենց ճամբայ ելլելեն ետեւ. Յովսեփայ մարդիկը վրայ հասան, իրեւ զոյ քոնեցին զիրենք, եւ կստիպէին որ դուրս հանեն իրենց տիրոջն արծարէ զաւարը. վասնզի

Յովսեկի ինքզինքը Եղբարցը յայտնելէն առաջ  
ուզեր եր փորձել զանոնք։ Գաւարը Բենիա-  
մինի պարկին մեջէն ելա։՝ ուր Յովսեկի իւր  
տանը վերակացուին ձեռքով պահել տուեր եր։

Հ. Յովսեկի ինչ պահանջեց։

Պ. Ուզեր որ Բենիամին իւր քովը գերի  
մնայ։ Միւս Եղբարքը ոտքն ընկան աղաջե-  
ցին որ ներէ. երբոր ճար չեղաւ, Յուղան ը-  
սաւ որ երէ Բենիամին իրենց հետ զդառնայ,  
ծերունի հայրերնին սրտին ցաւեն կմեռնի,  
և աղաջեց որ զինքը նորա տեղը գերի ընդունի։

Հ. Յուղային աղաջանքը լսեց Յովսեկի։

Պ. Յովսեկի հօրը անունն որ լսեց՝ զդիմա-  
ցաւ. հրամայեց որ օտարները դուրս ելլեն,  
և ինքը դարձաւ ըսաւ Եղբարցը արտասուե-  
լով. « Ես եմ Յովսեկի . . . հայրս ողջ է։ » Զա-  
մենքը զրկեց համրութեց, և հրամայեց որ  
երբան զնա Եգիպտոս թերեն։

Հ. Յակոր որ լսեց քէ Յովսեկի ողջ և ինչ ըրաւ։

Պ. Աւրախութեամբ ելաւ եկաւ. Եգիպտոս  
բոլոր ընտանեօքը, և Փարաւոն անոնց տր-  
ւաւ. Գեսեմ կոչուած երկիրն՝ որ Եգիպտոսի  
ամենէն պտղաբերն էր։ Հոն մեռաւ. Յակոր  
(2076), և նորա որդիքը շատցան և մեծ ժո-  
ղովուրդ մը ձեւացան։

## ԴԱՍ ԺԲ.

ԽԱՐԱՅԵԼԱԳԻՈԾ ԵԳԻՎՈՒՈՒԿԻՆ ԵՂԵՂ :

Հ. ԽԱՐԱՅԵԼԱԳԻՔ ԲՆԸ ԿՐԵՑԻՆ յԵԳԻՎՈՒՈՒ :

Պ. Յովսեփիայ մեռնելէն ետքը ուրիշ բագաւոր նստաւ որ Յովսեփիայ աղեկութիւնները մոռցաւ, եւ ԽԱՐԱՅԵԼԱԳԻՈԾ օրէ օր շատնալէն վախնալով՝ զանոնք ջնջելու ետեւէ եղաւ։ Մկան չարաշար աշխատցընել, եւ հրամայեց որ նոցա ծնած արու զաւակները նեղոս գետը ձգեն (1725)։

Հ. Աստուած որո՞ւ ձեռքով ազատեց զանոնք։

Պ. Մովսէս մարգարէին ձեռքովը՝ որ Դեւայ ցեղէն էր։

Հ. Մովսէս ԲՆԸ ԿԵՐՊՈՎ ազատ մնաց նորածին տղոց կոտորածէն։

Պ. Մայրը կպրածիւրով պատած կողովի մը մէջ դրաւ զնա, լաւ մը փակեց ու գետը ձգեց։ Աստուծոյ ողորմութեանը յանձնելով։

Փարաւոնի աղջիկը պտըտելու ելած լինելով տեսաւ կողովը, հանել տուաւ, տղուն վրայ խղճաց, իրեն որդեգիր առաւ, եւ անունը դրաւ Մովսէս, որ չը ազատած ասել է: Փարաւոնի պալատը մեծցաւ Մովսէս եւ Եգիպտացւոց գիտութիւնները սովորեցաւ:

Հ. Մովսէս երբոր մեծցաւ՝ ինչ ըրաւ:

Պ. Քառասուն տարեկան որ եղաւ, Փարաւոնի պալատը քողուց զնաց իւր եղբարցը քով:

Օր մը տեսաւ որ Եգիպտացւոյն մեկը Խրայելացի մը քոներ կծեծէ, զարկաւ ըսպաննեց զեգիպտացին, Մաղիանացւոց երկիրը փախաւ, եւ հոն Յորոր քահանային ոչխարները կարծեցընէր, եւ նորա Սեսլիովրա աղջիկն իրեն կին առաւ:

Հ. Աստուած Երը երեւցաւ Մովսէսի:

Պ. Օր մը Քորէր լերան վրայ երեւցաւ Աստուած, հրամայեց որ երբայ Խրայելացիները Եգիպտացւոց ծառայութենէն ազատէ:

Հ. Մովսէսի ով օգնական տուաւ Աստուած:

Պ. Ահարոն մեծ եղբայրը:

Հ. Մովսէս իւր պաշտօնը ինչպէս կատարեց:

Պ. Ահարոնի հետ զնաց Փարաւոնին առջեւն ելաւ, եւ ասաց որ Խրայելացիքը քողու որ երբան քայց նա յանձն չառաւ:

Հ. Մովսէս Յնչ ըրաւ։

Պ. Աստուծոյ հրամանաւը զանազան պատիժներ տուաւ Եգիպտացւոց, որ Տառի հարուածք Եցիպտոսի կըսուին։

Հ. Եգիպտոսի տասն հարուածքը որոնք են։

Պ. ա. Նեղոս զետին ջուրը արիւն դարձաւ։

թ. Անթիւ անհամար գորտերով լցուեցաւ Եգիպտոս։

շ. Մարդիկ եւ անասունք մունով՝ այսինքն մասը մժեղներով լցուեցան։

Դ. Բոլոր Եգիպտոս շանաձաննով լցուեցաւ։

Ե. Ժանտամանով Եգիպտոսի անասնոց մեծ մասը ջարդուեցաւ։

Ղ. Մարդկան ու անասնոց վրայ սոսկալի ուռեցք ու վերքեր ելան։

Ի. Կարկուտ ու կայծակ իջաւ երկնքեն, որով բոլոր դաշտը գտնուած մարդիկ եւ անասունք մեռան։

Հ. Կարկտեն մնացածը մարախը կերաւ։

Թ. Երեք օր Եգիպտոսի վրայ խաւար պատեց։

Ժ. Եգիպտացւոց՝ մինչեւ նաև անասնոց անդրանիկները մեռան։

Հ. Խորայելացիք ալ կվնասուեին :

Պ. Խորայելացիք ազատ կմնային հրաշքով :

Հ. Փարանոն նըր արձըկեց Խորայելացիները :

Պ. Տասներորդ հարուածեն ետքը (1645):

Հ. Ենջոն Պասեքն հաստատեց Մովսէս :

Պ. Խորայելացւոց Նզիպտոսէն ելլելուն յիշատակը պահելու համար Պասեք կամ Զատիկ ըսուած տօնը հաստատեց, որ Երբայեցերէն անցք կնշանակէ : Պասեքի տօնին զառն կմորթէին եւ եօրն օր բաղարջ կուտէին :

Քրիստոնէութեան ժամանակն եւս Քրիստոսի Տեառն մերոյ յարութեան օրը Զատիկ կոչեցաւ :

---

### ԱԱԱ ԺԴ.

Հրեից Կարմիր ծովեև անցեիլը, եւ անապատին մէջ օրեւէք ընդունեիլը :

---

Հ. Հրեից Նզիպտոսէն ելլելին վերջը Փարանոն Բնչ ըրաւ :

Պ. Զղջացաւ զանոնք արձըկելուն, զատ մը զօրքով անոնց ետեւեն ընկաւ որ նորէն Նզիպտոս դարձրնէ :

Հ. Կրցան զանոնք ետ դարձընել :

Պ. Կարմիր ծովուն քով մօտեցաւ անոնց .  
բայց երբ Մովսէս Աստուծոյ հրամանաւը ձեռ-  
քը ծովուն վրայ երկնցուց , իսկոյն Կարմիր  
ծովը երկու բաժնուեցաւ , եւ Հրեայք մէջէն  
իջրեւ ընդ ցամաք անցան : Փարաւոն ալ իւր  
զօրքովը Հրեկից ետևեկն մտաւ ծովը՝ բայց  
Մովսէս ձեռքի զաւագանը ծովուն վրայ եր-  
կնցընելուն պէս՝ երկու կողմը պարսպի պէս  
դիզուած զրերն իջան ու բոլոր Եգիպտացիքը  
ծածկեցին խղղեցին :

Հ. Կարմիր ծովէն ուր զնացին Հրեայք :

Պ. Սին անապատը , ուր Մովսէս աստուած-  
պաշտութեան օրէնքները անոնց սովորեցուց :

Հ. Անապատին մէջ Հրեայք Բնչ ըրին :

Պ. Փոխանակ Աստուծոյ պաշտպանութեա-  
նը երախտագէտ լինելու տրտնջացին Մով-  
սէսի ու Մհարոնի դէմ , եւ ապստամբելով կու-  
գէին Եգիպտոս դառնալ :

Հ. Աստուած նացի տեղ Բնչ տուաւ նոցա :

Պ. Երկնքէն տեսակ մը նաց իջեցուց , որ  
ամէն տեսակ նամ ունէր , ամէն առանօտ  
լիիջնար , եւ մասնաւշ կկոչէք :

Հ. Խրայելացւոց միս ռատելու փափաքը  
Բնդպէս անցուց Աստուած :

Պ. Անոնց բանակը լորամարզի լցուց՝ որ  
գետնին երեսը մինչեւ երկու կանգուն բար-  
ձրութեամբ դիզուեցան :

Հ. Երբոր անոյշ ջուր չունենալով զանզա-  
տեցան՝ ինչ ըրաւ Աստուած :

Պ. Մովսեսի հրամայեց որ զաւագանովը Քո-  
թերայ ժայռին զարնէ. զարկաւ Մովսէս, եւ ա-  
ռատ ջուր ելաւ, ժողովրդեան ծարաւն անցուց :

Հ. Անապատին մէջ Աստուած ինչ կերպով  
ճամբայ կցուցըներ Խրայելացւոց :

Պ. Ցորեկը ամպ մը հովանի կիխնէր իրենց,  
որ արեւուն տաքութենէն պահպանելով ճամ-  
բայ կցուցըներ, եւ զիշերը այն ամպը հրեղէն  
սիւն դառնալով՝ լոյս կուտար նոցա :

Հ. Աստուած ինչ օրէնք տուաւ Խրայելացւոց:

Պ. Աստուած հրամայեց Մովսեսի որ ժողո-  
վուրդը Սինա լերան ստորոտը ժողվէ, եւ  
Հրեկից Եղիպտոսէ ելլելուն յիսներորդ օրը ա-  
ռաւուտը կանուխ սոսկայի փայլակներով, կայ-  
ծակներով ու որոտմունքով տուաւ Աստուած  
ամպին մէջէն իւր տասը զիսաւոր օրէնքները  
որ Տասնարանեայ պատուիրանք ալ կըսուին:

Հ. Պենտեկոստէն ինչ տօն էր :

Պ. Խօրայելացիք այն մեծ դիպուածին յիշատակը պահեցին Պենտեկոստէ կոչուած տօնը հաստատելով, զոր ամեն տարի մեծ հանդիսով կկատարէին։ Այն տօնը քրիստոնեութեան ժամանակ Հոգեգալստեան տօնին փոխուեցաւ։

---

### ԴԱՍ ԺԴ.

Խօրայելացւոց ուսկի հորբ պաշտելը . —  
Խորան վկայութեան . — Քահանեացք :

---

Հ. Ոսկի հորբն ինչ էր :

Պ. Երբոր Մովսէս Սինա լեռան գլուխը՝ տասը պատուիրանքը կընդունէր յԱստուծոյ քարի վրայ փորազրուած, Խօրայելացիք նորա ուշանալը տեսնելով, անհամբերութեամբ ստիպեցին զԱհարոն իրենց ոսկի հորբ մի շնուրու որ պաշտեն։

Հ. Մովսէս երբ իջաւ տեսաւ՝ ինչ ըրաւ։

Պ. Սաստիկ քարկութենէն՝ լեռնէն քերած օրինաց տախտակները զետին զարկաւ կոտրըտեց, ոսկի հորբը ջարդեց փոշի ըրաւ, և զայն պաշտողներէն քսանեներեք հազար հոգի մեռուց՝ Նեսեայ ցեղին օգնութեամբը։

Հ. Օրինաց տախտակները բնչպէս երկրորդ անգամ թերաւ Մովսէս :

Պ. Նորէն Սինա լեռն եղաւ, եւ քառասուն օր նոն կենաչէն ետքը հետք թերաւ պատուիրանաց նոր տախտակները եւ ժողովրդեան համար ուրիշ օրէնքներ . եւ նրամայեց որ Վկայութեան խորանն ու Տապանակ ուխտի ըսուած սնտուկը շինեն :

Հ. Երկրորդ անգամ որ Մովսէս Սինա լեռնեն իջաւ՝ վրան բնչ կարգէ դուրս բան երեւցաւ :

Պ. Երեսէն լուսոյ ճառազայքներ կեղկին, այնպէս որ ժողովրդեան հետ խօսելու ժամանակը հարկ էր քողով մը ծածկէ երեսը :

Հ. Խորան վկայութեան ըսուածն բնչ էր :

Պ. Ազնիւ կերպասէ վրան էր. Երկայնուրինը երեսուն կանգուն, լայնուրիւնը տասուերկու. եւ երկու մաս կըաժնուկք :

Հ. Վկայութեան խորանին առաջին մասն բնչ կըսուէր, եւ մէջը բնչ կար :

Պ. Վկայութեան խորանին առաջին մասը կըսուէր Մրրուրիւն, եւ մէջն եին եօրնաջանեան ոսկի աշտանակը, առաջաւորութեան սեղանը՝ որոյ վրայ տասուերկու. հաց կդրուէր միշտ եւ ամէն շարար կփոխուէր, եւ ոսկի սեղանն խնկոց՝ որոյ վրայ խունկ կծխուէր :

Հ. Վեհայութեան խորանին երկըորդ մասը  
ինչ կըսուեք .

Պ. Գարիր կամ Սրբուրիւն Սրբոց , որ ա-  
ռաջին մասէն վարագուրով մը կզատուէք,  
եւ մէջն եր տապանակն ուխտի , զոր Անտա-  
ցիք միայն կարող էին վերցընել :

Հ. Ի՞նչ եր տապանակը , եւ մէջը ինչ կար:

Պ. Անփուտ փայտէ ոսկեպատ սնտուկ մի եր,  
եւ մէջն էին օրինաց տախտակները , ոսկի  
մանանայով չի սափորը , եւ Ահարոնի ծաղ-  
կած զաւագանը :

Հ. Խորանը շինելէն յևոյ ինչ ըբառ Մովսէս :

Պ. Սուրբ իսղով օծեց զայն եւ Աստուծոյ  
նուիրեց . յայտնեց ժողովրդեան որ Աստուած  
զԱհարոն ընտրեր եր քահանայապետ , եւ նո-  
րա որդիքը քահանայ . զոհագործութեան պաշ-  
տօնն այ Անեայ ցեղին տուառ , որ Անտացիք  
ըսուեցան :

ԴԱՍ ԺԵ.

ԽՐԱՅՆՂԱԳԵԿ ՆՈՐ ՆՈՐ յԱՆԳԱՆՔՆԵՐԸ ու  
պատժուիլլը անապատին մէջ :

Հ. Աստուծոյ օրինացը դեմ յանցանք ընող-  
ները ինչ պատիժներ առին :

Պ. ա. Նարադ եւ Արկուադ՝ Անարոնի որդիքը  
իրենց բուրվառներուն մէջ՝ փոխանակ ողջա-  
կիզաց սեղանեն կրակ առնելու՝ օտար կրակ  
դրին. ասոր համար յանկարծ սեղանեն կրակ  
եւան եւ այցեց մեռուց զանոնք :

բ. Երկու Խրայելացիք Աստուծոյ հրա-  
մանաւը քարկոծուեցան. մեկը քարկութեանը  
մէջ քերնեն հայնոյանք հաներ էր, եւ միւսը  
շարաք օրը փայտ ժողվեր էր :

գ. Կորիս, Թարան եւ Աքիրոն՝ Անարոնի  
վրայ նախանձելով՝ անոր ցեղեն քահանայու-  
թեան պաշտօնը յափշտակել ուզեր էին. զե-  
տինը պատռեցաւ եւ ողջ ողջ կլից զանոնք՝  
բոլոր իրենց ունեցածովը :

դ. Մարիամ՝ Մովսեսի քոյրը՝ նորա դեմ  
զանգատելուն համար բորոտեցաւ :

Հ. Խորայելացիք ինչո՞ւ քառասուն տարի  
անցուացին անապատին մէջ :

Պ. Աստուած խոհստացեր եր որ Քանանա-  
ցւոց երկիրն Խորայելացւոց տայ . երբոր մօ-  
տեցան, հոն Մովսէս տասուերկու լրտես ղըր-  
կեց որ Երբան երկիրը դիտեն : Անոնք իդար-  
ձին երկրին քարերերութիւնը ցուցընելու հա-  
մար' հետերնին ահազին մեծութեամբ ողկոյզ  
մը բերին՝ զոր հազիւ երկու հոգի կարող էին  
վերցընել . քայց այս այ զրուցեցին քէ հսկայ  
ու զօրաւոր մարդիկ են այն երկրին ընակիչ-  
ները , և «Մեք անոնց քով մարախի ովկու էինք» :  
Այն խօսքին վրայ ամենքը սկսան գանգա-  
տիլ իրար անցնիլ : Բարկացաւ Աստուած, և  
ասաց որ քսան տարեկանեն աւելի եղողները  
Աւետեաց երկիրը պիտի չմտնեն, այլ անա-  
պատին մէջ մեռնին :

Հ. Եղիպտոսուն ելլող մարդոց մէշէն քանի  
հոգի այն սպառնալիքէն ազատ մնացին :

Պ. Երկու հոգի միայն, որք էին Քաղէք և  
Յետու . վասնզի ետ դարձող լրտեսաց մէջ հո-  
քա միայն ժողովրդեան սիրտ տուին :

Հ. Խորայելացիք անապատին մէջ մեռնելու  
դատապարտուելով՝ զգաստացան քէ ոչ :

Պ. Ոչ . անդադար բերաննին գանգատ եր .  
և մանանայէն ձանձրանալով՝ Եղիպտոսի միան

ու սոխը սխտորը կյիշեին, ու Եզիպտոսէն Ել-  
լելնուն վրայ կցաւեին։ Աստուած նորեն քար-  
կացաւ, վրանին օձեր դրկեց որ մէջերնէն  
հազարառը նոզի խածնելով մեռուցին։

Հ. Այն օձերուն ձեռքէն Բնչպէս ազատեցան։  
Պ. Մովսէսի դիմեցին որ Աստուածոյ աղօք  
ընէ ու քարկութիւնն իջեցընէ՝ որ օձերէն ա-  
զատին։ Աստուածոյ հրամանաւը բանակին մէջ  
պղնձէ օձ մը կանգնեց Մովսէս, եւ վրան  
նայողը՝ մահուընէ ազատեցաւ։

Հ. Այն պղնձէ օձը ում օրինակ էր։  
Պ. Քրիստոսի Տեառն մերոյ, որ խաչի վրայ  
քարձրանալով՝ մարդուս Ադամայ մեղօք ա-  
ռած վէրքը պիտի թժկէր։

---

### ԴԱՍ ՃԶ.

Ահարոնի զաւազանը կծաղկի։ — Ամոխ-  
հացիք և Մովսէսիք կյաղրուին։ —  
Բաղասամ։ — Մովսէսի մահը։

---

Հ. Ահարոնի ծաղկած զաւազանն Բնչ էր։  
Պ. Ցեղապետները Ահարոնի քահանայու-  
թեանը վրայ կնախտանձեին։ Մովսէս հրամայեց  
որ երկուտասան ցեղերը մէկմէկ զաւազանի

վրայ իրենց անունը գրեն ու տապանակին մէջ դնեն . որուն զաւագանն որ ծաղկի՝ իմացուի որ նաև նորա ցեղն է Աստուծմէ ընտրուած քահանան : Առջի իրիկուընէ զաւագանները դրուեցան . երկրորդ օրը գնացին տեսան որ Ահարոնի զաւագանը ծաղկեր ու պտուղ է տուեր . եւ մշտնջենառապէս Ահարոնի եւ իւր ցեղին տրուեցաւ քահանայապետութիւնը :

### Հ. Մովսէս թնջ յանցանք ունեցաւ :

Պ. Ժողովուրդը Սին անապատին մէջ ծարակ տանջուելով՝ Մովսէսի ղեմ ապստամբեցաւ . նա ալ Աստուծոյ ղիմեց . Աստուած ասաց իրեն որ ժայռէն ջուր բդիսեցընէ : Մովսէս ձիշդ չկատարեց Աստուծոյ հրամանը . փոխանակ ժայռին խօսքով միայն հրամայելու՝ երկու անգամ զարկաւ անոր . բայց Աստուած Մովսէսի թերահաւատութեանը վրայ բարկացաւ . եւ զնա պատճեց որ Աւետեաց երկիրը չմտնէ :

### Հ. Քանանացւոց երկրին որ ազգը պատերազմի ելաւ նախ Խօրայելացւոց վրայ :

Պ. Ամովքինացիք, որ Քանանացւոց երկրին հարաւակողմը կրնակէին : Խօրայելացիք յաղթեցին նոցա եւ երկրին տիրեցին :

Հ. Մովարացոց բազաւորը Բնջ ըրաւ։

Պ. Մովարացոց Բաղակ բազաւորը իմացաւ որ զենքով յաղթելը անկարելի է, Բաղաամ մարզարէն կանչեց որ անիծէ զանոնք։

Հ. Բաղաամ կրցաւ Խօրայելացիքն անիծել։

Պ. Երբ ճամբայ ելեր կերրար, սուսերամերկ հրեշտակ մը իշուն առջեւն ելաւ, ջրոդուց որ առաջ երթայ։ Բաղաամ՝ որ հրեշտակը չէր տեսներ, կզարնէր իշուն որ քալէ։ Աստուած իշուն թերանը բացաւ, ջքալելուն պատճառը հասկըցուց Բաղաամին։ Մարգարէին աչքը բացուեցաւ, տեսաւ Աստուծոյ հրեշտակը, եւ փոխանակ Խօրայելացիքն անիծելու՝ օրինեց։

Հ. Մովսէս ուր եւ Բնչպէս վախճանեցաւ։

Պ. Մեռնելին առաջ ժողովուրդը խրատնց որ Աստուծոյ պատուիրանները պահեն, եւ նորա բարկուրինը վրանին չշարժեն։ Իրեն յաջորդ դրաւ Յետուն, Նարաւ լեռն ելաւ, ուսկից Աստուած ցուցուց նմա Աւետեաց երկիրն՝ ուր ժողովուրդը սակաւ ժամանակէն պիտի մտնէր բնակէր, եւ 120 տարեկան մեռաւ (1605)։ Մովսէսին առաջ մեռեր եին քոյրը Մարիամ՝ եւ Ահարոն քահանայապետը։

## ԴԱՍ ԺԵ.

### ՅՈՒ ԵՐԱՆԵԼԻ.

Հ. Ո՞վ էր Յոք :

Պ. Եսաւայց եղեն Եղովմայեցոց աշխարհին Օսիդը ըստած Երկրեն անբաւ հարստութեան տէր, Երկիւղած, արդար եւ ողորմած մարդ մի էր:

Հ. Յորայ առաքինուրիւնը ինչո՞վ յայտնեցաւ :

Պ. Աստուծոյ քոյլուուրեամբը սատանան մեկ օրուան մէջ նորա հարստուրիւնը, առողջուրիւնն ու որդիքը ձեռքէն առաւ ու վերջին խեղճուրեան եւ աղքատուրեան հատոյց զնա:

Յոք սքանչելի նամքերութեամբ եւ նամակամուրեամբ ըստաւ. « Աստուծ տուաւ, Աստուծ առաւ, իւր սուրբ կամքն օքննեալ լիցի »:

Հ. Սատանան ուրիշ ինչ ըրաւ Յորայ :

Պ. Այնպէս ըրաւ որ Յորայ կինն ու մտերիմ քարեկամներն եւս զինքը չարաշար յանդիմանեցին իրեւ մեղաւոր մարդ ու արժանի պատժոց, բայց Յոք նեղուրեամբ եւ իմաստուրեամբ պատասխան տուաւ անոնց :

Հ. Մինչեւ ետքը թողմաց Աստուած զՅոր :

Պ. Ոչ . տեսնելով որ այն յետին թշուառութեան մէջ եւս բոլոր յոյսն Աստուծոյ վը-  
րայ դրած' սիրով կհամբերէ ամենալյն անտա-  
նելի վշտաց եւ ցաւոց , կորսնցուցած հարը-  
տութենէն աւելի տուաւ անոր , պարզեւեց  
նաեւ որդիք եւ թոռներ , եւ երկարատեւ ու  
երջանիկ ծերութիւն :

Հ. Յորայ պատմութենէն ինչ կսովիմք :

Պ. Համբերութիւն փորձանքի եւ նեղութեանց  
մէջ , Աստուծոյ բարութեան ու ողորմութեանը  
վըաչ դնելով մեր յոյսն ու վստահութիւնը :



գովար ճակատավ քայլու պատճեն հայով և  
առաջ մեջ մեր ու խաթեամ. զի ա-  
յի առնեցան մասն զայր ուն մատզառ  
առաջ մարտեամ այդեւանի խազը նույն բայ-  
ուրիստ նարարանու շուռու ու զայր զիմ  
ընկայուց. զայր ԳԼՈՒԽ Թ. Ճակատավ  
ու ամբողջական առաջ առաջ մասն

## ՄՈՎՍԵՍԻ ՄԱՀՈՒԱՆԻՆ ՄԵԽՉԵԿ ՀՐԵՒՑ ԹԱԳՍԻՈՐՈՒԹԵՒՆԸ.

1605 — 1080 Քրիստոնէ առաջ.

### ԴԱՍ ԺԲ

Հրեայք Աւետեաց երկիրը կմտնեն. — Յե-  
տուայ քաջուրիւնեները:

Հ. Յեսու Մովսեսին որ յաջորդեց՝ ինչ ըրա:

Պ. Մարդիկ յուղարկեց որ երբան Քանանա-  
ցաց երկիրն աչքէ անցընեն. եւ ժողովրդեան  
հրամայեց որ Յորդանան գետեն անցնին:

Հ. Հրեայք Յորդանանէն ինչպէս անցան:

Պ. Քահանայք Տապանակը ուսերնին առած՝  
ոտքերնին գետին մէջ դնելնուն պէս՝ Յորդանան

երկու բաժնուեցաւ . վերէն եկող ջրերը դադրեցան , վարիններն ալ Մեռեալ ծովը վազեցին , և ժողովուրդը ոտքով անցաւ մէջէն :

Հ. Այն յիշատակը ինչպէս պահուեցաւ :

Պ. Հրամայեց Յեսու որ տասուերկու ցեղերէն մէկմէկ հոգի ընտրուին , և այն տասուերկուաքը երկու սեղան շինեն . մէկը գետին մէջտեղը՝ ցամաքէն թերուած տասուերկու քարերով , և միասը ցամաքը՝ գետին մէջտեղէն հանուած տասուերկու քարերով :

Հ. Երիքով քաղաքը ինչպէս առնուեցաւ :

Պ. Երիքով քաղաքը Քանանացոց երկրին ամենէն ամուր քաղաքն էր : Աստուած հրամայեց Յեսուայ որ իւր զօրքը եօն անզամ Երիքովի պարսպաց չորս դին պտղացընէ՝ փողերը ննջեցընելով . եօներորդ օրը անոր ամրակառոյց պարիսպները ջրի պէս քափեցան կործանեցան :

Հ. Գայի քաղաքն ինչ ըրաւ Յեսու :

Պ. Առաջ վրան երեքհազար հոգի որկեց որ անոր տիրեն . քայլ չկրցան , այլ յաղբուած ետ դարձան :

Հ. Աստուած ինչո՞ւ թողուց որ յաղբուին :

Պ. Վասնզի Երիքովի աւարը Յեսու Աստուածոյ նուիրեր էր : Աքար անունով մէկը այն

աւարեն բան առաւ քովը պահեց, եւ Աստուած իմացուց Յեսուայ որ մինչեւ այն մարդը չգտնուի չպատժուի՝ իրենց պիտի չօգնէ:

Հ. Ի՞նչպէս գտնուեցաւ յանցաւորն :

Պ. Յեսու Աստուածոյ հրամանովը ցեղերը ժողվեց, իւրաքանչիւրին վիճակ ձգեց, վիճակը Յուղայի ցեղին ելաւ։ Նորեն ձգեց, տոհմի մը ելաւ. դարձեալ ձգեց, եւ վիճակն Աքարայ ելաւ։

Հ. Աքար ինչպէս պատժուեցաւ :

Պ. Ժողովրդեան առջեւը Յեսու յանցանքը խոստովանել տուաւ անոր, հրամայեց ժողովը րդեան որ քարկոծեն, եւ յետոյ Գայի քաղաքն առնուեցաւ։

Հ. Յեսու ինչպէս արեւը կեցուց :

Պ. Երբոր մեծ պատերազմի մը մէջ Երուսաղեմի Աղոնիբեզեկ քազաւորին ու անոր նիզակակից թագաւորաց յաղընլու վրայ եր՝ տեսաւ. Յեսու որ արեւը մարը կմտնէ, հրամայեց որ կենայ, եւ այնպէս ցորեկն երկնցընելով՝ քոլոր քշնամիները ջարդեց եւ Քանանցոց տիրեց։

### ԴԱՍ ԺԹ.

Քանանացւոց երկրին բաժանումը . — Գո-  
րոնիկիլ, Աւովիդ, Դերովրա, Բարսակ :

Հ. Քանանացւոց երկիրն ինչ ըրաւ Յեսու:

Պ. Խսրայելացւոց ցեղերուն բաժնեց զայն,  
որով բաց իքահանայից եւ Ղետացւոց՝ ա-  
մենքը երկրի տէր եղան :

Հ. Ղետացւոց ինչն երկիր չտրուեցաւ :

Պ. Որպէսզի նոքա հաստատուն տեղ չու-  
նենալով ամեն տեղ երբան քալեն, եւ ժողո-  
վըրդեան առ. Աստուած ունեցած պարտքերը  
սովորեցընեն :

Հ. Ղետացիք ինչով կապրէին :

Պ. Աստուած հրամայեց ժողովրդեան որ ի-  
րենց կալուածոց բերքին տասանորդը՝ քա-  
հանայից եւ Ղետացւոց տան: Նոյնպէս նաև  
գոհերէն ալ մաս ունեին նոքա:

Հ. Յեսու Յըր մեռաւ:

Պ. Ժողովուրդը ամեն կողմանէ հանգստա-

ցընելէն ետքը Աստուծոյ հետ ուխտերնին նորոգեց եւ վախճանեցաւ (1524) :

Հ. Յետուէն ետքը Խրայելացիք թնջ ըրին :

Պ. Շուտով մոռցան նորա խրատները. քայց Աստուած վրանին զքալով երբեմն երբեմն մեջերնէն քաջ մարդիկ կհաներ՝ որ զանոնք քշնամեաց ձեռքէն կազատէին :

Հ. Նոքա թնջ իշխանութիւն ունեին :

Պ. Դատաւոր կըսուէին, վասնզի ժողովրդեան դատաստանները նոքա կկտրէին :

Հ. Յետուայ յաջորդն ով եղաւ :

Պ. Գորոնիկէ, որ Խրայելացիքը Ասորւոց Քուսարսաթեմ քազաւորին ծառայութենէն ազատեց, եւ քառասուն տարի զիրենք կառավարեց (1554) :

Հ. Ի՞նչպէս փրկեց Առովդ զԽրայելացիս :

Պ. Մովարացւոց Եզդոմ քազաւորը՝ զարկասպաննեց, եւ ժողովուրդը նորա բռնութենէն ազատեց (1496) :

Հ. Ո՞վ էր Դերովրա :

Պ. Կին մարզարէ էր, որ Բարակ զօրավարին օգնութեամբը Խրայելացիքը Քանանացւոց Ցարին քազաւորին ձեռքէն ազատեց (1396) :

Հ. Այն պատերազմին մեջ Յայք անունով կինն ինչ քաջուրիս ըրաւ :

Պ. Յարինի գօրավարը Սիսարա երբոր Դեղովային յաղըռաած կփախչէր, Յայելի վըրանն ապասինեցաւ . եւ երբոր սաստիկ յոգնած քուն եղաւ, Յայք վրանին ցիցովը Սիսարայի գլուխը գետին գամեց մեռուց :

---

### ԴԱՍ Ի.

Գեղեռն, Արխմեշէք, Թովլաւ, Յայիր, Ցևիրայէ :

---

Հ. Աստուած որո՞ւ ձեռքով ազատեց Խարայելացիները Մադիանացւոց եւ Ամադեկացւոց ձեռքէն :

Պ. Գեղեռնի ձեռքովը :

Հ. Գեղեռն ինչպէս յաղբեց թշնամեաց :

Պ. Երեքնարիսը մարդու ձեռքը զէնքի տեղ մէկ մէկ փող, եւ սափորի մեջ ծածկուած ջահ տուաւ. գնաց զիշերով Մադիանացւոց բանակը պատեց, եւ նշան տալուն պէս մարդիկը սափորները կոտրեցին եւ փողերը զարկին « Սուր Տեառն եւ Գեղեռնի » կանչելով :

Այն ահազին ձայնեն եւ ջահերուն լուսեն սարսափեցան թշնամիք եւ զիրար ջարդելով ձգեցին փախան (1349) :

Հ. Գեղեռնի ով յաջորդեց :

Պ. Խորայելացիք ուզեր էին որ ինքը որդոց որդի իշխէ. բայց նա յանձն չէր առած : Երբոր մեռաւ, նորա եօրանասունքմէկ որդոցը մէջէն Արիմելէքը, անզուր եւ փառասէր լինելով՝ ինքզինքը բազառը Սիկիմացաց անուանել տուաւ, բոլոր եղբարքը քրէ անցուց, եւ բռնուրեամբ տիրապետեց :

Հ. Արիմելէքայ վերջն ինչպէս եղաւ :

Պ. Սիկիմացիք անոր բռնուրեանը չղիմանալով ապստամբեցան . Արիմելէք զնաց Սիկիմն առաւ կործանեց եւ բնակչաց մեծ մասը ջարդեց : Երբոր միջնարերդին մէջ պահուրտած մարդիկն ալ այրելու համար հոն մօտեցաւ, վերէն կին մը երկանաքարի կտոր մը նետեց գլուխը ջախջախեց : Արիմելէք չուզելով որ ըսուի թէ կնոջ ձեռօք սպաննուեցաւ, կապարճակրին հրամայեց որ զինքը մեռցընէ :

Հ. Արիմելէք բռնաւորին ով յաջորդեց :

Պ. Թովզա եւ Յայիք : Նոցա մահուրնէն ետքը Խորայելացիք զԱստուած մոռնալով նորէն կուապաշտուրեան ետեւէ եղան, Աստուած ալ բողուց որ Փղտացիք եւ Ամոնացիք զան զիրենք նուամեն :

Հ. Այն անզամ ով ազատեց Հրեաները :

Պ. Յեփրայէ, եւ ուխտ ըրաւ որ եք պատերազմեն դառնայ, առջեւը նախ ով որ ելիկ' զան ընէ զայն Աստուծոյ : Յաղրական դարձաւ, բայց առջեւն ելլողը իւր միամօր դուստրը եղաւ. ուխտը կատարելու համար երկու ամիսէն Աստուծոյ զոհեց զինքը :

Ոմանք իսուրը Հարց կըսեն թէ աղջիկը Աստուծոյ ծառայութեանը նուիրուեցաւ (1243):

---

### ԴԱՍ ԻԱ.

Սամիկսոն, եւ իւր քաջուրիւնն ու մահր :

---

Հ. Յեփրայեայ ով յաջորդեց :

Պ. Դանայ ցեղէն Մանովէ անունով մարգու մը որդին՝ Սամփսոն : Սա դեռ չծնած, հրեշտակ երեւցաւ մօրն ու ըստ « Արդի պիտի ունենաս, որ ևազովրեցի, այսինքն ուխտաւոր Աստուծոյ՝ պիտի կոչուի . զիսոյն մազերը պիտի չկտրուին, եւ բերանը զինի եւ ողի պիտի չդնէ . քան զամենայն մարդիկ ուժով պիտի լինի, եւ Խորայելացիքը Փղշտացոց ձեռքէն պիտի ազատէ :

Հ. Սամփսոն թնջակս ցուցուց իւր ոյժը :

Պ. Օր մը ճամբան առիւծի ձագի մը հանդիպեցաւ, որ կատաղած՝ վրան կվազէր. մէկէն բռնելին ու գետին զարնելով կտոր կտոր ընելը մէկ ըրաւ :

Հ. Փղշտացիներէն թնջակս վրկժ առաւ :

Պ. Երեք հարիւր աղուէս բռնեց, պղչերնին վառած ջահեր կապեց եւ. Փղշտացւոց ցորենի արտերուն մէջ արձակեց զանոնք (1172) :

Հ. Իշու ծնօտով թնջ ըրաւ. Սամփսոն:

Պ. Փղշտացիք արտերուն աւերմամբը կատաղած պահանջեցին որ Սամփսոն իրենց ձեռքը մատնուի : Երկու հաստ ջուաններով կապուեցաւ. Սամփսոն եւ ձեռքերնին տրուեցաւ. բանակնին հասնելուն պէս՝ դերձանի պէս կոտրեց փրցուց իւր ջուանները, եւ գետինը իշու ծնօտ մը զտնելով՝ հազար Փղշտացի սպաննեց անով եւ. մնացածը փախուց :

Հ. Գազայի մէջ թնջ ըրաւ. Սամփսոն:

Պ. Օր մը Փղշտացւոց Գազա քաղաքը գնացեր էր. թշնամիք իմանալով որ զիշերը հոն պիտի կենայ, քաղաքին դռները փակեցին որպէսզի առանօտը զինքը բռնեն : Սամփսոն զիշերով գնաց դռները տեղերնէն հանեց, կըռնակը զարկաւ, տարաւ դիմացի լերան վրայ:

Հ. Դալիլան թնջափս մատնեց զՍամփսոն:

Պ. Փղշտացիք տեսնելով որ բռնութեամբ կամ զօրքով պիտի չկարենան գլուխ ելլել, ուզեցին անոր Փղշտացի Դալիլա կինն որսալ: Դալիլան Սամփսոնին ըերնեն առնելով որ բոլոր ոյժը երկայն մազերէն է, որ երե կտրուին՝ իսկոյն կտկարանայ, քնոյն մեջ մազերը կտրեց, եւ թշնամեաց մատնեց զնա:

Հ. Փղշտացիք Սամփսոնի թնջ ըրին:

Պ. Բռնեցին աջուրները հանեցին եւ աղօրիք մը զրին որ իրենց ալիւրն աղայ:

Հ. Սամփսոնի վախճանն թնջ եղաւ:

Պ. Մազերուն երկննալրվը՝ Սամփսոնի ոյժն ալ նորէն վրան եկեր էր: Օր մը Փղշտացիք իրենց Դազոն կուռքին հանդէսը կատարելու ժամանակ զինքն ալ տարեր էին որ ծաղը ընեն: Սամփսոն Աստուծմէ ոյժ խնդրելով՝ տաճարին սիւները բռնեց, ու շարժելուն պէս կործանեց զայն, եւ իւր հետը փլատակին տակ երեք հազար հոգի քաղեց:

## ԴԱՍ ԻԲ.

Հեղի քահանայ. - Սամուել վերջին դատաւոր:

Հ. Սամփսոնի մահուրնեն ետքը Խրայելացիք ինչ նեղութիւններ կրեցին :

Պ. Փղշտացիք Սամփսոնի ձեռքեն ազատելով՝ Խրայելացւոց վրայ յարձակեցան՝ Հեղի քահանային դատաւորութեան ժամանակը : Արիւնահեղ պատերազմի մը մէջ Խրայելացւոցմէ երեսուն հազար հօգի մեռաւ, և Աստուծոյ բոյլտուութեամբը տապանակն ալ բըշնամեաց ձեռքն ընկաւ :

Այն պատերազմին մէջ մեռան նաեւ Հեղի երկու որդիքը, Ռփնի և Փենենես :

Հ. Հեղի որպիսի մահուամբ մեռաւ :

Պ. Եւր որդւոց անկարգութիւնները կտեսներ, և փոխանակ զանոնք խստութեամբ յանդիմանելու՝ տկար կերպով կյորդորեր որ բըռնած անկարգ ճամբանին քողուն . անոր համար ալ Աստուած որոշեր եր որ զինքն որդւոցը պէս պատժէ : Երբոր Խրայելացւոց

յաղթուիլն ու տապանակին գերի բռնուիլը լսեց, նստած արոտին վրայէն վար ընկան մեռաւ (1112) :

Հ. Տապանակը ինչ ըրին Փղշտացիք :

Պ. Նախ տարին իրենց Դագոն կուռքին մեհեանը դրին. բայց երբ տեսան որ Դագոնին արձանն ընկան կոտրտեցաւ, ժողովը դեան վրայէն ալ հիւանդութիւններ պակաս չէին, իմացան որ պատճառը տապանակն է, եւ առին ետ դարձուցին Խորայելացւոց :

Հ. Որո՞ւ ձեռքով ազատեց Աստուած Խորայելացիքը Փղշտացւոց գերութեննեն :

Պ. Սամուել մարգարեկին ձեռքով, որ Հեղի քահանայապետին յաջորդն էր:

Հ. Սամուելի վրայ ինչ կպատմուի :

Պ. Սամուել իւր մանկութիւնը անցուց տաճարին մեջ Հեղի քահանային ձեռքին տակ, վասնզի իւր հայրը Եղիկանա եւ մայրը Աննա պատիկուց Աստուածոյ տապանակին ծառայութեանը նուիրեր էին զնա :

Հ. Աստուած ինչպէս յայտնեց Սամուելի առաջին անգամ իւր կամքը :

Պ. Գիշեր մը որ տապանակին դրան առջեւը կքնանար, երեք անգամ Աստուած զինքը կանչեց եւ ապսպեց որ երբայ Հեղի քահա-

նայապետին իմացունէ իրեն եւ իւր ազգաւ-  
տոհմին զլուխը զալիք թշուառութիւնքը :

Հ. Հեղիի մեռնելին ետեւ Սամուել թնջ ըրաւ:

Պ. Բոլոր Խրայելացւոց ցեղերը պտրտեցաւ,  
եւ յորդորեց որ առ Աստուած դառնան . յե-  
տոյ Խրայելացւոց քաջութիւնը վառեց , ա-  
ղօքքով Աստուածոյ բարութիւնն իջեցուց , եւ զի-  
րենք Փղշտացւոց տիրապետութենէն ազատեց :

Հ. Սամուելի յաջորդ ով եղաւ :

Պ. Սամուել ծերանալով՝ իւր տեղը դատա-  
ւոր իւր որդիքը դրեր էր . բայց նոքա եսս  
Հեղեայ որդոցը պէս անկարգ լինելով՝ այն-  
չափ տաղտկացուցին Խրայելացիքը , որ միա-  
բերան իսնդրեցին Սամուելին որ իրենց բա-  
գաւոր մը տայ՝ որ զիրենք ուրիշ ազգաց պէս  
կառավարէ :

---

## ԴԱՍ ԻԳ.

Հոռոր և Յեսուկ :

---

Հ. Ո՞վ էր Հոռոր :

Պ. Մովարացիւաղջիկ մի էր՝ Նոոմի անունով  
Խրայելացի կնոջ որդոյն հետ կարգուած :

Հ. Հոռոր իւր սկեսրին հետ Բնչպէս էր :

Պ. Հոռոր երկանը մահուրնեն ետքը աւելի ուզեց իւր հայրենիքը Մովաբացւոց երկիրը քողուալ՝ քան թէ իւր նոռմի սկեսուրը, եւ հետք զնաց Բերդենեմ բնակեցաւ :

Հ. Հոռոր Բերդենեմի մեջ Բնչ ըրաւ :

Պ. Հոռոր եւ նոռմի հունձքի ժամանակ Բերդենեմ հասան, եւ որովհետեւ աղքատ էին՝ Հոռոր նոռմին հրաման ուզեց որ երբայ ինկած հասկերէն ժողովէ. Աստուած զինքը Բոռսին արտը առաջնորդեց, որ շատ բարի մարդ, եւ երկանը հարուստ ազգականներէն մեկն էր :

Հ. Բոռս Բնչ ըրաւ Հոռորայ :

Պ. Բոռս իմանալով որ Հոռոր իւր աղքատ ու խեղճ սկեսուրը երեսի վրայ չձգելու համար՝ իւր հայրենիքն ու ազգականները քողեր Հրեաստան էր եկեր, վրան մեծ համարում ունեցաւ, եւ իրեն կին առաւ. Աստուած օրինեց նոցա ամուսնութիւնը, Ռվերէր անունով զաւակ մի ունեցան, որոյ որդին եղաւ Յեսու, Դասիք մարգարէին հայրը :

## ԳԼՈՒԽ Ե.

ԽՄՐԱՅԵԼԱՑԻՈՅ ԹԱԳԱԼՈՐՈՒԹԵՆՔՆ ՄԻՆ-  
ԶԵՒ ԲՈԲԵԼՈՆԻ ԳԵՐՈՒԹԵԱՆ ՎԵՐՋԸ.

1080 — 536 Քըիստոսէ առաջ .

---

## ԴԱՍ ԻՒ.

Սաւուդ , Դաւիթ , Յովանարան :

Հ. Սամուել մարգարեկն ինչ կերպով քազա-  
ռոր տուաւ Խսրայելացւոց :

Պ. Առաջ ջանաց զիբենք համոզելու որ ան-  
կից ետ կենան՝ ցուցանելով նոցա քազաւորու-  
թեան ծանր հետեւանքները : Երբոր Հրեայք  
չհամոզուեցան, Սաւուդ անունով երիտասար-  
դը, որ Բենիամինի ցեղէն Կիս անուամբ մար-  
դու մը զաւակ էր , քազաւոր օծեց :

Հ. Սաւուղայ օծումն ինչպէս եղաւ :

Պ. Օր մը հօրը կորսուած էշերը փնտոելու գնացած լինելով Սաւուղ, Սամուել մարզարէին հանդիպեցաւ. Եւ նա Աստուծոյ հրամանաւը Խրայելացւոց թագաւոր օծեց զնա (1080):

Հ. Թագաւոր լինելուն պէս ինչ ըրաւ. Սաւուղ:

Պ. Զօրք ժողվեց, գնաց Ամոնացւոց վրայ յարձակեցաւ, որ Գաղաաղու Յարիս քաղաքը պաշարեր էին. յաղբեց նոցա, եւ քաղաքն ազատեց. յետոյ իւր Յովնարան որդույն օգնութեամբը Փղշտացւոց ալ յաղբեց բոլորովին:

Հ. Սաւուղ միշտ սիրելի մնաց Աստուծոյ :

Պ. Ոչ, վասնզի երկու անգամ Աստուծոյ դեմ անհնազանդ գտնուեցաւ. մեկ մը՝ Սամուելի տեղը ինքնահրաման քահանայական պաշտօն ուզեց կատարել. եւ երկրորդ՝ Աստուծոյ հրամանին դեմ Ամաղեկացւոց Ազագ թագաւորին կենացը խնայեց, ու նորա անասունները իրեն պահեց :

Հ. Ռարիշ ինչ պատահեցաւ. Սաւուղայ :

Պ. Վրան կատաղութիւն մը եկաւ, որ ժամանակ ժամանակ կրոներ, եւ ըրածը չէր զիտեր:

Հ. Սամուել ի՞նչպէս օծեց զԴաւիք :

Պ. Աստուծոյ հրամանաւը Բերդենեմ գնաց, եւ հոն զոհ մատուցանելին վերջը Յեսսէի փո-

քըր որդին Դաւիթը որ ոչխար կարածէր՝ բա-  
գաւոր օծեց (1048), եւ ասաց որ օր մը Խս-  
րայելի վրայ պիտի բազաւորէ նա:

Հ. Դաւիթ բազաւոր օծուելէն ետքը թնջ ըրաւ:


Պ. Սաւուղ քնար զարնող մը փնտուել կու-  
տար, որպէսզի կատաղութիւնը բռնած ժա-  
մանակը նուազարանին ձայնէն հանդարտի.  
Դաւիթ պատանին անուանի քնարահար ճանչ-  
ցուած լինելով, Սաւուղ բերել տուա, զնա  
ու գովը պահեց:

Հ. Դաւիթ թնջ քաջութեամբ երեւելի եղաւ:

Պ. Գողիար ախունով Փղշտացի հսկայ մը  
Խսրայելացիները կնախատէր, եւ ոչ ոք կհա-  
մարձակէր առջեւն ելլելու հետը պատերազ-  
մելու: Դաւիթ պատանին միայն սիրտ ըրաւ,  
ուեմն ելաւ, պարսաքարով մը սպաննեց, եւ  
զլուխը կտրեց Սաւուղայ բերաւ:

Հ. Դաւիթ Գողիարը մեոցընելուն համար  
թնջ վարձք ստացաւ:

Պ. Սաւուղայ Մեղքող աղջիկն իրեն կին  
առաւ, եւ անով՝ նորա եղբօրը Յովնարանայ  
հետ աւելի բարեկամացաւ:



### ԴԱՍԻ ԻԵ.

Դաւթի հաշածուիլը Սաւուղեն .—Սաւուղայ  
և Յովինարանու մահը :

Հ. Սաւուղ ինչ պաշտօն տուաւ Դաւթի :

Պ. Զինքը զօրավար դրաւ . բայց նորա յադ-  
րութեանցը նախանձելով՝ թշնամոյ պէս վա-  
րուեցաւ հետը , այնչափ որ շատ անգամ ե-  
տեւէն ընկաւ զօրքով որ զինքը մեռցընէ ,  
եւ Դաւիթը տներնին ընդունող քահանաները  
մեռցընել տուաւ :

Հ. Դաւիթ ինչպէս վարուեցաւ նորա հետ :

Պ. Զարմանալի մեծանձնութեամբ ու անյի-  
շաշարութեամբ : Օր մը Սաւուղ քանի մը հո-  
գուվ զնաց Դաւիթ պահութած այրը մտաւ  
քուն եղաւ , չզիտնալով թէ հոն է Դաւիթ :  
Դաւիթին քովի մարդիկը զինքը շատ յորդորե-  
ցին որ իւր թշնամիէն վրէժն առնու . « Աս-  
տուած ջընէ , ասաց Դաւիթ , որ Աստուծոյ  
օծելոյն ձեռք վերցունեմ . » հանդերձին ծայ-  
րէն կտոր մը կտրեց առաւ ու հեռուէն ցուցուց  
Սաւուղայ , ինչան հտատարմութեան իւրոյ :

Օր մըն ալ երբ Սաւուղ իւր վրանին մէջ  
մինակ կքնանար , Դաւիթ զնաց նորա քովէն  
գեղարդն ու զաւարը առաւ տարաւ , ու ա-  
պահով տեղ մը կեցած ցուցուց Սաւուղայ , իմա-  
ցընելով թէ ինչպէս զուր տեղ իրեն դէմ է ելեր :

Հ. Սաւուղայ ձեռքէն ուր զնաց Դաւիթ :

Պ. Տեսնելով որ Սաւուղ անդադար իւր ե-  
տեսէն է , վերջապէս Փղշտացւոց Սիկիլակ  
քաղաքը քաշուեցաւ :

Հ. Պատերազմէն առաջ՝ ինչ ըրաւ Սաւուղ :

Պ. Կախարդ կնոջ մը ձեռքով ուզեց Սա-  
մուէլ մարզարէն տեսնել որ շատոնց վախճա-  
նած էր , եւ իրմէն իմանալ պատերազմին  
վախճանը :

Հ. Սամուէլ մարզարէն երեւցաւ Սաւուղայ:

Պ. Աստուծոյ թոյլ տալովը երեւցաւ եւ քար-  
կուրեամբ ասաց որ պիտի յաղթուի եւ որդ-  
ւոցը հետ պատերազմին մէջ պիտի մեռնի :

Հ. Սաւուղայ վերջն ինչպէս եղաւ :

Պ. Պատերազմին մէջ Խորայելացիք ջար-  
դուեցան , Սաւուղայ երեք որդիքն ընկան  
մեռան . ինքն ալ նետով մը զարնուեցաւ ,  
ուզեց որ կապարձակիրը զինքը մեռցընէ՛ որ-  
պէսզի Փղշտացւոցմէ սպաննուած չհամարուի .  
եւ երբոր նա քաշուեցաւ յանձն չառաւ , ինքն  
իւր թրին վրայ ընկան մեռան (1040) :

## ԴԱՍ ԵԶ.

Դաւրի բազաւորելլը, Մեղքն ու Ապաշխարելլը. — Արխտղում:

Հ. Ի՞նչպէս բազաւորեց Դաւիր :

Պ. Քերը գնաց, ուր Յուղայի ցեղը գինքը  
բազաւորեցուց : Սառուղայ Յերուսարէ որդին  
ալ երը մեռաւ, մնացած ցեղերն եւս գԴաւիր  
իւրեանց բազաւոր ընդունեցան (1033):

Հ. Դաւիր բազաւորելէն ետեւ ինչ ըրաւ :

Պ. Գնաց Երուսաղէմ քաղաքը՝ մէջի Սիոն  
կոչուած բերդովը Յերուսացոց ձեռքէն ա-  
ռաւ, տէրութեանը մայրաքաղաք ըրաւ, եւ  
հոն հաստատեց իւր ընակութիւնը :

Հ. Թշնամիներուն յաղթելէն ետքը՝ Դաւիր  
ինչ աստուածահաճոյ գործ ըրաւ :

Պ. Աստուծոյ տապահուկը Սիոն լերան վր-  
ցայ շինած պայտը փոխադրեց, անձամբ  
բոլոր ճամբան անոր առջևուն քնար զարնե-  
լով ու երգելով :

Հ. Դաւիթ Բնջպես քարկացուց զԱստուած :

Պ. Բոլոր ներքին և արտաքին քշնամիներուն յաղթելով՝ կարծեց թէ կարող է ամեն կամքը կատարել . ուստի ուզեց Ռւրիայի կինը Բերսարեն իրեն կին առնուլ :

Հ. Ի՞նչ կերպով առաւ Բերսարեն :

Պ. Հրամայեց որ պատերազմին վտանգաւոր տեղը դնեն Ռւրիան (որ իւր քաջ զօրավարաց մեկն էր ), եւ առանց օգնութեան քողուն որ սպաննուի . եւ նորա կինը իրեն առաւ :

Հ. Դաւիթ մեղքը ով երեսին տռաւաւ :

Պ. Նարան մարզարեն Աստուծոյ կողմանէ եկաւ . Դաւիթ մեծ մեղքը երեսին զարնելով՝ անկեց զլխուն զայիք պատիժները պատմեց :

Հ. Աստուած Բնջ պատիժ տռաւաւ Դաւիթ :

Պ. Թողուց որ որդիքը իրարու հետ կռուին ու անդրանիկ որդին իւր եղբօրմէն մեռցուի, եւ Աքիսողոմ որդին . իրեն այ դկմ ելլէ :

Հ. Աքիսողոմ Բնջ ըրաւաւ :

Պ. Աքիսողոմ, որ Դաւիթ ամենէն սիրելի որդին էր, հօրը արռողին աչք ձգելով, ժողովրդեան սիրտն որսաց, հօրմէն ապստամբեցաւ ու եկաւ Երուսաղեմ հօրը տեղը նստաւ :

Հ. Արիսողոմ վախճանին հասաւ:

Պ. Ոչ. վասնզի թէ եւ Դաւիթ վախտա, բայց պատերազմին ատենը Դաւիթ գօրավարը Յովաք յաղթեց ապստամբին:

Հ. Արիսողոմ Բնջապէս մեռաւ:

Պ. Երբոր կփախչէր, անտառի մը մէջէն, երկայն աղուոր մազերը ծառի մը ճիւղերուն փարքուեցան. զորին տակէն ելաւ ու ինքը մազերէն կախուած մնաց: Յովաք հասաւ, նետով զարկաւ. մեռուց՝ Դաւիթի հրամանին դէմ, որ ապսպրեր էր խնայել որդույն կենացը:

---

### ԴԱՍ ԻԵ.

Դաւիթ Երուսաղէմ դառնալլը, ժողովուրդը  
համերելն ու պատժուիլլը. — Սադմու:

Հ. Արիսողոմին ետքը Դաւիթ Բնջ ըրաւ:

Պ. Դարձաւ եկաւ Երուսաղէմ, ուսկից փախեր էր, եւ ներեց թշնամեացը:

Հ. Խաղաղութեան ատեն Բնջ խորհուրդ ունեցաւ. Դաւիթ՝ որ Աստուծոյ հաճոյ չեղաւ:

Պ. Հպարտութեամբ ուզեց իմանալ թէ որչափ

Ժողովրդեան տէր է, եւ զիսրայելացիս համբել  
տուաւ։ Պաշտօնատեարք ինը ամիս բոլոր  
երկիրը պտըտեցան ու դարձան իրեն իմացու-  
ցին որ մեկ միլիոն հինգ հարիւր եօթանասուն  
հազար հոգի գտեր են՝ զենք բանեցընել կրցող,  
Դեւեայ եւ Բենիամինի ցեղերը չհամբելով։

Հ. Ի՞նչ պատիժ տուաւ Աստուած Դաւրի  
այն հալարտութեանը համար։

Պ. Իմացուց իրեն որ երեք չարեաց մեկն  
ընտրէ, կամ երեք տարի սով, կամ երեք ամիս  
պատերազմ, եւ կամ երեք օր ժանտամահ։

Հ. Դաւիթ երեք չարեաց ո՞րն ընտրեց։

Պ. Ժանտամահը. «Լաւ է, ասաց, որ Աստու-  
ծոյ ձեռքը իյնամ՝ որոյ ողորմութիւնը անբաւ  
է, քան թէ մարդոց ձեռքը»։

Հ. Ժանտամահէն ո՞րչափ մարդ մեռաւ։

Պ. Եօթանասուն հազար հոգի։

Հ. Դաւիթ երբոր ծերացաւ ինչ ըրաւ։

Պ. Նարան մարզարէին խորհրդովը Բերսա-  
րէին ունեցած Սողոմոն որդին իւր տեղը բա-  
զաւոր դրաւ։

Հ. Դաւիթի ենաց վելջի զործն ինչ եղաւ։

Պ. Տեսնելով որ մայը մօտեցնը է, զիսաւոր  
պաշտօնատէրներն ու զօրավարները կանչեց,  
յորդորեց զանոնք որ Աստուծոյ պատուիրան-

Ները պահեն, եւ հնազանդին սիրով իւր Սո-  
ղոմոն որդառյն. նմա ալ ապսպրեց որ Աս-  
տուծոյ ճանապարհէն դուրս չելլէ եւ փառա-  
ւոր տաճար մը կանգնէ Աստուծոյ, որոյ համար  
ինքը շատ նիւր պատրաստեր էր: Եւ քառա-  
սուն տարի թագաւորութիւն ընելէն վերջը  
մեռաւ. (1004):

Հ. Դաւրի Սաղմոսն ինչ է:

Պ. Դաւիր մարզարէն շատ մը Սաղմոս կամ  
երգ շինած է, որ զանազան աղօթքներ, զրդ-  
ջական իմաստներ ու Քրիստոսի վրայ գուշա-  
կութիւններ են: Այն սաղմոսաց մեջ վսեմ կեր-  
պով կնկարագրէ նաև Աստուծոյ մեծութիւնը,  
գործքը, արդարութիւնը, ողորմութիւնն ու  
անհուն բարիքը:

---

### ԴԱՍ ԻՌ.

Թագաւորութիւն Սողոմոնի. — Շինուրիւն  
տաճարին. — Գրուածք Սողոմոնի:

---

Հ. Սողոմոն ինչ կերպով սկսաւ թագաւորել:

Պ. Նախ հօրը քշնամիքը պատժեց, յետոյ  
մեծահանդէս զոհ մը մատուցանելով՝ ամեն  
քանէ աւելի իմաստութիւն խնդրեց յԱստուծոյ:

Հ. Ինչով երեւցաւ Սոդոմոնի իմաստութիւնը:  
Պ. Երկու կանայք տղու մը համար առջեւը  
դատաստանի ելան, երկուքն եւս կըսէին թէ  
տղայն իրենցն է:

Սոդոմոն հրամայեց որ տղայն երկու կը-  
տոր ընեն՝ ու մեկ կտորը մեկուն՝ միասը մե-  
կալին տան: Այն կինն որ տղուն մայրը չէր՝  
հաւանեցաւ դատաստանին. քայց բուն մօրը  
սիրտը կտրտեցաւ. աւելի ուզեց որ զաւակն ողջ  
մնայ եւ միւսին տրուի՛ քան թէ նորա մահը  
տեսնէ: Անով յայտնի եղաւ. որ ինքն է տղուն  
ճշմարիտ մայրը: Սոդոմոն անոր տուաւ որ-  
դին, եւ միասը պատժեց:

Հ. Սոդոմոն Բնջ մեծ շինութիւններ ըրաւ:

Պ. Հօրը ապսպրած երուսաղեմայ մեծա-  
գործ տաճարը շինեց: Երկու հարիւր լիսուն  
հազար գործաւորի չափ վրան աշխատեցան,  
եւ եօթը տարուան մեջ հազիւ կարող եղան  
լմընցընել: Տաճարին նաւակատիքը մեծ հան-  
դիսով կատարեց Սոդոմոն՝ քսանուերկու հա-  
զար եզ եւ հարիւր քսան հազար ոչխար Աս-  
տուծոյ զոհելով:

Հ. Սոդոմոնի իշխանութիւնը որչափ եր:

Պ. Սոդոմոնի իշխանութիւնը կտարածուեր  
ոչ միայն Խորայելացւոց այլ եւ բոլոր այն տէ-  
րութեանց վրայ՝ որ արեւելքէն մինչեւ Եփրատ,

եւ նարաւէն մինչեւ Եգիպտոս կհասնէին։ Տիւրոսի Քիրամ թագաւորին աղջիկն իրեն կին առաւ, եւ իւր նաևերը հեռաւոր տեղեր կերպային վաճառաշահութեան։ Իւր համբաւը այնչափ մեծցա՛ որ Արարիոյ վերի կողմերէն զինքը տեսնելու եկաւ Սարայ թագուհին։

Հ. Սոդոմոնի փառքը ինչո՞վ պակսեցաւ։

Պ. Հարստութիւնն ու զուարձութիւնները Սոդոմոնի սիրտը բուլացուցին։ ծերութեանը ժամանակ առաջ օտարազգի կուապաշտ կանայք որ իւր խելքը կուապաշտութեան եւ իրենց համար պայտատներ շինելու դարձուցին։ Ծանր ծանր տուրքերով ժողովուրդը նեղեց, եւ իւր փառքը շատ մքնցուց։

Հ. Սոդոմոն ինչ զրքեր շարադրեց։

Պ. Ժողովողի եւ Առակաց զրքերը։ Իմաստուրիւն եւ երգ երգոց։ Առաջնոյն մեջ մարդկային մեծութեան ունայնութեանը վրայ կխօսի. երկրորդին մեջ գերահանճար իմաստուրիւն խրատներ կուտայ։ Իմաստուրիւն զիրքը Աստուծոյ նախախնամութեան, իմաստուրիւն եւ արդարութեանը վրայ կխօսի. իսկ երգ երգոցը խորհրդաւոր բանաստեղծուրիւն մի է։

## ԴԱՍ ԻԹ.

Առողջամ, և Յերողամ:

Հ. Սողոմոնին ով յաջորդեց :

Պ. Անդրանիկ որդին Ռոբովամ . սա չուզեց քերեւցընել հօրը ժողովրդեան վրայ դրած ծանըր տուրքերը , անոր համար տասը ցեղերն իրմէ ապստամբեցան , Յերորովամ անունով իշխան մը իրենց քագաւոր դրին , եւ այնպէս հաստատուեցաւ հսրայելի քագաւորութիւնը :

Հ. Որո՞նք հաւատարիմ մնացին Ռոբովամայ:

Պ. Յուղայի եւ Բենիամինի ցեղերը , յորոց Յուղայի քագաւորութիւնը ձեւացաւ . (962):

Հ. Յերորովամ ինչպէս քագաւորեց :

Պ. Նախ Սիւքեմն ըրաւ իրեն մայրաքաղաքը . անկեց Թերսա փոխադրեց արոոր , եւ հոն կեցան իւր յաջորդքը մինչեւ Սամարիոյ շինուիլը . եւ որպէսզի իւր հպատակները Երուսաղէմ չերքան զԱստուած պաշտելու , քագաւորութեանը երկու ծայրը մեկմէկ ոսկի հորք կանգնել տուաւ , մեկը Յերեկ եւ միւսը Դան , եւ հրաման հանեց որ ժողովուրդը նոցա Երկրպագութիւն ընէ եւ զանոնք պաշտէ :

Հ. Յերոբովամայ կռապաշտութիւնը ինչպէս  
պատժուեցաւ :

Պ. Աստուծոյ կողմանէ մարզարէ մը եկաւ  
ու գուշակեց նորա գիխուն զայու չարիքը :  
Յերոբովամ ձեռքն երկնցուց բարկութեամբ հը-  
րամայեց որ բռնեն զնա . բայց ձեռքը չոր-  
ցաւ, եւ սեղանը կործանեցաւ : Սարսափե-  
ցաւ Յերոբովամ, մարզարէին աղօթքը խնդրեց,  
որով եւ բժշկուեցաւ, բայց չար ճանապար-  
հեն ետ չկեցաւ :

Հ. Սոյոմոնի քազաւորութեանը երկու քաժ-  
նուիը ինչ վնաս ունեցաւ :

Պ. Երկու քազաւորութիւնները անդադար  
իրարու դէմ պատերազմնցան, քազաւորնե-  
րուն ալ շատը անկարգ մարդիկ լինելով  
զԱստուած մոռցան, կուռք պաշտեցին, եւ  
այնպէս Հրեայք իրենց ձեռքով քազաւորու-  
թեանը եւ ազգին կործանմանը պատճառ եղան:

## ԳԼՈՒԽ Ե.

ԹԱԳԱՀՈՐՔ ԻՍԲԱՑԵԼԻ .

## ԴԱՍ Լ.

Յաջորդք Յերոբովամայ . — Աքաար . — Յե-  
զաքէլ . — Եղիա Մարգարէ :

Հ. Յերոբովամայ յաջորդները ոչք եղան :

Պ. Յերոբովամայ յաջորդեց որդին Նարատ.  
Բաասա զօրապետը Նարատը սպաննեց ու տե-  
ղըն անցաւ , եւ քսանըցորս տարի թագաւո-  
րելէն ետքը տէրուրինը իւր Էլա որդոյն  
քողուց : Զամբրի զօրապետը Էլան սպաննեց  
ու տեղն անցաւ , բայց ուր օր հազիւ թագա-  
ւորեց , վասնզի Ամբի զօրապետը իրեն դէմ  
ելաւ , եւ Զամբրի նորա ձեռքը չիյնալու հա-  
մար՝ պալատին կըակ տուաւ ու ինքն ալ մէ-  
ջը այրեցաւ :

Հ. Ամբի ինչ նշանաւոր գործ ըրաւ :

Պ. Խորայելի քազաւորութեան արոռը Սամարիա փախադրեց (907):

Հ. Ամբիին ովկ յաջորդեց :

Պ. Աքաար որդին, եւ սորա քազաւորութեան ժամանակը երեւցաւ Եղիա մարգարէն :

Հ. Աքաար ինչո՞ւ թշնամացաւ Եղիային :

Պ. Եղիայէն յանդիմանուելուն համար : Աքաար իւր ամբարշտութեամբը Աստուծոյ եւ մարդկան ատելի լինելով, Եղիան գուշակեց իրեն որ երեք տարի ոչ անձրեւ պիտի զայ' եւ ոչ ցող պիտի իշնայ . ուստի եւ սաստիկ սով Եղիա :

Հ. Աքաարէն ինչպէս ազատեցաւ Եղիա :

Պ. Գնաց անապատը հեղեղատի մը քով քնակեցաւ, ուր ագռաւք օրն երկու անգամ իրեն կերակուր կը երեկին : Բայց երբոր հեղեղատը չորցաւ, Աստուած հրամայեց որ Սիդոնացոց Սարեփրա քաղաքն երթայ :

Հ. Սարեփրա քաղաքին մեջ ինչ ըրաւ Եղիա :

Պ. Քաղաքը մտնելու վրայ եր երբոր ադքատ այրիի մը հաղիպեցաւ եւ անկէց կերակուր ուզեց . եւ որովհետեւ նա տունը միայն քիչ մը իւղ եւ ալիսր ունէր, հետը գնաց, եւ օրինելովք ալնչափ քազմացոց զանոնք որ

մինչեւ սովին ետքը բաւեցան։ Ժամանակէ մը յետոյ այրուոյն որդին մեռաւ, եւ Եղիա անոր յարութիւն տռաւաւ։

Հ. Եղիա Բնջ ըրաւ Բահադու քուրմերուն։

Պ. Սամարիա դառնալէն վերջը՝ Աստուծոյ գօրութիւնը ամենուն յայտնեց, Բահադու քուրմերուն խարեւորիւնը դուրս հանեց եւ մեջերնէն չորս հարիւր յիսուն հոգի մեռցընել տռաւաւ։ յետոյ աղօքքով յորդ անձրեւ իշեցուց եւ զովացուց զերկիր որ երկար ժամանակէ իմեր չորցեր ցամքեր էր։

Հ. Բահադու քուրմերը ջարդելուն համար Բնջ հալածանք քաշեց Եղիա։

Պ. Աքաարու Յեզարէլ կնոջը հրամանաւը հալածուելով՝ անապատի մը մեջ քառասուն օր եւ քառասուն զիշեր պտըտեցաւ, եւ Աստուծոյ նեշտակը հրաշքով կկերակրէր զնա։

Հ. Այն անապատէն մար զնաց Եղիա։

Պ. Քորեր լեռը, ուր երեւեցաւ նմա Աստուծ եւ պատուիրեց որ իրեն աշակերտ ընտրէ Եղիսէն, եւ Դամասկոս երբայ Ազայէլը Ասորոց քազառը օծէ, եւ Յեռ գօրապետը Խըրայելի քազառը։

---

## ԴԱՍ ԼԱ.

Եղիա Երկինք կվերանայ : — Եղիսէ մարգարէ : — Ցեռ :

—

Հ. Եղիա ինչ սպառնացաւ. Աքաարու :

Պ. Աքաար Յեզարելի խորհրդովք Նաբովք անունով անմեղ մարդը մեռուցեր նորա այզին յափշտակեր էր : Եղիա զնաց ըստ նոցա քէ քիչ ժամանակէ շունք Աքաարու արիւնը պիտի լափեն, ինչպէս որ Նաբովքինը լափեր էին, և Յեզարելի դիակը պիտի ուտեն :

Հ. Եղիա ինչ կերպով Երկինք վերացաւ :

Պ. Շատ հաշքներ զործելէն յետոյ՝ նրեղէն կառօք Երկինք վերացաւ իւր Եղիսէ աշակերտին աջքին առջեւը, եւ անոր յիշատակ քողուց իւր մաշկեակը :

Հ. Եղիսէի գլխաւոր հաջքները որոնք են :

Պ. Ա. Եղիայի մաշկեկովը Յորդանան գետին զարնելով՝ զրելը Երկու քաժնեց ու դիմացն անցաւ :

բ. Երիքովի աղբիւրին վնասակար ջուրը  
թժկեց լաւացուց՝ մէջը քիչ մը աղ նետելով։

գ. Աղքատ այրիի մը ունեցած սակաւ իսոր  
այնչափ շատցուց որ լեցնելու աման չգտաւ։

դ. Ասորւոց նեկման իշխանին բորոտու-  
րիւնը թժկեց՝ հրամայելով որ Յորդանանին  
մէջ եօրն անգամ լուացուի։

ե. Սոմնացի կնոջ մեռած որդուոյն յարու-  
րիւն տուաւ։

Զ. Եղիսէն ծաղրող տղաքն ինչպէս պատժեց։

Պ. Բերէլ քաղաքին մօտ շատ մը տղայք  
« կունտ զլուխ » կանչելով ծաղը ըրին զԵղիսէն  
մարգարէն ուզելով հասկցընել նոցա եւ ծը-  
նողացը թէ Աստուծոյ պաշտօնէին եղած նա-  
խատինքը Աստուծոյ կերրայ, անիծեց տղաքը,  
եւ շուտ մը անտառէն երկու արջ ելան, եւ  
այն տղոցմէ քառասունուերկուքը մեռուցին։

Հ. Ի՞նչպէս մեռաւ Աքաար։

Պ. Աքաար Ասորւոց պատերազմին ժամա-  
նակն վիրաւորեցաւ, եւ մեռաւ կառքին մէջ,  
եւ շները եկան կառքին մէջ լցուած արիւնը  
լափեցին, ինչպէս զուշակեր եր եղիա։

Ճ. Աքաարու ով յաջորդեց։

Պ. Առաջ Աքոզիա եւ յետոյ Յովրամ որդի-  
քը, առանց հօրերնուն ճամբէն ետ կենալու։

Հ. Յովրամայ տեղ ով քազաւորեց:

Պ. Եղիային պէս Եղիսէին ալ հրամայեց Աստուած՝ որ երբայ Յովրամայ Յեռ. գօրապետը քազաւոր Խօրայելի օձէ, եւ նա կատարեց :

Հ. Եղիային Յեզարելի վրա ըրած մարզարեռարիւնն ինչպէս կատարեցաւ :

Պ. Յեռ Աքաաբին քոյոր որդիքը ջարդեց, յետոյ Յեզարելն ալ պատուհանն վար նետել տուաւ, որ ձիոց ոտքին տակը կոխկըռոտուեցաւ, եւ մարմինը շները կերան (876) :

Հ. Յեռ իւր քազաւորութեանն ատենը որ անկապրութիւնն ուզեց վերցընել Խօրայելի մէջէն:

Պ. Բահադ կուռքին պաշտօնը :

Հ. Ի՞նչ կողմանէ մեղաղբելի է Յեռ:

Պ. Այս կողմանէ որ չվերուց Յերոքովամայ կանգնել տուած ոսկի հորբերը, որք ժողովը ընդեան զԱստուած մոռնալուն եւ կռապաշտուքիւն ընելուն զլիսաւոր պատճառ էին :

## ԴԱՍ ԼԲ.

Յովինան մարգարէ . — Յեռայ և Յերտու-  
վանու յաջորդները . — Սաղմանասար , և  
կործանումն բացաւորութեանն Խրայելի :

Հ. Աստուած ինչ հրամայեց Յովնանու :

Պ. Հրամայեց որ երթայ Նինուկացիքը յոր-  
դորէ յապաշխարութիւն :

Հ. Յովնան կատարեց Աստուծոյ հրամանը :

Պ. Ազ. Փոխանակ Նինուկ զնալու՝ նառ մը-  
տաւ . որ Թարսիս երթայ . բայց ծովուն վրայ  
յանկարծ փորորիկ ելաւ . եւ այնչափ սաստ-  
կացաւ . որ նաւավարք վիճակ ձգեցին՝ հաս-  
կընալու թէ որու յանցանքին համար եր այն  
փորձանքը : Վիճակը Յովնանու ելաւ , զինքը  
ծովը ձգեցին եւ ծովը հանդարտեցաւ :

Հ. Յովնան մեջ ինչ եղաւ :

Պ. Կետ շուռած խոշոր ձկներէն մեկը զինքը  
կլլեց , եւ երեք օրէն ետքը տարաւ . ծովեզեր-  
քը ձգեց :

Հ. Յովնան կետին փորեն որ ելաւ՝ թնջ ըրաւ։

Պ. Աստուծոյ հրամանին հնազանդելով գընաց Նինուկ, քարոզեց որ երե Նինուելացիք երեք օրուան մէջ չապաշխարեն, քաղաքնին պիտի կործանի. նոքա ալ դարձի եկան, եւ ազատեցան այն պատուհասեն (817) :

Հ. Յեռայ յաջորդները ո՞յք եղան։

Պ. Նախ յաջորդեց որդին Յովաքազ, որոյ քազաւորութեանը ժամանակ Խորայելացիք Ասորւոց Ազայէլ քազաւորին իշխանութեան տակ ընկան։ Նորա որդւոյն ժամանակը Եղիսէ մարգարեն մեռաւ։ Յերոբովամ Բ Ասորւոց յաղթեց, եւ տերութեան յափշտակուած սահմանները նորեն ձեռք ձգեց։

Հ. Յերոբովամէ ետքը ով քազաւորեց։

Պ. Զաքարիա. վեց ամիսն Սելլում զինքն սպաննեց. ամսէ մը ետքն ալ Մանայեմ մեռուց Սելլուամը, եւ քոնութեամբ Խորայելացիքը կառավարեց (766)։

Հ. Մանայեմի ով յաջորդեց։

Պ. Իւր որդին Փակեայ որ երկու տարի հազիւ քազաւորեց, վասնզի Փակէկ զօրավարը զինքը սպաննեց ու տեղն անցաւ (752)։

Հ. Փակէկի օրն թնջ պատահեցաւ։

Պ. Ասորեստանեայց Թաղդաբիադասար քա-


գաւորն Եկա. Հրեաստան, շատ տեղերու տիրեց եւ շատ մարդ զերի տարաւ հետն Ասորեստան :

Հ. Ի՞նչպէս վերջացաւ Խրայելի քազառուրուրիւնը :

Պ. Ովսեեն Փակէէ քազառը սպաննելով՝ տեղն անցեր էր. Ասորեստանեայց Սաղմանասար քազառըն Եկա., Սամարիան առան կործանեց, բնակչաց մէկ մասը ջարդեց, եւ մնացածը քազառին հետ զերի տարաւ ինինուկ : Եւ այսպէս վերջացաւ Խրայելի քազառուրուրիւնը՝ Քրիստոս 712 տարի յառաջ, 244 տարի տեսելին ետքը :

Հ. Սամարացիք ո՞ւր էին :

Պ. Սամարիոյ Երկիրը նորէն շենցընելու համար Սաղմանասար դրկեց հոն այլեւայլ ազգեր, որ ճշմարիտ աստուածապաշտուրեան հետ խառնեցին նաև. շատ մը կուապաշտական արարողուրիւններ, եւ սոքա ըսուեցան Սամարացիք որ մինչեւ հիմա կան :



## ԴԱՍ ԼԳ.

*Պատմութիւն Տովբիրայ :*

Հ. Տովբիր ով էր :

Պ. Սաղմանասարին Նինուկ զերի տարած Հրեից մէկն էր Նեփրադիմի ցեղէն, եւ քարեպաշտուրեամբը անուանի էր, ինչպէս նաեւ, իւր կինն Աննա, եւ որդին Տովբիա :

Հ. Սաղմանասար Տովբիրայ հետ Բնչպէս էր :

Պ. Պալատին մէջ պաշտօնի հասուց զինքը, եւ հրաման տուաւ անոր ամէն տեղ երբալու համարձակ :

Հ. Տովբիր Բնչպէս իշխանութիւն ըրաւ :

Պ. Իւր ազգակիցներուն օգուտն ուզելով՝ զանոնք կքաջալերէր, բարի խրատներ կուտար նոցա եւ կօգնէր :

Հ. Սենեքերիմայ ժամանակը Բնչ ըրաւ :

Պ. Սենեքերիմ Խորայելացւոց նեղութիւն կուտար . Տովբիր կնայէր որ նոցա բշուառութիւնը թերեւցընէ, եւ քազաւորին մեռցընել տուած Խորայելացիքը կքաղէր :

Հ. Ի՞նչ դժբաղղութիւն ունեցաւ Տովքիր :

Պ. Օք մը մեռել թաղեկն ետեւ յոզնած տուն որ դարձաւ, որովհետեւ ըստ օրինաց լուացուելու եւ այնպէս տունը մտնելու չափ վրան կարողութիւն չէր մնացած, իոն գաւիրը կը նաև պատին տուաւ քնացաւ։ Վերէն ճըն-ճղուկները աջքին վրայ ծրտեցին ու երկու աչքը մեկն կուրացաւ։

Հ. Տովքիր այն ժամանակը ինչ ըրաւ։

Պ. Տովքիր շատ աղքատանալով՝ մտածեց որ Տուրիա որդին դըկէ ու Գարայէկ անունով մեկ բարեկամին փոխ տուած ստակն առնու ըերեւ։

Հ. Աստուած որո՞ն ձեռքով Տովքիրայ օգնեց։

Պ. Ռափայէկ նրեշտակին ձեռքովը. երրոր որդւոյն ապսպրեց որ իրեն ճամբու ընկեր մը զտնէ, Ռափայէկ նրեշտակը մարդկային կերպարանօք ինքզինքը առաջարկեց, եւ Տուրիային հետ ճամբայ եւան։

Հ. Հրեշտակը ինչ օգնութիւն ըրաւ Տուրիայի։

Պ. Տուրիան ոտուքները Տիգրիս գետին մեջ լուանալու ժամանակը՝ ահազին ձուկ մը ցատքեց վրան. հրեշտակին նրամանովը բռնեց այն ձուկը, ու լեղին հանեց պահեց։

Հ. Հրեշտակն ուր տարաւ զՏուրիա։

Պ. Եկրատան քաղաքը՝ Տովքիրայ Հռազդուկ անունով ազգականին տունը։

Հ. Հոազուելի տունը ինչ ըրաւ Տուրիա :

Պ. Հրեշտակին խորհրդովք Հոազուելի Սար-  
րա աղջիկը իրեն կին առաւ, յետոյ հրեշտա-  
կին ձեռքովն առաւ նաեւ Գարայելին քովի  
ստակը եւ տուն դարձաւ :

Հ. Տովբիրայ աջքն ինչպէս բացուեցաւ :

Պ. Տուն որ նասաւ Տուրիա, հրեշտակին  
խօսքովք ձկան լեղին հանեց' հօր աջքին քսեց.  
իսկոյն Տովբիրայ աջուրները բացուեցան, եւ  
ամենքը մեկտեղ փառք տուին Աստուծոյ :

Հ. Տովբիր եւ իւր որդին ինչպէս շնորհա-  
կալ եղան հրեշտակին :

Պ. Աղաջեցին որ թերած հարստութեան կե-  
սը իրեն առնու. բայց հրեշտակը ջընդունե-  
ցաւ. յորդոքեց զիրենք որ Աստուծոյ փառք  
տան որ պատճառ է ամենայն բարութեանց,  
եւ ինքն աներեւոյք եղաւ. այն ժամանակ ի-  
մացան հայրն ու որդին որ Աստուծոյ հրեշ-  
տակն էր :

Հ. Տովբիր ինչպէս անցուց իւր օրերը :

Պ. Հարիսր տարիեն աւելի ապրեցաւ՝ միշտ  
երկիւդած լինելով յԱստուծոյ եւ բարերար առ  
մարդիկ: Իւր քոռունքն ալ իրեն պէս սիրելի  
եղան Աստուծոյ եւ մարդկան :

Հ. Տովքիթ մեռնելէն յառաջ ինչ ըրաւ :

Պ. Երբոր տեսաւ որ մահը մօտեցեր է, կանչեց իւր Տուքիա որդին եւ բոռունքն ու ըսաւ . « Ծառայեցէք Աստուծոյ բոլորով սըրտիւ . եւ ջանացէք նորա հաճոյքը կատարել : Բարիք ընելէն եւ ողորմութիւն տալէն մի դադրիք . զԱստուած երբէք մտքերնեղ մի հանէք , եւ փառք տուէք Աստուծոյ : »

---

### ԹԱԳԱԽՈՐՔ ՅՈՒՂԱՅ .

---

### ԴԱՍ ԼԻ.

Մորովամ , եւ իւր յաջորդները . — Գողողիւ եւ Յովաս :

---

Հ. Մորովամ որոնն եղաւ հարկատու :

Պ. Սողոմոնի որդին Մորովամ Եգիպտաց Սովակիմ քազակորէն յաղըռնեցաւ , եւ հարկատու եղաւ նմա (962) :

Հ. Արիա եւ Ասա քազակորքն ինչ ըրին :

Պ. Արիա Խօրայելի Յերորովամ քազակորին յաղեց (946) :

Ասա Եթովպացւոց Զարեն բազաւորին հետ պատերազմեցաւ եւ փառաւոր յաղըռերին մը ըրաւ (944) :

Հ. Յովսափատ ինչ բարի գործք ըրաւ :

Պ. Յովսափատ բազաւորութեանը ամէն կողմը Ղետացիներ եւ օրինաց վարդապետներ դրկեց որ ժողովուրդը կրթեն եւ աստուածապաշտութիւնը ծաղկեցընեն : Մովարացւոց եւ Ամոնացւոց յաղըն ու տերութեանը սահմաններէն զանոնք հալածեց (904) :

Հ. Յովսափատ ինչ պատճառաւ յանդիմանութիւն լսեց մարգարէէն :

Պ. Վասնզի Խորայելի Աքաաք բազաւորին օգներ էր, եւ նորա Գողողիա (կամ Աքաղիա) դուստրը իւր Յովքամ որդւոյն կին առեր էր :

Հ. Յովքամայ անգրութիւնն ինչ էր :

Պ. Խոր Գողողիա կնոջը խօսքովը բոլոր իւր Եղբարքը մեռուց, եւ կոոց սեղաններ կանգնեց (880) :

Հ. Ե՞նչպէս պատժուեցաւ Յովքամ :

Պ. Փղշտացիք եւ Աքաբացիք եկան Երկիրն ոտնակոխ ըրին, ընտանիքը գերի տարին, եւ միայն կրտսեր որդին Աքոզիա քովը մնաց :

Հ. Աքոզիա ինչպէս ըրաւ բազաւորութիւնք :

Պ. Թազաւորելուն պէս (877) Գողողիա մօ-

ըը չար խրատին հետեւելով՝ Աքաարայ որդույն Յովրամայ հետ դաշինք դրաւ եւ մէկտեղ Ասորաց դէմ պատերազմի գնացին, բայց Յէռ երկուքն աչ սպաննեց :

Հ. Աքողիայէն ետքը Գողողիա ինչ ըրաւ :

Պ. Յուղայի երկրին մէջ մինակ քազառոքելու համար բոլոր որդիքն ու արքայազուն իշխանքը մեոցընել տուաւ . տաճարը կողոպտեց ու Բահադու սեղանները զարդարեց (876) :

Հ. Աքողիայի որդաց մէջէն ով ազատեցաւ Գողողիայի ձեռքէն :

Պ. Ամենէն պզտիկը Յովաս, Յովիդայէ քահանայապետին ձեռքովը, որոյ կինը Յովսարէք Յովասու հօրաքոյըն էր :

Հ. Ա՞ր մեծցաւ եւ ինչպէս քազառոքեց :

Պ. Տաճարը մեծցաւ . եւ երրոր եօրը տարեկան եղաւ, Յովիդայէն ուզելով իւր հայրենիքը Գողողիայի բռնուրենէն ազատել՝ Ղեւտացիները ժողովեց տաճարը, Յովասը օծեց եւ իրեւ օրինաւոր քազառը ընդունելի ըրաւ գնա ամենուն (870) :

Հ. Գողողիա երրոր լսեց Յովասին քազառը օծուիլը՝ ինչ ըրաւ :

Պ. Վազեց տաճարը գնաց որ Յովասը մեռցընել տայ . բայց Յովիդայէ քահանայապետին հրամանաւն ինքը սպաննուեցաւ :

Հ. Յովաս ինչպէս ըրաւ քազաւորութիւնը :

Պ. Յովիդայէ քահանայապետին ողջութեան ժամանակը աստուածապաշտութեամբ եւ արդարութեամբ կառավարեց. նորա մահուանէն ետքը մոռցաւ զԱստուած, կռապաշտութիւնը հաստատեց, եւ իւր քարերար քահանայապետին որդւոյն Զաքարիային յանդիմանութեանցը չդիմանալով՝ զինքը մեռցընել տուաւ :

Հ. Յովաս ինչպէս պատժուեցաւ :

Պ. Ասորաց Ազայէլ քազաւորն եկաւ մինչեւ Երուսաղեմայ մօտեցաւ, եւ Յովաս հագիւ կրցաւ տաճարին զանձերը տալով՝ ետ դարձընել զինքը: Թազաւորութեանը քառասներորդ տարին ալ իւր մարդիկը զինքը զարկին մեռուցին:

---

### ԴԱՍ ԼԵ.

Ամասիա և իւր յաջորդները. — Եղեկիա  
և Եսայի մարդարեն:

---

Հ. Յովասին ով յաջորդեց :

Պ. Որդին Ամասիա (854), որ Եղովմայեցաց յաղթեց. քայց Խրայելի Յովաս քազաւորին դէմ ալ պատերազմ հրատարակելով

յաղբուեցաւ եւ նորա ձեռքն ընկաւ, որ յաղբանակաւ զինքը երռասաղէմ տարաւ :

Հ. Ամասիային ովկ յաջորդեց :

Պ. Որդին Ոգիա կամ Ազարիա (803). սա քանի որ Զաքարիա մարգարէին խրատներուն մքատիկ ըրաւ եւ Աստուծոյ ճամբէն չխոտորեցաւ՝ շատ յաջողութիւններ ունեցաւ, երկրագործութիւնը ծաղկեցուց եւ տէրութիւնը գօրացուց :

Հ. Ի՞նչ յանցանք կպատմուի Ոգիային վրայ:

Պ. Թագաւորական իշխանութեանը զոհ չըլինելով երբոր քահանայական իշխանութիւն եւս բանեցընել ուզեց, եւ անձամբ բուրվառը ձեռքն առաւ որ խունկ մատուցանէ սեղանոյն, տաճարին մէջ Աստուծոյ աներեւոյք գօրութեամբը զարնուեցաւ, բոլոր մարմինք բորոտեցաւ, եւ քստ օրինաց Հրէից հարկադրեցաւ թագաւորութիւնը իւր որդուոյն Յովարամու բողուլ եւ ուրիշներէն հեռու զնալ ընակիլ (752):

Հ. Յովարամ ինչպէս թագաւորեց :

Պ. Յովարամ քստ օրինաց Տեառն ըրաւ թագաւորութիւնը, եւ խաղաղութեամբ կառավարեց երկիրը :

Հ. Յովարամին ովկ յաջորդեց :

Պ. Իւր որդին Աքազ (737), որ ճշմարտին Աստուծոյ տաճարը փակեց, եւ ինքզինքը

կուապաշտուրեան տուաւ, Բահաղ եւ Մողոք  
կուռքերուն սեղաններ կանգնեց եւ մինչեւ  
իւր որդիքը կուոց զոհեց :

Հ. Աստուած թնջ պատիժ տուաւ. Աքազու :

Պ. Թոյլ տուաւ որ թշնամիքը զօրանան եւ  
զան բոլոր երկիրը գերեն գերփեն . զինքն ալ  
Ասորեստանի Թագդարփաղասար թագաւորը  
բռնեց եւ գերի տարաւ իԴամասկոս:

Հ. Աքազին ով յաջորդեց :

Պ. Որդին Եզեկիա, որ բարեպաշտուրեամ-  
բը երեւելի եղաւ. (723) :

Հ. Ի՞նչպէս թագաւորեց :

Պ. Հօրը արոռն Ելլելուն պէս՝ ջանաց նորա  
ամպարշտուրեան գործքերը մոռցընել տալ.  
կուռքերն ու սեղանները կործանեց, Աստու-  
ծոյ տաճարը բացաւ, եւ հրաւիրեց Խրայելա-  
ցիքն որ զան հանդիսով Զատիկը տօնեն յԵ-  
րուսաղեմ : Այսպէս Աստուծով զօրացաւ, եւ  
չուզեց վճարել իւր հօրը Ասորեստանեաց  
խոստացած ամօքապարտ տուրքը :

Հ. Ո՞ր մարզարէն օգնեց Եզեկիալի :

Պ. Եսայի մարզարէն, որ Ազիայի թագա-  
ւորուրեան ժամանակն սկսեր եր մարզարէա-  
նալ . բայց Հրեայք այնչափ ապականեր եին  
որ նորա խրատուցն ու յորդորանացը մտիկ  
ընող չկար :

Հ. Եզեկիա ինչ կերպով առողջացաւ:

Պ. Երբոք վտանգաւոր նիւանդութենէ մը  
բոնուած՝ մեռնեյու կպատրաստուեր, Եսայի  
մարզարէն Աստուծոյ կողմանէ իմացուց իրեն  
որ տասնընդինգ տարի ալ աւելի պիտի ապրի:

### ԴԱՍ 12.

Եզեկիա և Սենեքերիմ. — Մանուկ. —  
Յուղիր. — Ամուս. — Յովսիս:

Հ. Եզեկիա առողջանալէն ետքը ինչ վր-  
տանգի մէջ ընկաւ:

Պ. Ասորեստանի Սենեքերիմ քազաւորը ա-  
նոր տուրք չտալուն համար՝ եկաւ Երկիրն  
աւերեց ու Երուսաղէմը պաշարեց. Աստու-  
ծոյ դէմ հայիոյանքներով լեցուն նամակ մըն  
ալ զրեց դրկեց. Եզեկիայի եւ կիրամայէր որ  
հնազանդի իրեն :

Հ. Եզեկիա անոր դէմ ինչ ըրաւ:

Պ. Եսայի մարզարէն քաջակերուած՝ Երու-  
սաղէմն ամրացուց, աղօրիւք եւ պահօք Աս-  
տուծոյ դիմեց եւ իրմէ օգնութիւն խնդրեց :

Հ. Ի՞նչ հրաշքով ազատեցաւ Եղեկիա :

Պ. Աստուծոյ հրեշտակը Սսենեքերիմի բանակն հարիւր ուրսուն հազար հոգի ջարդեց, որով ստիպուեցաւ հայիոյից թագաւորը իւր մայրաքաղաքը Նինուէ դառնալու, ուր երկու որդիքը քիչ ժամանակն զինքը մեռուցին ու Հայաստան փախան :

Հ. Եղեկիայի յաջորդը ո՞վ եղաւ :

Պ. Ռըդին Մանասէ, որ հօրը կործանած կուռքերը նորէն կանգնեց, Երուսաղէմը արեամբ լեցուց, և Եսայի մարգարէն զինքը յանդիմանելուն համար՝ մեջքէն սղոցել տալով մեռուց (694) :

Հ. Աստուած Յնչ պատիօ տուաւ Մանասէի :

Պ. Երեն դէմ հանեց Ասորեստանի Ասորդան թագաւորը, որ զինքը Բաբելոն զերի տարաւ :

Հ. Մանասէի վերջն Յնչպէս եղաւ :

Պ. Երբոք ըրած անօրէնուքեպնցը վրայ զըդցաց, ապաշխարեց, թողութիւն գտաւ մեղացը, նորէն դարձաւ Երուսաղէմ, կանգնած կուռքերը ջարդեց, և մինչեւ մահը աստուածապաշտ մնաց :

Հ. Ո՞վ եր Յուղիք :

Պ. Բետիդուա քաղաքին մեջ այրի կին մի էր :

Հ. Իւր հայրենիքն ինչպէս ազատեց :

Պ. Ասորդանի յաջորդ Նարուքողոնոսոր Ա. քազառը ուզեց Հրեատանը նուաճել եւ շատ գօրօք իւր Հողոփեռնես գօրավարը ղըրկեց, որ եկաւ Բետիդուա քաղաքը պաշարեց: Յուղիք իւր ազգին ազատութեան սիրովը վառուած՝ մահը աչքն առաւ, զնաց Հողոփեռնեսի վրանը, անոր զինովցած քնացած ժամանակը զլուխը կտրեց, եւ Հրկից ազգը անոր զազանութենէն ազատեց :

Հ. Մանասէի ով յաջորդեց :

Պ. Ամոն որդին, որ հօրը պէս շատ անօրէնութիւններ ըրաւ, բայց ետքը նորա պէս չապաշխարեց. Աստուած ալ քոյլ տուաւ որ ծառանները զինքը պահննեն ու տեղը իւր ուրը տարեկան Յովսիա որդին քազաւորեցընեն (639) :

Հ. Յովսիա ինչ երեսելի գործ ըրաւ:

Պ. Ամենայն կերպով ջանաց որ կոապաշտուրիւնը ջնջէ եւ ժողովուրդը աստուած-պաշտութեան ճամբան մտցընէ: Թագաւորութեանը ուրեատասներորդ տարին Զատկի տօնը մեծ հանդիսով կատարեց յերուսաղէմ:

Հ. Յովսիա ինչն մեռաւ:

Պ. Եզիպտացւոց Փարաւոն Նեքաւով քազաւորին ղէմ ըրած պատերազմին մէջ նետէ մը զարնուեցաւ մեռաւ Յովսիա :

## ԴԱՍ ԼԵ.

Յովաքազ . — Երեմիա մարգարէ . — Առաջին և երկրորդ գնրուրիւն Հրեից իբարիշնե . — Յեքոնիա :

Հ. Յովսիայի հվ յաջորդեց :

Պ. Որդին Յովաքազ, որ չուզեց Եղիպտացոց Նեքաւով քազաւորին հարկ տալ, եւ նա եկաւ քոնեց զինքը, Եղիպտոս գերի տարաւ, անոր տեղը՝ Յովսիայի Երկրորդ որդին Եղիակիմը քազաւոր նստեցուց յերուսաղէմ, եւ անունը փոխեց Յովակիմ դրաւ. (608) :

Հ. Այն ժամանակները Հրեայք բնչպէս եին:

Պ. Յոլորովին աւրուած, ու կոապաշտութեան անոր ամէն տեսակ անկարգութեանց ետեսէ եին:

Հ. Ո՞ր մարգարէն այն ժամանակը աստուածաշաղտութիւն կքարոզէր Հրեից :

Պ. Երեմիա, որ Յովսիայի ոքազաւորութեան վերջերն սկսեր եր մարգարէանալ. Երբեմն

Երուսաղեմի դռները կեցած, եւ Երբեմն տաճարին դուռը կայնած կյորդորէք ժողովուրդը յապաշխարութիւն՝ գլխուն գալու չարիքն ու գերութիւնը զուշակելով։ Բայց խատասիրտ ու ապերախտ ժողովուրդը ուզեց զինքը սպաննել։ Յովակիմ քաջաւորն ալ Երեմիայի մարգարեկութեանց զիրքը կրակ նետեց այրեց։ Աստուծոյ հրամանաւը նորէն զըել տուաւ զայն մարգարէն իւր Բարուք աշակերտին, վրան ալ ուրիշ մարգարեկութիւններ աւելցուց։

Հ. Երեմիայի մարգարեկութիւնները ինչպէս կատարեցան։

Պ. Երբոր Հրեայք իրենց չար ճանապարհին ջղարձան, Աստուած վրանին դրկեց Ասորեստաննեայց քաջաւորը Նարուքողոնոսոր Բ, որ Յովակիմը քռնեց, շղրայակապ Բարիլոն տարաւ, եւ ժամանակէ մը ետքը՝ իւր քովը պատանդ պանելով Դանիկը եւ ուրիշ հրեայ իշխանազունք՝ Երուսաղէմ դրկեց զՅովակիմ։ Հրեից այս առաջին գերութենէն իթարիլոն՝ կսկսի Երեմիա մարգարէին զուշակած եօրանասնամեայ գերութիւնը։

Հ. Յովակիմ Երուսաղեմի մէջ ինչ ըրաւ։

Պ. Նարուքողոնոսորայ հարկ տալ չուզեց։ Եւ նա եկաւ տիրեց Երուսաղեմի. զինքը մեռուց, անբաղ Երուսաղեմայ դրան առջեւը

նետել տուաւ, եւ տեղը նորա Յեքոնիա կամ  
Յովակիմ Բ թագաւոր դրաւ :

Հ. Յեքոնիա Բ ինչ վերջ ունեցաւ :

Պ. Հօրը պէս ինքն եւս Նարուքողոնոսորայ  
բարկուրիւնը շարժեց, որ Եկաւ, Երուսաղէմը  
պաշարեց առաւ, տեղը նորա հօրեղբայրը  
Սեղեկիան թագաւոր դրաւ, եւ զինքը զերի  
տարաւ իմարիլոն . հետք տարաւ նաև նորա  
մայրն ու տասը հազար իշխանաւոր մարդիկ :  
Եւ այս ըստեցաւ Երկրորդ գերաւրիւն Հրեից  
իմարիլոն (597) :

---

### ԴԱՍ ԼԲ.

Կործանումն թագաւորութեան Յուղայ . —

Դաւիկէլ եւ Երեք Մանկումք :

---

Հ. Յուղայի տէրուրիւնն ինչպէս վերջացաւ :

Պ. Երբոր Հրեայք Երեմիայի խրատներուն  
մտիկ չըրին ու իրենց ամպարշտուրեան  
համբէն չղարձան, Սեղեկիա թագաւորն ալ  
Նարուքողոնոսորին խոստացած հաւատար-  
մուրիւնը չպահեց, Եկաւ նա Երուսաղէմը Երկու

տարի պաշարեց առաւ, եւ բնակիչներուն սոսկալի ջարդտուառ։ Այսպէս ահա 587-ին Յուղայի քագաւորութիւնը վերջացաւ, որ 375 տարի տեսեր եր Շորովամի քագաւորութենէն իվեր։

Հ. Նաքուքողոնոսոր ինչպէս վարուեցաւ Սեղեկիային հետ։

Պ. Անզքարար նորա երկու որդիքն աչքին առջեւը մեռցունել տուաւ. յետոյ նրամայեց որ իրեն ալ աչուքները փորեն եւ շղրայակապ Բարիլոն տանին, հետն ալ շատ մը իւր հրպատակներէն։ Այս Հրէից ևրորդ ու վերջին գերութիւնն եղաւ իմարիլոն, ուր եօրանասուն տարի կեցան։ Հոն մեռաւ նաեւ Սեղեկիա։

Հ. Երուսաղեմի կործանման ժամանակը Եթեմիա մարգարէն ինչ ըրւաւ։

Պ. Վկայութեան խորանը, տապանակը եւ ուրիշ սրբազան անօրները փախուց. ողջակիզաց սեղանոյն վրայի նուիրական կրակը չոր ու խորունկ ջրհորի մը մեջ պահել տուաւ, եւ յետոյ ինքն ալ Հրէից հետ Եզիպտոս գնաց։

Հ. Նաքուքողոնոսոր Բարիլոնի մեջ ինչպէս վարուեցաւ Հրէից հետ։

Պ. Նոցա իշխանազուն պատանիներէն խելացիներն ընտրեց իւր պալատը առաւ, եւ Քաղեացւոց գիտութիւնները սովորեցնել տըւաւ նոցա։

Հ. Անոնց մեջ ոյք եղան անուանի:

Պ. Անանիա, Ազարիա եւ Միսայէլ, եւ  
մանաւանդ Դանիէլ, որոյ իմաստութիւնը 12  
տարեկան եղած ժամանակին յայտնուեցաւ:

Հ. Շուշանայ պատմութիւնն ինչ է:

Պ. Երկու անօգամ ծերեր սուտ ամբաստա-  
նութիւն ըրեր էին Յովակիմ անունով հարուստ  
մարդու. մը կնոջը Շուշանայ վրայ. Երբոր  
զինքը մեռցընելու կտանէին՝ Դանիէլ պատա-  
նին Շուշանայ անմեղութիւնն ու այն երկու  
ծերոց չարութիւնն ու ստութիւնը դուրս հա-  
նեց, Շուշանն ազատեց, եւ տեղը զանոնք  
սպաննել տուաւ:

Հ. Ինչով երեւցաւ Դանիէլիմարզարեւութիւնը:

Պ. Նարուքողոնոսորայ տեսած երազները  
մեկնեց, որով եւ մեծամեծ պաշտօններու հասաւ:

Հ. Նարուքողոնոսորայ հպարտութիւնը ինչ  
կերպով պատժուեցաւ:

Պ. Աստուած խելքը առաւ գլխին. որով ա-  
նասնոյ կերպարանք մտաւ, անտառը զնաց  
քնակեցաւ, եւ մարմնոյն մազն ու ըղունգ-  
ները անասնոց մազին եւ քոչնոց մազիլնե-  
րուն պէս ամեցան:

Հ. Ո՞րքափ ժամանակ մնաց այնպէս:

Պ. Եօթը տարի . յետոյ խելքը զլուխն եկաւ, Աստուծոյ առջեւն ընկաւ խոնարհեցաւ, նորէն իւր բազաւորութեան արողը նստաւ :

Հ. Գանիելի ընկերները Անանիա , Ազարիա եւ Միսայէլ ինչո՞ւ համար հնոցի մէջ ձգուեցան:

Պ. Վասնզի ջուզեցին ոչ Բէլ կուռքին եւ ոչ Նարուքողոնոսորայ արձանին երկրպագութիւն ընել, եւ իբրեւ Աստուած պաշտել :

Հ. Հնոցին մէջ բնչպէս ողջ մնացին նոքա:

Պ. Աստուծոյ հրեշտակը քովերնեն կրակը հեռացուց, եւ զովարար քամի հանելով շըրողուց որ այրին. ուստի զԱստուած փառարանելով դուրս ելան հնոցին :

ԴԱՍ ԼԹ.

Դանիկի մարգարեռիւնները . — Դարեհ ,  
Մար և Կիւրոս . — Մարգարէք :

—

Հ. Իլմարովդաքի թագաւորութեան ժամանակը ինչ ըրաւ Դանիկի :

Պ. Շատ անգամ նելայ քուրմերուն խարդախութիւնը դուրս հանեց , Բարեկացւոց պաշտած վիշապը մեռուց , եւ թագաւորին հրամանին դեմ հրապարակաւ պաշտեց զԱստուած :

Հ. Ի՞նչ վտանգի մեջ ընկաւ Դանիկի իւրաստուածպաշտութեամբը :

Պ. Երկու անգամ առիւծներու գուրը ձգուեցաւ , բայց Աստուծով ողջ մնաց (562) :

Հ. Բաղտասարայ տեսիլքն ինչ էր :

Պ. Մեծ խնջոյք մը ըրած ժամանակը տեսաւ յանկարծ Բաղտասար թագաւորը՝ որ ձեռք մը ելաւ ու այս բառերը զբեց պատին վրայ , Մանէ , Թեկեղ , Փարէս :

Հ. Դանիկի ինչ մեկնութիւն տուաւ անոր :

Պ. Ասաց որ թագաւորութիւնը քիչ ժամանակէն պիտի բաժնուի եւ Մարաց ու Պարսից ձեռքը պիտի իյնայ :

Հ. Դանիելի գուշակուրիւնը թնջպէս ելաւ :

Պ. Բարեկացիք Բաղտասարը սպաննեցին (538), տեղը նստաւ Դարեն Մար կամ Կիաքսար, եւ նորա տեղն անցաւ յետոյ Կիւրոս՝ Պարսից բազառորը :

Հ. Դարեն Մարին օրն թնջ ըրաւ Դանիել :

Պ. Հրեից եօրանասնամեայ զերութեան վերջանալը գուշակեց, եւ 490 տարիէն Մեսիայի, այսինքն Քրիստոսի Տեառն մերոյ զալուստք մարգարեացաւ, որ ճիշդ կատարուեցաւ :

Հ. Ուրիշ թնջ մարգարէ կար իբարիլոն :

Պ. Եզեկիէլ մարգարէն, որ Հրեից աստուածպաշտութիւն կսովորեցընէր, ու կյորդորէր զիրենք Աստուծոյ ողորմութեանն ապաւինելու:

Հ. Ո՞յք են մեծ մարգարէները :

Պ. Եսայի, Երեմիա, Դանիել եւ Եզեկիէլ. որ շատ բան գրելով մեծ մարգարէք կըսուին:

Հ. Ուրիշ թնջ մարգարէք կային :

Պ. Ուրիշ տասուերկու մարգարէք ալ կային, որ միւսերուն չափ բան գրած չէինելով՝ իսկըն մարգարէք կոչուած են :

Հ. Անունները թնջ են :

Պ. Ավսեէ, Ամովս, Միքիա, Յովէլ, Արդիու, Նաւում, Յովնան, Ամրակում, Սոփոնիա, Անգեոս, Զաքարիա, Մաղաքիա:



ԲԱԲԵԼՈՆԻ ԳԵՐՈՒԹԵԱՆ ՎԵՐՋԱՆԱԼԻԿՆ ՄԻԱ-  
ՉԵԼ ՔՐԻՍՏՈՍԻ ԾՆՈՒՆԴԻ.

( 536—1 Քրիստ. առաջ ).

### ԴԱՍ Խ.

Կիւրոս. — Զօրաբարեկ և Եզր. — Եսրեր:

Հ. Բարելոնի գերութիւնն ինչպէս վերջացաւ :  
Պ. Պարսից Կիւրոս թագաւորը Դարեհ Մար  
թագաւորին յաջորդելով, հրաման տուաւ Հը-  
րեից իրենց երկիրը ղառնալու . մասնաւոք  
կերպով պաշտպանեց զիրենք, եւ հրամայեց  
որ Երուսաղեմայ տաճարեն բերուած ուկիէ  
ու արծարէ անօթները ետ դարձուին (536) :

Հ. Հրեաստան դարձողներուն գլուխ ո՞յք  
եղան :

Պ. Նախ Զօրաբարեկ իշխանը, եւ յետոյ Եզր՝  
վարդապետ օղինաց :

Հ. Հրեայք Երուսաղեմի մեջ Բնչ ըրին:

Պ. Խսկոյն նոր տաճար մը հիմնեցին: Սա-  
մարացիք ալ ուզեցին մասնակից լինել շի-  
նուածոյն. Երբոր իրենց խնդիրքը մերժուե-  
ցաւ, ամէն զանք ըրին որ տաճարին շինու-  
թիւնն ուշանայ, այնպէս որ հազիւ աւարտե-  
ցաւ. Պարսից Դարեհ Վշտասպեան քազաւորին  
ժամանակը:

Հ. Բարեկոն մնացած Հրեայք՝ Կիւրոսի մա-  
նուանեն ետքը Բնչ ըրին:

Պ. Մէջերնեն ոմանք Երուսաղեմ դարձան  
եւ Աստուծոյ պաշտօնը նորոգեցին՝ քահա-  
նայապետաց առաջնորդութեամբը. բայց եւ  
շատերը Բարեկոն մնացին. ասոնցմէ Լին նաև  
Եսթեր եւ Մուրդքէ:

Հ. Ո՞յք էին Եսթեր ու Մուրդքէ:

Պ. Եսթեր՝ Բենիամինի ցեղեն որը աղջիկ  
մի եր՝ իւր հօրեղօրը Մուրդքէի ձեռքովը  
մեծցած, եւ Արտաշէս Երկալնաձեռն քազա-  
ւորին կին եղած: Մուրդքէ պալատականաց  
մէկն եր, եւ քազաւորին կենացը դէմ եղած  
դաւաճանութիւնը դուրս հաներ ու զինքը մա-  
նուանէ ազատեր եր:

Հ. Հրեայք այն ժամանակները Բնչ Վտան-  
գի մեջ ընկան:

Պ. Համան իշխանը, որ քազաւորին Երկրոր-

զըն էր, սաստիկ հպարտութեամբ ուզեց որ  
ամեն մարդ զինքը տեսած ժամանակն առ-  
ջեր իյնայ երկրպագութիւն ընէ: Մուրդքէ  
այս բանս յանձն ջառաւ, եւ Համան վրան  
կատղած՝ միտքը դրաւ որ Պարսկաստան մը-  
նացած բոլոր Հրեաները ջարդէ, եւ այս վախ-  
ճանաւ Արտաշեսէն հրովարտակ առաւ:

Հ. Այն վտանգին մէջ Մուրդքէ Բնչ ըրաւ:

Պ. Շուտ մը իմացուց Եսրերայ, եւ պա-  
տուիրեց որ Երբայ բազաւորին՝ Հրեից Փըր-  
կուրեանը համար աղաջէ: Օրէնք կար որ ա-  
ռանց կանչուելու բազաւորին առջեւն ելլողը  
կսպաննուէր. սակայն Եսրեր իւր ազգը մա-  
հուանէ ազատելու համար՝ մահը աչքն առաւ:

Հ. Եսրեր Բնչպէս Ելաւ բազաւորին առջեւը:

Պ. Արտաշէս Երբ տեսաւ որ Եսրեր առանց  
իր կանչելուն առջեւը կելլէ, բարկացաւ.  
Եսրեր մարեցաւ ընկաւ, եւ Աստուած Արտա-  
շեսին սիրտը կակդցուց. գաւազանն երկըն-  
ցուց բազաւորը Եսրերին վրայ, եւ անոր խընդ-  
րովը խոստացաւ որ Երկրորդ օրն իրեն սեղանի  
Երբայ, հետը բերելովնաեւ Համան իշխանը:

Հ. Մուրդքէն Բնչ պատուոյ հասաւ:

Պ. Մինչդեռ Համան Մուրդքէին կախաղան  
կպատրաստէր, հրաման ընդունեցաւ բազա-  
ւորէն որ Մուրդքէն իւր ձին հեծցունէ, բա-

գաւորական հազուստներ հազցունէ անոր, եւ  
ծիռան սանձէն բռնած՝ բոլոր քաղաքը պտըտ-  
ցընէ, քարոզ կարդալով թէ ։ Այսպէս կփառա-  
ւորէ բազաւորը իւր հաւատարիմ իշխան։

Հ. Ինչո՞ւ փառաւորեց Արտաշէս զՄուրիլք։

Պ. Գիշեր մը քունը չտանելով՝ բազաւո-  
րութեանը յիշատակարանները թերել կարդալ  
տուաւ, եւ Մուրդքէին յայտնած դաւաճա-  
նութեանը պատմութիւնը հանդիպեցաւ։ Հար-  
ցուց թէ նորա այն տիրասիրութեանն ինչ փո-  
խարէն եղեր է. եւ երբ իմացաւ որ անվարձ  
մնացեր է, շուտ մը Համանը կանչել տուաւ,  
հարցուց թէ ինչպէս կարող է բազաւորը լաւ  
մը պատուել իւր հաւատարիմ ապաստառը։  
Ամբարտանանն Համան մտածելով թէ իրմէ  
զատ զնվ պիտի ուզէ բազաւորը այնպէս պա-  
տուել, Մուրդքէին տրուած պատուոյն կերպը  
սովորեցուց, եւ խայտառակ եղաւ։

Հ. Հրեայք ինչպէս մահուանէ ազատեցան։

Պ. Երբոր Արտաշէս Եսրերայ հացկերու-  
թի զնաց, Եսրեր յայտնեց Համանայ չար  
դիտաւորութիւնը, եւ Հրեից ազատութիւնն իր-  
մէ խնդրեց։ Խսկոյն խնդիրքը կատարեց բա-  
զաւորը, եւ Համանին Մուրդքէի համար  
պատրաստած կախաղանէն Համանը կախել  
տուաւ։

### ԴԱՍ ԽԱ.

ՆԵԿԻ. — Հրեից ու Սամարացոց առելութեան սաստկանալը. — Մեծին Աղեքսանդրի Երուսաղեմ երթալը:

Հ. Արտաշես Հրեից Բնջ Չնորհք ըրաւ:

Պ. Իւր Նեկմի մատուուակին աղաջանքովը հրաման տուաւ որ Երուսաղեմի պարիսպը շինեն (454):

Հ. Երուսաղեմի պարսպին շինուքեան ատենը՝ Նեկմի եւ Հրեայք Բնջ արգելք ունեցան:

Պ. Սահմանակից ժողովուրդներն ու իշխանները վրանին վազեցին եւ չէին բողոք որ շինեն, այնպէս որ հարկադրեցան Հրեայք մեկ ձեռքով շինելու եւ միւսովը պատերազմելու:

Հ. Քրիստոսէ հինգիարիւր տարի առաջ Հրեից վիճակն Բնջպէս էր:

Պ. Կիւրոսի յաջորդներուն օրերն ալ ամեն կողմանէ հանգիստ էին Հրեայք. միայն եր-

թեմն քահանայապետութիւնն համար մէջերնին կոփու կլինէր, եւ Սամարացիք վրանին նախանձելով՝ զանոնք անհանգիստ կընէին։ Իրենց կառավարութիւնը տեսակ մը հասարակապետութիւն էր, որոյ զլուխը քահանայապետն էր, եւ նորա օգնական էին ծերք ժողովրդեան, որք եւ ծերակոյշտ կասուէին։ Այս քահանայապետաց իշխանութիւնը տեսեց մինչեւ Մեծին Աղեքսանդրի Երուսաղեմ եկած ժամանակը։

Հ. Հրեից եւ Սամարացւոց մէջ եղած ատելութիւնն ինչով սաստկացաւ։

Պ. Յաղջոս քահանայապետին եղբայրը Մանասէ՛ օրինաց դկմ Սամարիոյ Սանաքաղատ կուսակալին աղջիկն իրեն կին առաւ։ Հրեից ծերակոյշտը հրամայեց որ արձակէ կինը, Մանասէ յանձն չառաւ, եւ իւր օրինակին հետեւելով Սամարացի աղջիկ առած Հրեայքը զլուխը ժողոված՝ զնաց Սամարիա ընակեցաւ, իւր աներոջ օգնութեամբը Գարիգին լերան վրայ տաճար մը կանգնեց՝ Երուսաղեմայ տաճարին հակառակ, եւ Սամարացւոց քահանայապետ եղաւ։

Հ. Ինչո՞ւ համար Մեծն Աղեքսանդր Երուսաղեմի վրայ արշաւեց։

Պ. Աղեքսանդր Պարսից Գարեն Կողոմանոս

բազաւորին յաղթելէն ետքը՝ հրաման դրկեց  
Հրեից որ իրեն հնազանդին. երբ նոքա յան-  
ձըն չառին, Երուսաղեմի վրայ արշաւեց՝  
միաքը դնելով որ հիմնայատակ կործանէ  
այն քաղաքը :

Ա. Աղեքսանդրի բարկուրիւնն ինչպէս իջաւ:  
Պ. Յաղղոս քահանայապետը՝ քահանայա-  
պետական հազուստներովը նորա առջենն ե-  
լաւ։ Աղեքսանդր իսկոյն ձիէն վար իջաւ խո-  
նարհեցաւ, տաճարը մտաւ, Աստուծոյ զոհ  
մատոյց. Եւ քահանայապետը սուրբ գիրքը  
բացաւ ցուցուց նմա, յորում հարիւրաւոր  
տարիներով առաջ իւր աշխարհակալուրիւն-  
ները զուշակուած էին մարզարէից ձեռքովը։  
Զարմացաւ ուրախացաւ Աղեքսանդր, եւ  
Հրեից մեծամեծ բարիք ըրաւ։



‘ԻԱՍ ԽԲ’.

Պաղոմեկոս Սոտեր . — Պաղոմեկոս Եղբայրասէր, որ եւ Աստուածաշունչը քարզմանել կուտայ . — Պաղոմեկոս Փիդիպատոր :

Հ. Աղեքսանդրի մահուանեն ետքը Հրեայք Բնչ վիճակ ունեցան :

Պ. Առաջ Մակեդոնացւոց հարկատու եղան. յետոյ Եգիպտոսի քազաւորը Պաղոմեկոս Սոտեր զիրենք նուանեց, եւ հարիւր քսան հազար Հրեայ իւր երկիրը տարաւ :

Հ. Պաղոմեկոս Եղբայրասէր քազաւորը Հրեաց ինտ Բնչպէս վարուեցաւ :

Պ. Սոտերի որդին Պաղոմեկոս Եղբայրասէր՝ լաւ աշքով նայեցաւ վրանին, եւ ուզեց որ իւր զրատանը մէջ ունենայ աստուածաշնչին յունարէն քարզմանուրիւնը (275) :

Հ. Աստուածաշունչն ով քարզմանեց :

Պ. Եղիազար քահանայավետը եօթանասունուերկու ըաբունի որկեց յեգիպտոս, որ

բազաւորին հրամանաւը Փարոս կղզւոյն մէջ  
սուրբ գիրքը բարզմանեցին, եւ այն բարզ-  
մանուրիւնը կոչուեցաւ եօրաևասեից բարզ-  
մանուրիւն, ուստի բարզմանուած է նաև  
մեր հայերեն աստուածաշունչը :

Հ. Այն ժամանակները ինչ աղանդներ ե-  
լան Հրեից մէջ :

Պ. Մադաքիա մարզարեկին մահուանեն ետքը,  
որ Քրիստոսէ հինգնարիւր տարիի ջափ առաջ  
էր, չունեցան Հրեայք այնպիսի անձինք որ  
իրենց սրբութեամբն ու խրատներովը ազգին  
առաջնորդէին . ուստի նորեն իրենց հարցը  
հաւատքէն հեռացան ու այլ եւ այլ աղանդներ  
բաժնուեցան, որոց զիխաւորներն եին Փա-  
րիսեցւոցն ու Սաղուկեցւոցը :

Հ. Պտղոմէոս Փիլոպատոր կամ Հայրասէր  
ինչո՞ւ հալածեց Հրեաները :

Պ. Պտղոմէոս Փիլոպատոր Երուսաղեմի տա-  
ճարը մտաւ, Աստուծոյ զոհ մատոյց եւ ու-  
զեց հետաքրքրութեամբ Սրբուրիւն սրբոցն  
ալ տեսնել: Երբոր Սիմոն քահանայապետը  
դէմ կեցաւ, բարկացաւ Հրեից վրայ, սաստիկ  
հալածանք հանեց վրանին, եւ հրամայեց որ  
Աղեքսանդրիոյ հրապարակին մէջ եօրնիա-  
րիւր կատաղի փղերու ոտնակոխ լինին: Ո-

բոշեալ օրը փղերն արձակուեցան, բայց Աստուծոյ ողորմութեամբը՝ փոխանակ Հրեից՝ հանդիսատեսները ջաբակեցին :

Հ. Հրեայք ինչպէս մտան Ասորաց թագաւորներուն իշխանութեանը տակ :

Պ. Պաղոմէոս Փիլոպատորին մահուանէն ետքը՝ Ասորաց Անտիոքոս թագաւորը Պաղեստինու տիրեց (203), և նորա ժամանուկը փոքր մի հանզստացան Հրեաէք :

---

Գլուխ ԽՊ.

Ոնիա քահանայացեւ . — Հեղիոդորոս . — Յասոն . — Նահատակութիւնն եղիսզարու և եօրն եղբարց :

—

Հ. Ոնիա քահանայապետին ժամանակը ինչ նշանառը բան պատահեցաւ :

Պ. Մեծին Անտիոքոսի յաջորդը Սելեսկոս Փիլոպատոր՝ Սիմոն անունով փառասէր Հրեի մը յորդորանօքը, որ ոխերիմ թշնամի էր Ոնիա քահանայապետին, Երուսաղեմայ տաճարին զանձը յափշտակելու համար Հեղիո-

դորոս իշխանը դրկեց : Քահանայապետը շատ  
դեմ կեցաւ . և . Երբ Հեղիոդորոս քռնութեամբ  
ներս կմտնէր՝ Աստուծոյ կողմանէ ահազին  
ձիաւոր մը յանկարծ դիմացն եւաւ , զինքը  
գետինը զարկաւ . կոխսկուտեց , երկու հրեշտակ  
ալ չարաշար ծեծեցին . Եւ այնպէս կիսաման  
քողուցին զինքը՝ աներեւոյք եղան : Անիայի  
աղօքքովը առողջացաւ Հեղիոդորոս , և դար-  
ձաւ . Սեւեւկոսին պատմեց զիխուն եկած սոս-  
կալի փորձանքը :

Հ. Յասոն ինչպէս քահանայապետ եղաւ :

Պ. Ոնիային եղբայրը Յասոն՝ Ասորւոց Ան-  
տիոքոս Եպիփան քազաւորին ստակ կերցը-  
նելով՝ յափշտակեց քահանայապետութեան  
պաշտօնը առաքինի եղբօրը ձեռքէն :

Հ. Յասոնին ով յաջորդեց :

Պ. Հրէից վրայ դրուած տարեկան տուրքը  
վճարելու համար Յասոն Ասորւոց երկիրը  
յուղարկեր էր իսր Մենեղաւոս քարեկամը :  
Սա Անտիոքոս քազաւորին աւելի ստակ  
խոստանալով աջքը մտաւ , և քահանայա-  
պետութիւնը Յասոնին ձեռքէն առաւ : Այն  
պատճառաւ քաղաքական պատերազմ եղաւ  
Երուսաղեմայ մէջ , և Մենեղաւոսի հրամա-  
նաւը Ոնիան սպաննուեցաւ :

Հ. Յասոն ինչպէս նորէն քահանայապէտ եղաւ :

Պ. Անտիոքոս քազաւորին մահուան սուս լուրը հասնելուն պէս՝ նորա եւ Մենեղառսին թշնամիքը Յասոնը երուսաղէմ կանչեցին. Եւ նա զօրքով եկաւ, Մենեղառոսը վոճտեց ու քաղաքը սպանութեամբ լեցուց :

Հ. Անտիոքոս որ լսեց ինչ ըրաւ :

Պ. Անտիոքոս երրոր լսեց թէ Հրեայք իւր մահուանը լուրն առնելով այնչափ ուրախացեր են, շատ զօրօք գնաց մտաւ երուսաղէմ, տաճարը պղծեց, սրբազան անօրներն առաւ, քառասուն հազար Հրեայ մեռուց, եւ սաստիկ հայածեց զանոնք որ իրենց հարցը հաստիքը ուրանալ չէին ուզեր :

Հ. Այն հայածանաց համբերողներուն մէջ ով եղաւ անուանի :

Պ. Եղիազար ծերունին, որ Մովսեսի օրինաց վրայ ունեցած սէրը ցուցընելու եւ երիտասարդաց բարի օրինակ տալու համար՝ աւելի ուզեց մեռնիլ՝ քան թէ օրինաց արգելած խոզենիկն ուտելու պէս ընել, եւ քազաւորին կամքը կատարած համարուիլ (168) :

Հ. Ուրիշ որ նահատակներն անուանի եղան :

Պ. Շամունէ անունով աստուածասէր կինը,

որ իւր եօրը որդոցը նետ Անտիռքոսի առջեւը թերուեցաւ որ խոզենի ուստեն ու մահուանէ ազատին . բայց նոքա զԱստուած օրհելով՝ ետեւէ ետեւ սոսկալի տանջանքներով նահատակեցան :

ԻՇԽԱՆՈՒԹԻՒՆ ՄԱԿԱԲԱՑԵՑԻՈՑ .

ԴԱՍ ԽԴ.

Մատարիա քահանայ և հինգ որդիքը . — Յուղա Մակարէ . — Եմաւու և դրայր . — Յովիաննես Հիւրկանոս :

Հ. Մատարիա քահանային վրայ ինչ կը պատմուի :

Պ. Երուսաղեմայ մեջ եղած հակածանքէն հետու գտնուելուն համար՝ զնաց իւր ծնընդեան քաղաքը Մովկիիմ , նոն կոոց զոհ մատուցող հրեայ մը սպաննեց եւ յեռ քաշուեցաւ . անկից Հրեաները Անտիռքոսի դեմ հանեց պատերազմի , զոր առաջ տարին իւր հինգ որդիքը (166) :

Հ. Մատարեայ որդւոց անունները ինչ են :  
Պ. Յովհաննէս, Շմաւոն, Եղիազար, Յուղա  
եւ, Յովնաթան :

Հ. Ամենէն աւելի քաջն ու անուանին որն է :  
Պ. Յուղա Մակարէ, որոյ անունովը միւ-  
սերն ալ Մակարայեցիք ասուեցան :

Հ. Ի՞նչգլխաւոր քաջութիւններ ըրաւ. Յուղա :  
Պ. Ասորւոց Անտիոքոս Եպիփան եւ Ան-  
տիոքոս Եւպատոր քաջաւորաց, եւ սակաւա-  
ւոր զօրօք քաջմազունդ քանակներ ունեցող  
զօրաւորաց յաղբեց, որպիսի էին Ապողոնիոս  
եւ Լիսիաս :

Հ. ԶՀրեայս հալածանքէ ազատելէն ետքը  
ինչ ըրաւ. Յուղա Մակարէ :  
Պ. Երուսաղէմ գնաց, տաճարը սրբեց, եւ  
կործանած տեղերը նորոգեց :

Հ. Ուրիշ ինչ մեծ յաղբութիւն ըրաւ Յուղա :  
Պ. Դեմետրիոս Սոտեր քաջաւորը մեծ քա-  
նակով Նիկանովը զօրավարը Յուղայի վրայ  
դրկեց. իսկ նա սակաարիւ զօրքով յաղբեց  
անոր, մեռուց զինքը, եւ նորա զԱստուած  
հայրոյած լեզուն հրամայեց կտրել ու քոչնոց  
կերակուր տալ :

Հ. Յուղա ինչպէս մեռաւ : Առնորով :

Պ. Դեմետր Նիկանովը յաղթուիլն ու մեռնիլը լսելով՝ Հրեից վրայ շատ զօրք դրկեց : Յուղա Մակարէ ուրհարիւր հոգաով մեծամեծ քաջութիւններ ըրաւ . բայց վերջապէս քշնամեաց անհամար քաջմութենէն պաշարուած՝ զարնուեցաւ ու մեռաւ :

Հ. Յուղա Մակարէին ով յաջորդեց :

Պ. Յովնարան Եղբայրը, որ Ասորւոց Բաքիդ զօրավարին յաղթեց, եւ ստիպեց զինքը հաշտութիւն ընելու . յետոյ Հռոմ դեսպաններ յուղարկեց, եւ Յուղա Մակարէին մէռնելէն քիչ մը առաջ Հռովմայեցւոց հետ դրած դաշինքը նորոգեց :

Հ. Ի՞նչպէս մեռաւ Յովնարան :

Պ. Ասորւոց Անտիոքոս Բաղաս քազաւորին զօրավարն ու խնամակալը Տրիփոն՝ դաշինք դրաւ . Յովնարանի հետ, քարեկամութիւն կեղծելով՝ Պտղոմայիս քաղաքը տարաւ զինքն ու հոն սպաննել տուաւ . (144) :

Հ. Յովնարանին ով յաջորդեց եւ ինչ ըրաւ :

Պ. Յովնարանին յաջորդեց Եղբայրը Շմատոն . Երուսաղեմի միջնարերդէն հայածեց Ասորիները . ծովեզերեայ Յոպպէ քաղաքը զօրացուց մեծցուց, եւ իւր ազգը օտարաց իշխանութենէն բոլորովին ազատեց :

Հ. Պտղոմեոս հրեան հվ էր և ինչ ըրաւ :


Պ. Շմառոնի փեսան էր . իշխանութեան հաս-  
նելու համար՝ իւր աներն երկու տղոցմովը  
սպաննեց :

Հ. Վախճանին հասաւ . Պտղոմեոս :

Պ. Ոչ . վասնզի Շմառոնին իշխանութիւնը  
նորա երրորդ որդուոյն Յովհաննես Հիւրկա-  
նոսին տրուեցաւ , որ զլուխ եղաւ Ասմո-  
նեան ցեղին :

Հ. Յովհաննես Հիւրկանոս ինչ ըրաւ :

Պ. Սամարացւոց ձեռքէն Սիւքէմն առաւ ,  
Գարիզինի տաճարը կործաննեց , Եղոմայեցիքը  
նուաճնեց , եւ մեռնելու ատենն իշխանութիւնը  
իւր Արիստաքուղոս որդուոյն քողուց :



ԵՐԿՐՈՐԴ ԹԱԳԱԽՈՐԾՈՒԹԻՒՆ ՀՐԵՔՑ .

### ԴԱՍ ԽԵ .

Արիստաբուղոս՝ թագաւոր Հրեկից . — Յան-  
նենս , Աղեքասանդրա և Հիւրկանս թ . —  
Անտիգոնս :

Հ . Հրեկից երկրորդ թագաւորութիւնը նվ  
հաստատեց :

Պ . Արիստաբուղոս՝ Հիւրկանսի որդին , որ  
ինքզինքը թագաւոր Հրեկաստանի անուանեց :

Հ . Արիստաբուղոս ինչ անզբութիւն ըրաւ :

Պ . Եղբարքը թանտ դրաւ , եւ մեջերնեն  
Անտիգոնոսը սպաննեց՝ զոր ամենէն ալ աւե-  
լի կսիրէր . շուտով հասկըցաւ . ըրած ոճիրը ,  
եւ ցաւէն ու յօւսահատութենէն մեռաւ . (107) :

Հ. Յաննեոս ով էր եւ ինչպէս քազաւորեց :

Պ. Արիստարուղոսին ըանտ դրուած եղբարցը մեծն էր : Յաննեոս յաջողութեամբ Եզիպտացւոց ու Ասորիոց դէմ պատերազմեցաւ, քայց ժողովրդեան հետ քռնութեամբ վարուեցաւ : Եղբարցը մեկը սպաննեց՝ վրան նախանձելով, եւ վեց տարուան մէջ իւր նպատակներէն յիսունհազար հոգիէն աւելի ջարդեց : Քսանըեօրը տարի տեսեց իւր քազաւորութիւնը :

Հ. Յաննեոսի այրին Աղեքսանդրա ինչ ըրաւ :

Պ. Երկանը մահուանէն ետքը ինքը քազաւորեց, եւ միայն քահանայապետութիւնը իւր անդրանիկ որդւոյն Հիւրկանոս երկրորդին քողուց, որ մօրը մեռնելին ետեւ կրցաւ քազաւոր եւ միանգամմայն քահանայապետ լինել Հրկաստանի :

Հ. Հիւրկանոս երկրորդին ինչ պատահեցաւ :

Պ. Նդրայրը Արիստարուղոս զինքը արոռէն ձգեց . իսկ նա Հոռվմայեցւոց Պոմպէոս գօրավարին օգնութեամբը նորէն արոռը եղաւ, քայց քահանայապետի անուամբ միայն կառավարեց զՀրկաստան :

Հ. Ի՞նչ եղաւ Արիստարուղոս եւ իւր որդիքը :

Պ. Պոմպէոս Արիստարուղոսն ու երկու որդիքը Հոռվմ զերի դրկեց . քայց Հոռվմայեցւոց

հասարակապետութեան խոռվութիւններն ու  
քաղաքական պատերազմները վրայ գալով՝  
ժամանակ գտան փախան :

Հ. Անտիգոնոս Արեւելք որ դարձաւ՝ ինչ  
ըրաւ :


Պ. Պալրեւաց օգնութեամբը յաղթանակաւ  
եկաւ Երուսաղէմ մտաւ, եւ իւր հօրեղօրը  
Հիւրկանոսին քիրն ու ականջները կտրել  
տուաւ, որպէսզի նորէն քահանայապետու-  
թեան հասնելու կարող չլինի :

Հ. Ո՞վ եր Հերովդէս, եւ ինչպէս քազառը  
եղաւ Հրեատանի :

Պ. Եղոմայեցի եր ազգաւ, եւ Հոռվմայեցւոց  
աչքը մտնելով՝ Հրեից քազառորութիւնը ձեռք  
ձգեց, շատ արիւն քափեց, եւ բոլոր Մակա-  
րայեցւոց ցեղը ջնջեց :

Հ. Ինչով անուանի եղաւ Հերովդէսի քա-  
զառորութիւնը :

Պ. Ծննդեամբ Մեսիային, այսինքն Տեառն  
մերոյ Յիսուսի Քրիստոսի, որ եղաւ աշխար-  
հիս ստեղծմանէն 4963 տարի ետքը :



ա միմակդափնիուն հայութեավարտան  
ինչու բայ պահապահութեաւ մասնաւոց  
ու անուած օստամայութեաւ զիմնական  
առ անուած կայութեաւ անուած է անուած է

անուած առ անուած անուած է անուած  
անուած առ անուած անուած է անուած է  
անուած առ անուած անուած է անուած է  
անուած առ անուած անուած է անուած է  
անուած առ անուած անուած է անուած է

անուած առ անուած անուած է անուած է  
անուած առ անուած անուած է անուած է  
անուած առ անուած անուած է անուած է  
անուած առ անուած անուած է անուած է

անուած առ անուած անուած է անուած է  
անուած առ անուած անուած է անուած է  
անուած առ անուած անուած է անուած է  
անուած առ անուած անուած է անուած է  
անուած առ անուած անուած է անուած է

# ՊԱՏՄՈՒԹԻՒՆ

## ՆՈՐ ԿՏԱԿԱՐԱՆԻ.

---

Առաջին դար յետ Քրիստոսի (1—70.)

---

ԴԱՍ Ա.

Նոր Կտակարան. — Ծեռւեղ Յովիանենու.  
— Աւետումն սրբոյ Կուսին. — Ծեռւեղ  
Տեառն Յիսուսի:

Հ. Նոր Կտակարանին մեջ ինչ զբքեր կան:  
Պ. Մատթեոս, Մարկոս, Ղուկաս եւ Յովիաննես աւետարանցաց զրած չորս Աւետարանները, Գործք Առաքելոց, Պողոսի եւ միւս քանի մը առաքելոց թղթերը, եւ Յովիաննես աւետարանցին Յայտնութեան գիրքը:

Հ. Աւետարաններն ինչ կպատմեն :

Պ. Քրիստոսի Տեառն մերոյ կեանքը, վարդապետութիւնը, ըրած հրաշքները, չարչարանքը, մահը, յարութիւնն ու համբարձումը:

Հ. Գործք Առաքելոց ըսուած գրքին մեջ  
ինչ կպատմուի :

Պ. Քրիստոսի Եկեղեցւոյն ինչ կերպով հաստատուիլը առաքելոց ձեռքովը:

Հ. Առաքելոց բդիքերն ինչ են :

Պ. Առաքեալներուն առաջին հաւատացելոց  
տուած գրաւոր խրատներն են :

Հ. Յայտնութեան գիրքն ինչ է :

Պ. Յովիաննես աւետարանչին Միջերկրական ծովուն Պատմոս կղզւոյն մեջ տեսած  
մարգարեական տեսիլքն է :

Հ. Քրիստոսի ծննդենքն առաջ ինչ հրաշաւի գործ եղաւ :

Պ. Աստուած ուզելով մարդկային ազգիս  
փրկիչ որկել ու կատարել այն խոստումը՝  
զոր մեր նախածնողաց ըրեր եր, եւ մարգարեք շատ անզամ գուշակեր ու հաստատեր  
եին, Գարբիել նրելշտակը յուղարկեց Զաքարիա քահանային, մինչդեռ նա տաճարին մեջ  
քահանայական պաշտօն կկատարեր, եւ յայտնեց որ նորակինը Եղիսաբեկը որ ամույ ու տա-

թիքն առած էր, որդի պիտի ծնանի եւ անունը  
Յովիաննես պիտի դնէ, որ Մեսիայի ծննդեանը  
յառաջընթաց կարապետ պիտի լինի:

Հ. Ուրիշ ինչ աւետիս տռաւաւ Գաբրիէլ  
հրեշտակը :

Պ. Վեց ամիս ետքը Գալիլիայի նազարէք  
քաղաքին մէջ երևցաւ սրբոյ կուսին Մա-  
րիամու, եւ Աստուծոյ կողմանէ աւետիս տր-  
աւաւ անոր որ մայր պիտի լինի Մեսիային :

Հ. Ո՞ւր ծնաւ Քրիստոս փրկիչն մեր :

Պ. Փրկիչն մեր Քրիստոս ծնաւ Հրեաստա-  
նի Բերդենէմ քաղաքը ախոռի մը մէջ :

Հ. Ինչո՞ւ համար Քրիստոս Բերդենէմ քա-  
ղաքը ծնաւ :

Պ. Վասնգի նոյն օրերը Հռովմայեցւոց Օ-  
գոստոս կայսը Հրեաստանի բնակչաց քիւր  
զիտնալ ուզելով, ամէն մարդ ծնած քաղաքը  
կերթար՝ անունը զըել տալու. եւ որովհետեւ  
Մարիամու խոսեցեալը սուրբն Յովսէփ՝ Բեր-  
դենէմէն էր, սրբոյ կուսին հետ հոն գնաց որ  
անուննին զըել տայ. այն միջոցին ծնաւ  
սուրբ Կոյսը իւր Հոգուվ սրբով յղացած զա-  
ւակն ու անքանից մսուրի մը մէջ դրաւ :

Հ. Խնչալէս յայտնուեցաւ աշխարհի Աստուածորդոյն մարդկային մարմին առնուլն ու ծնանիլը:

Պ. Հրեշտակ մը Փրկչին ծնունդը աւետեց Բերդենեմի մօտ ոչխար արածող հովուաց . քազմութիւն հրեշտակաց ալ երկինքն երեւցաւ որ « Փառք իբարձունս Աստուծոյ, եւ յերկիր « խաղաղութիւն, իմարդիկ հաճութիւն » ասելով զԱստուած կփառաբանեին :

Հ. Հովիւներն ինչ ըրին :

Պ. Զարմացմամբ եւ ուրախութեամբ շուտ մը Բերդենեմ զնացին, եւ հրեշտակին ըսածին պէս զտան նորածին մանուկը Յիսուս՝ մսութիւնը մէջ պառկած, եւ երկրպագութիւն ըրին :

Հ. Ուրիշ ով եղաւ Քրիստոսի ծննդեանը Երկրպագուդ :

Պ. Նորա լուսափալլ աստղը արեւելք տեսնելով՝ հեռաւոր տեղերէ երեք մոզք կամ քազաւորք եկան, եւ ոսկի՝ կնորուկ եւ զմուռ ընծայելով՝ Երկրպագութիւն ըրին իրեն՝ իբրեւ նորածին քազաւորի Հրեկից :

առն սյցուցի առ լուս թօք մյժմառմառ ոք նացար յ—○— ույլ զուր զբառ : առոյ զի՞ չէ զգուն ըյմազմու առ միւս

ԳԱՍ Բ.

ԱՆՄԻԴ ՄԱՆԿՈՒՆԻՔ . — ՓԱՐԻՍԿԵԳԻՔ Եւ Սա-  
ԴՈՒԼԵԳԻՔ . — ՅԻՍՈՒՍԻ ՄԱՆԿՈՒՐԻՒՆԻՔ . — ՅՈՎ-  
ՀԱՆՆԻԿԱ ՄԼՐՈՒԻՔ . — ՄԼՐՈՒՐԻՒՆ ՅԻՍՈՒՍԻ :

Հ. Մոգերուն Երուսաղէմ զալովը ինչ վը-  
տանգ ծագեցաւ Յիսուսի :

Պ. Հերովդէս բազաւորը Երբոր լսեց մոգե-  
րէն թէ Հրէից նոր բազաւոր մը կամ մեսիան  
ծներ է, վախցաւ որ բազաւորուրիւնը ձեռ-  
քէն ջնանէ. հրաման տուաւ որ Բեթղեհեմի մէջ  
ու շրջակայքը գտնուող Երկու տարեկանէ  
վար եղած բոլոր տղայքը սպաննուին, յու-  
սալով որ անոնց հետ մեռնի նաև Յիսուս.  
Եւ այն ջարդը կոչուեցաւ Կոտորած անմեղ  
մանկան :

Հ. Այն կոտորածէն ինչպէս ազատեցաւ  
Յիսուս :

Պ. Հրեշտակ մը Երեւան սօրոյն Յովսեֆայ,  
եւ հրամայեց որ առնու Յիսուս մանուկն ու  
մայրը, երբայ Եղիպտոս, եւ նոն կեցաւ մին-  
չեւ Հերովդէսի մահիք; մաժգառառանոյ դայ բան

Հ. Հերովդեսի մահուանին ետքը ուր բնակեցան Յիսուսի ծնողքը :

Պ. Նազարէթ քաղաքը, և ամէն տարի Երուսաղէմ կերքային զատկի տօնը կատարելու:

Հ. Քրիստոսի ծննդեան ժամանակն ինչ աղանդներ կային Հրեից մէջ :

Պ. Գլխաւոր Երկու աղանդ. մէկը Փարիսեցոցը եւ. միւսը Սաղուկեցոց: Փարիսեցիք հպարտութեամբ լեցուած՝ խստակեցութիւն եւ նախանձայոյզ օրինապահութիւն կձեռացընէին. Սաղուկեցիք հոգուոյ անմահութիւնը կուրանային :

Հ. Յիսուսի տասուերկու տարեկան եղած ժամանակը ծնողքն ինչ վախ քաշեցին :

Պ. Յովսէփի եւ Մարիամ ըստ սովորութեան՝ զատկի տօնը կատարելու համար Երուսաղէմ Երքալով՝ հոն տարեր էին նաեւ զՅիսուս: Իդարձին զինքը հետերնին չգտնելով՝ կարծեցին թէ բարեկամաց հետ առջեւէն զնացեր է, զատ հոգ չըրին. բայց օրուան մը ճամբար ընելով Երբոր չգտան, նորէն Երուսաղէմ դարձան. Երեք օր ամէն տեղ փլնուելէն ետքը զնացին տաճարին մէջ զտան, որ վարդապետաց ու դպրաց հետ կլսուեր, եւ զամէնքը իւր իմաստութեանը վրայ կդարձացընէր:

Հ. Յիսոս մինչեւ երեսնամեայ հասակը Բնչպէս անցուց իւր կեանքը :

Պ. Նազարէր քաղաքին մէջ անշուք ու անձանօթ կեանք մը անցուց՝ հնագանդելով յամենալնի իւր ծնողացը ; ; ;

Հ. Քրիստոսի գալստեան աւետիսը ով տրամա մարդկանց : Վումնաննեալ Մկրտիք, անապատէն Եղան, Յորդանան գետին—եղերքն եկաւ, Հրեից ապաշխարութիւն քարոզեցի, եւ մէջերնէն մեծ մասը մկրտեց՝ Մեսիայի գալուն աւետիսը տալով նոցա :

Հ. Քրիստոս Տէրն մեր նրբ եւ Բնչպէս ըսկրուաւ, իւր քարոզութիւնը :

Պ. Երեսուն տարեկան որ Եղան, Եղան Նազարէրէն, Յովնաննէս Մկրտչէն մկրտուեցաւ խոնարհութեան օրինակ տալով մեզի :

Հ. Յիսոսի մկրտուած ժամանակը Բնչ ելրաշը Եղան :

Պ. Զրէն Ելեյու ժամանակը՝ երկնքէն Հոգին սուրբ աղաւնոյ կերպարանքով վրան իջաւ, եւ ձայն մը լսուեցաւ որ կասէր. « Դա է իմ սիրելի Որդիս : »

» մէ շնոր ցըմառնա քորդառան ու պայզը ոսուերն առցումը մահվէ Թ պայզը աղոմ լամբազդը. վրայ ոսպոյամ աջ

## ԴԱՍ Գ.

Յիսուս անապատ կրաշուի. — Առաքեալք.  
— Ինև երանուրիւնք. — Առաջին հրաշա-  
գործուրիւն Յիսուսի. — Քարոզուրիւնք  
Յիսուսի:

Հ. Քրիստոս Տէրն մեր մկրտուելէն ետքը  
Բնչ ըրաւ:

Պ. Քարոզուրիւն ընկյէն առաջ կամեցաւ  
պահօք եւ ապաշխարութեամբ պատրաստուիլ.  
ուստի զնաց անապատը՝ քառասուն օր ծոմ  
կեցաւ, եւ բոլլ տուաւ որ սատանան զինքը  
փորձէ, բայց յաղթեց փորձողին:

Հ. Անապատէն որ դարձաւ Բնչ ըրաւ Յիսուս:

Պ. Տասուերկու աշակերտ ընտրեց, եւ սո-  
քա առաքեալք ասուեցան, որ դրկուած  
կնշանակէ:

Հ. Առաքելոց անուանքը Բնչ են:

Պ. Սիմոն Պետրոս, եւ Անդրէաս՝ Եղբայր նո-  
րա. Յակոբոս՝ որդի Զեբեղեայ, նորա Եղբայրը

Յովինաննես, Փիլիպպոս, Բարբողիմես, Թովմաս, Մատթեոս, Յակոբոս Ալփեայ՝ Եղբայր այսինքն ազգական Ծիսուսի, Յուղա Յակոբեան՝ այսինքն Յակոբայ Ալփեան Եղբայրը, Սիմոն Կանանացի, եւ Յուղա Խոկարփովտացի:

Հ. Առաքելոց ընտրութենին Ետքը Բնչ ըրաւ Ծիսուս :

Պ. Զանոնք լեռ. մը տարաւ ու այն հրաշալի խրատները կամ ճառը խօսեցաւ նոցա՝ յորում ամփոփուած են Աւետարանին զիսաւոր Վարդապետութիւնները :

Հ. Այն խրատներուն մէջի ինն Երանութիւնքն ասաւ :

Պ. « Երանի աղքատաց նոզով, զի նոցա « և արքայութիւն Երկնից :

« Երանի սզաւորաց, զի նոքա մխիթար « քեսցին :

« Երանի նեզոց, զի նոքա ժառանգեսցեն « զերկիր :

« Երանի որ քաղցեալ եւ ծարաւի իցեն « արդարութեան, զի նոքա յագեսցին :

« Երանի ողորմածաց, զի նոքա ողոր « մուրիւն զտցեն :

« Երանի որ սուրբ են սրտիւք, զի նոքա « զԱստուած տեսցեն :

« Երանի խաղաղաբարաց, զի նոքա որ-  
\* դիք Աստուծոյ կոչեսցին :

« Երանի որ հայածեալ իցեն վասն ար-  
\* դարութեան, զի նոցա է արքայութիւն երկնից:

« Երանի է ձեզ յորժամ նախատիցեն ըզ-  
\* ձեզ եւ հայածիցեն, եւ ասիցեն զամենայն  
« բան չար զձենջ սուտ վասն իմ. ցնծացէք  
\* եւ ուրախ լերուք, զի վարձք ձեր բազում  
\* են յերկինս : »

Հ. Ցիսուսի առաջին նրաշքը որն եղաւ :

Պ. Իւր մօրը հիտ Կանա քաղաքը հարսանիք  
մը նրաւիրուած էր. զինին լմննայով՝ մօրը  
աղաջանօքը հասարակ ջուրը զինի դարձուց:

Հ. Քրիստոս Տէրն մեր ուր կընէր իւր քա-  
րոզութիւնը, եւ ինչ էին քարոզութեան զիսա-  
ւոր նիւրերը :

Պ. Ամեն անցած տեղերը, քաղաքաց ու  
գիւղից մէջ, տաճարն ու ժողովրդանոցները  
կաւետարանէր Մեսիային զայռատը՝ որուն  
այնչափ փափաքանօք սպասեր էին նահա-  
պետք եւ մարզարէք. ամեն տեղ կքարոզէր  
ապաշխարութիւն, քողութիւն մեղաց, արհա-  
մարհութիւն ընչից եւ անձնութացութիւն. եւ  
իւր միակ զբաղմունքն էր խրատ տալ Հրեից  
զանազան օրինակներով ու առակներով :

## ԴԱՍ Դ.

Անառակ որդւոյն առակը . — Քարոզութեանը երկրորդ տարին Յիսուսի ըրածները :

Հ. Անառակ որդւոյն առակը նրն է :

Պ. Հայր մը երկու որդի ուներ . կրտսերը ուզեց առաւ իւր ժառանգութեան մասն ու զնաց հեռու . աշխարհք՝ անկարգութեամբ կերաւ վատնեց , եւ այնչափ աղքատացաւ որ ստիպուեցաւ մեկուն խոզերը արծեցընելու : Այն խեղճութեանը մէջ միտքն եկաւ հօրը տունն , ու ինքն իրեն ասաց . « Քանի ծառաներ կան հօրս տունը հացալից , եւ ես « հոս անօրի կմեռնիմ : » Ծրածին վրայ զըդաց , եւաւ զնաց հօրը ոտքն ընկաւ , « Հայր , « մեղայ յերկի ս եւ առաջի քո , ըստ . այսու « հետեւ քու որդիի կոչուելու արժանի չեմ . « զիս քու ծառաներուդ մեկուն տեղը դիր : »

Հայրը մեկեն զրկեց համբուրեց զորդին , փառաւոր հազուստ հազցուց անոր , պարարակ եղ մը մորթել տուաւ . ու որդւոյն ողջ առողջ

իւր քովը դարձածին համար ուրախութիւն ը-  
րաւ։ Մեծ որդին տուսն որ եկաւ՝ հարցուց  
հասկըցաւ այն տօնախմբութեան սլատճառն  
ու սկսաւ զանգատիլ։ Հայրը բառ անոր քէ  
« Արդեակ , պէտք է ուրախանամք , որովհե-  
տեւ այս քու եղրայրդ մեռած էր՝ յարու-  
թիւն առաւ , կորսուած էր՝ գտնուեցաւ։ »

Հ. Այն առակը ինչ բանի օրինակ էր։

Պ. Հայրը օրինակ էր Աստուծոյ , իսկ անա-  
ռակ որդին օրինակ է այն մեղաւորին որ  
աջքը կրացուի , ըրած մեղքերը կտեսնէ կը-  
զջայ , Աստուծմէ քողութիւն կխնդրէ։

Հ. Յիսուս իւր քարոզութեան առաջին տա-  
րին գիշաւոր ինչ զործեր ըրաւ։

Պ. Երուսաղեմայ մէջ մարդ մը առողջա-  
ցուց որ քսանըուրը տարիէ իվեր անդամա-  
լոյժ էր . հարիւրապետի մը ծառայն առող-  
ջացուց . այրի կնոջ մը որդւոյն յարութիւն  
տուաւ , եւ գովասանք խօսեցաւ Յովիաննու.  
Մկրտչի վրայ՝ զոր Հերովդէս գիշատել տը-  
մեր էր։

Հ. Քարոզութեանը երկրորդ տարին ինչ ը-  
րաւ . Յիսուս :

Պ. Զորս օրէ իվեր մեռած Ղազարոսին յա-  
րութիւն տուաւ . Սիմոն բորոտին տունը կե-

բակուր կերած ատենը՝ ընդունեցաւ զղացեալ Մագդաղենացին . փառաւոր հանդիսով Երուսաղեմ մտաւ, և այն օրը ժողովուրդը ձեռքը ձիրենիի ու արմաւենիի ճիւղեր բռնած՝ Ավաննա կանչելով բարերանեց զինքը :

---

### ԴԱՍ Ե.

Փարիսեցիք, դպիրո, և ուրիշ թշնամիք Յիսուսի: — Մեղաւոր կիև մը: — Յիսուսի այլակերպիլը Թարոր լեռան վրայ:

Հ. Նախանձուք Յիսուսի դեմինչ ըրին :

Պ. Նատ Փարիսեցիք, դպիրք, վարդապետք օրինաց և ուրիշ բարիատեաց մարդիկ Յիսուսի քարոզութեանցը, ըրած նրաշքներուն, և ժողովրդեան մեջ ունեցած համբաւոյն վըրայ նախանձելով՝ սկսան վրան չարիք խօսիլ, և առիթ կփնտռէին որ զինքը սպաննել տան:

Հ. Փարիսեցիք ինչ որոզայքներ լարեցին Յիսուսի :

Պ. Նատ որոզայքներուն մեկն ալ այս եր որ եկան օր մը հարցուցին իրեն քէ պէտք և կայսեր նարկ տալ քէ ոչ : Յիսուս դրամ մը

բերել բտուապաց «Սնոր՝ Վիրայի պատկերը կամ  
գիրը որի ունեն է» ասաց. «Երբոք պատասխա-  
նեցին իրեւն կայսերն է» — «Ուրեմն կայսեր  
բանը ու կայսերը տուեկք չըստա, Աստուծոյ բա-  
նը՝ Աստուծոյ շնուզը»

Ուրիշ անգամ մըն ալ առջեւը մեղաւոր  
կին մը բերին որ բատ օրինաց պէտք էր  
քարկոծուեր, եւ հարցուցին Յիսուսի թէ ինչ  
պէտք է ընել. մտքերնին այն էր որ երէ քար-  
կոծելու է ասէ՝ իրեւ անգուր մեղաղըն  
զինքը, եւ թէ որ արձակէ՝ իրրեւ օրինազանց  
դատապարտեն։ Իսյց Յիսուս աստուածային  
իմաստուրեամբը նորէն խայտառակեց նոցա  
չարութիւնն ու ասաց. «Զեր մեջէն անմեղը բող  
« լինի դորա Վիրայ առաջին քար նետողը : » եւ  
« որովհետեւ մեկը չկար մեջերնին որ անմեղ  
լինէր, ձգեցին փախան, եւ Յիսուս խրատեց  
զինքը որ մեկմըն ալ չմեղանչէ :  
— յի մուտքան

Հ. Յիսուս ինչ փառաւորուրեամբ ուզեց  
իւր առաքելոց միտքը հաստատել :

Դ. Արպեսզի յետոյ իւր չարչարանքն ու  
մահը տեսնելով չզայրակղին, այլ հասկընան  
թէ իսրակամօքը յանձն կառնու մեռնիլ՝ մարդ-  
կանց միրկուրեանը համար, ուզեց երեսցընել  
նոցաւ փոք աստուածային փառաց մեկ նշոյլը :

Պետրոս, Յակոբոս եւ Յովհաննես առաքեալները տարաւ. հանեց լերան մը ծայրը, աղօթքի կեցաւ, յանկարծ երեսը արեւու պէս լուսաւորեցաւ, եւ հազուստը ձիւնեն ճերմակ եղաւ. Մովսէս եւ Եղիա ալ եկան հետը կխօսէին :

Հ. Այն տեսիլը Բնչ կկոչուի:

Պ. Այլակերպութիւն կամ Պայծառակերպութիւն. եւ մեր Եկեղեցին անոր յիշատակը կը տօնէ Վարդավառին օրը :

---

## ԴԱՍ Զ.

Ոտքաշուայ. — Խորհուրդ սուրբ հաղորդութեան. — Յուղայի մատևուրիւնը. Յիսուսի խաչեղուրիւնը, մահը, բաղումը, յարութիւնը եւ երկինք համբառնալը :

Հ. Յիսուս մեռնելէն յառաջ իւր աշակերտաց Բնչ օրինակ տուաւ. խոնարհութեան :

Պ. Զարքարանաց ժամանակն որ մօտեցաւ՝ վերջին անգամ իւր աշակերտացը հետ Զատկի տօնը կատարելու ատենը ոտքերնին լը և աց ու սըրեց :

Հ. Սուրբ Հաղորդութեան խորհուրդն ինչպէս հաստատեց Յիսուս :

Պ. Երբոր կերակրի նստան , հաց մը առաւ օրինեց , ամենազօր կարողութեամբը իւր մարմնոյն փոխարկեց զայն , եւ « Սուրբ կերէք , այս է մարմին իմ » ասելով՝ առաքելոց բաշխեց որ ճաշակեն . յետոյ գինիի բաժակն առաւ , օրինեց , իւր արեանը փոխարկեց զայն , եւ աշակերտացը տալով « Արքէք իդմանէ ամենեքին , այդ է արիսն իմ » ասաց . եւ հըրաման ու իշխանութիւն տուաւ որ իրենք եւս կարող լինին նոյնը ընել ու հաստացելոց բաշխել :

Հ. Այն խորհուրդն հաստատելեն ետքը ուր զնաց Յիսուս :

Պ. Գերսեմանի պարտէզը՝ Զիրենեաց լեռը , եւ հոն աղօրքի կեցաւ :

Հ. Ո՞վ մատնեց զՅիսուս իւր քշնամեաց ձեռքը :

Պ. Իւր աշակերտը Յուղա Խկարիովտացին՝ երեսուն դահնեկանի համար :

Հ. Յուղա կկարծէր որ իւր մատնութեամբը Յիսուս իման պիտի դատապարտուի :

Պ. Ոչ . անոր համար երբ տեսաւ որ զՅիսուս

իման գատապարտեցին, առած ստակը տարաւ տաճարը նետեց, եւ յուսահատութենքն գնաց կախուեցաւ:

Հ. Հրեայք զՅիսուս ինչ ըրին:

Պ. Անտանելի տանջանքներով ու նախատինքներով չարչարելէն ետքը տարին Գողգորա յերան վրայ երկու առազակաց մեջ խաչ հանեցին:

Հ. Յիսուս խաչին վրայ սուրբ հոգին առանդած ժամանակն ինչ պատահեցաւ:

Պ. Սրեգակը խաւարեցաւ, երկիրս դողաց, տաճարին վարագույրը վերէն վար պատառեցաւ, գերեզմաններ բացուեցան, եւ շատ մեռէլներ յարութիւն առին կենդանացան:

Հ. Յիսուսի մարմինն ինչ եղաւ:

Պ. Խաչէն վար առին ու Գողգորայի մօտ նոր գերեզմանի մը մեջ դրին:

Հ. Յիսուս Յըր յարութիւն առաւ, եւ ինչպէս յայտնուեցաւ:

Պ. Գերեզմանը դրուելուն երրորդ օրը յարութիւն առաւ, աշակերտացը երեւցաւ, քառասուն օր այլ եւ այլ ժամանակ հետերնին տեսնուեցաւ, եւ խոստացաւ նոցա որ զՀոգին սուրբ յուղարկէ իրենց:

Հ. Քառասուն օրեն ետքը Բնչ լրաւ Յիսուս:

Պ. Աշակերտները Զիբենեաց լեռը տարաւ,  
օրհնեց, եւ աջքերնուն առջեւն երկինք համ-  
բարձաւ:

---

### ԴԱՍ Է.

Գաղուստ Հոգւոյն սրբոյ. — Առաքելոց և  
աշակերտաց քրիստոնէութիւն քարոզելը.  
— Քրիստուղիմէոս և Թաղէոս. — Քրիս-  
տոնեաց անունը. — Նախավկայն Սուելիա-  
նոս. — Մուրբ Մանդուխոտ:

Հ. Հոգւոյն սրբոյ գալուստն Բնչպէս եղաւ:

Պ. Քրիստոսի համբարձմանէն տասը օր ետ-  
քը՝ Պենտեկոստէի տօնին՝ երրոր առաքեալք  
եւ այլ աշակերտք սուրբ Առտուածածնայ հետ  
երուսաղէմ վերնատունը ժողվուած աղօքք  
կընէին, յանկարծ հովի սաստիկ ձայն մը  
լսուեցաւ, եւ հրեղէն լեզուներ երեւցան, որ  
եկան ամէն մէկուն զլիսուն վրայ կեցան:  
Քրիստոսի իւր աշակերտացը խոստացած Հո-

զին սուրբն էր այն. իրմով լցուած սկսան նոքա այլ եւ այլ լեզուներ խօսիլ ու զամենքը զարմացընել. Այնուհետեւ Հրէից Պենտեկոստէ տօնը կոչուեցաւ Հոգեցաղուստ :

Հ. Առաքեալք Հոգուով սրբով լցուելեն ետքը ինչ ըրին :

Պ. Մարդկային վախը մէկդի դրած՝ սկսան երուսաղեմայ մէջ համարձակ քարոզել. հոն շատերը դարձընելեն ետքը՝ բուոր աշխարհք տարածուեցան քրիստոնէութիւնը քարոզելու հանդերձ հալածանօք եւ նեղութեամբք, եւ մինչեւ իրենց արիւնը բափելով :

Հ. Մէջերնեն ոչք եղան Հայաստանի մէջ քրիստոնէութիւն քարոզողները :

Պ. Բարբուդիմեոս եւ Թաղէոս առաքեալները. Բարբուդիմեոս' երկոտասան առաքելոց մէկն էր, իսկ Թաղէոս' Քրիստոսի եօրանասունուերկու աշակերտաց մէկը՝ եղբայր Ովկմայի առաքելոյ: Ասոնք ժողովրդեան մեծ մասը դարձի բերին՝ Արգար բագաւորին ի-Քրիստոս հաւատալէն ետքը: Երբոր Արգարու քեռորդին Սանատրուկ՝ նորա տեղը բագաւորեց, քրիստոնէութիւնը բողուց՝ նորէն կը-ռապաշտ եղաւ, եւ այն սուրբ առաքեալները նահատակեց:

Հ. Առաջին եկեղեցին ուր հաստատուեցաւ:

Պ. Յերուսաղէմ՝ որ Յակոբոս առաքելոյն արոռն էր :

Հ. Ո՞ւր տեղի հաւատացեալները նախ ի-  
բենք զիրենք քրիստոնեայ անուանեցին:

Պ. Անտիոք քաղաքին մեջ եղած հաւատա-  
ցեալքը :

Հ. Քրիստոսի համար առաջին արիւն քա-  
փողն ով եղաւ :

Պ. Սուրբ Ստեփանոս նախասարկաւագը ,  
որուն վրայ նախանձեցան Հրեայք , իբրև  
հայոցից ատեան հանեցին զինքն ու դատա-  
պարտելով քարկոծեցին յերուսաղէմ , Քրիս-  
տոսի 33 բուականին . ուստի եւ Նախավկայ  
Քրիստոսի կամ Առաջին Մարտիրոս կոչուե-  
լու արժանի եղաւ :

Հ. Թագաւորաց մեջ ով եղաւ առաջին հա-  
ւատացեալն ի՞Քրիստոս :

Պ. Սեր Աթգար թագաւորը , որ Յիսուսի  
կենդանութեանը ժամանակ ըրած հրաշքներն  
ու բժշկութիւնները լսելով՝ դեսպան յուղար-  
կեց նմա , աղաջելով որ զայ զինքն ալ իւր բո-  
րոտութենէն բժշկէ : Յիսուսի պատութելովը  
իւր մահուանէն ետքը առաքեալք դրկեցին  
զսուրբն Թաղէոս , որ եկաւ Հայատան , Աք-

գար քազաւորը բժշկեց՝ հետը դարձունելով  
ինաւատս Քրիստոսի նաև ժողովրդեան մեծ  
մասը :

Հ. Ո՞ր կոյսն եղաւ առաջին նահատակն  
իշայս :

Պ. Մեր Սանատրուկ քազաւորին աղջիկը  
սուրբ Սանդուխտ, որ Թաղէոս առաքելոյն  
քարոզութեամբը քրիստոնեութիւնն ընդունե-  
լով՝ հօրը հրամանաւը սուրբ առաքելոյն նետ  
նահատակեցաւ :

---

### ԴԱՍ Ը.

Սողոս, որ և Պողոս առաքեալ. — Զորտ  
աւետարանիք :

---

Հ. Սուրբ Ստեփանոսը քարկոծողաց մէջ ա-  
մենէն նախանձայոյզն ով էր :

Պ. Սողոս կամ Սաւուդ անունով Հրեայն :

Հ. Սա ուղինչպէս դարձաւու նախանձայոյզ  
քարոզիչ եղաւ Յիսուսի :

Պ. Սուրբ Ստեփանոսը քարկոծելէն ետեւ եր-  
բոր Դամասկոս կերքար՝ հոնտեղի քրիստո-

նեայքն եսս հալածելու, ճամբան ահաւոր լոյս  
մը տեսաւ, ձիկն վար ընկաւ եւ լսեց այս խօսքը.  
« Սաւոնդ Սաւոնդ, զիս ինչո՞ւ կհալածես . Ես  
եմ Յիսուս զոր դուն կհալածես : » Շուտով  
ոտք ելաւ Սօղոս, բայց աշքը կուրցեր էր : Ա-  
ռին զինքը Դամակոս տարին, ուր աշուշնե-  
րը հրաշքով բացուեցան, եւ այնուհետեւ ան-  
վեհեր քարոզիչ եղաւ հեթանոսաց, որով եւ  
Առաքեալ հերանոսաց կոչուեցաւ, անունն ալ  
փոխեց Պողոս դրաւ, եւ յետոյ Հոռմ գնաց նա-  
հատակուեցաւ Քրիստոսի 66 թուականին :  
Հետը նահատակուեցաւ նոն նաև Պետրոս ա-  
ռաքեալը :

Հ. Չորս աւետարանիջք Յըք գրեցին իրենց  
աւետարանները :

Պ. Առաջին աւետարանը գրեց Մատթեոս ա-  
ռաքեալը, Քրիստոսի 40 թուականին. Երկրորդ  
աւետարանը գրեց սուրբն Մարկոս՝ աշակերտ  
առաքելոյն Պետրոսի՝ 43 թուականին. Երրորդ  
աւետարանը գրեց սուրբն Ղուկաս թիշկ Ան-  
տիոքացի՝ 47 թուականին. չորրորդը գրեց  
սուրբն Յովհաննես՝ 95 թուականին :

Հ. Մատթեոս աւետարանիջն ինչպէս կնըկա-  
րազրուի :

Պ. Մատթեոս աւետարանիջը կնկարուի՝ քո-  
վը մարդակերպ հրեշտակով կամ մարդով մը

իրեւ, ինչան՝ թէ իւր զրուածոց գիշաւոք  
վախճանն եղեք և Որդուոյն Աստուծոյ մարդե-  
ղուրիւնը ցուցընել:

Հ. Մարկոս աւետարանիցն ինչպէս կնըկա-  
րագրեն:

Պ. Քովը առիւծ մը կնըկարեն, իրը զի ինքն  
աւելի մանրամասն կերպով կպատմէ մեզ  
Քրիստոսի քագաւորուրիւնը, զոր Եզեկիել  
մարզարէն առիւծի կերպարանքով տեսեր եր  
իւր տեսլեանը մէջ:

Հ. Ղուկաս աւետարանիցն ինչպէս կնըկա-  
րագրուի:

Պ. Քովը զուարակ կամ եզ մը, որովհետեւ  
ամենէն աւելի ինքը խօսած է Քրիստոսի քա-  
հանայուրեանը վրայ, որ Եզեկիելի տեսլեա-  
նը մէջ զուարակով կամ եզով նշանակուած է:

Հ. Ցովհաննէս աւետարանիցն ինչպէս կը-  
նկարագրուի:

Պ. Քովը արծիւ մը, որովհետեւ զրուածոցը  
մէջ արծուի պէս կբարձրանայ եւ Որդուոյն  
Աստուծոյ աստուածուրիւնը կքարոզէ:



## Ց Ա. Ն Կ.

ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ՀԻՆ ԿՏԱԿԱՐԱՆԻ.

Աւխարհիս ստեղծմանէն մինչեւ ջրհեղեղ.

Ստեղծումն աշխարհի եւ արարածոց ..	3
Դրախտ. — Մեղք նախահարց. — Աքելի մահը .....	6
Ենովս, Մաքուսաղա, եւ վարձատրու- թիւն նոցա .....	9
Ապականութիւն մարդկան. — Նոյ եւ. Ջրհեղեղ .....	10

Ջրհեղեղին մինչեւ Աբրահամու կոչումը.

Որդիք Նոյի, եւ Աշտարակաշինութիւն Բարելոնի .....	13
--	----

Աբրահամու կոչմանէն Մովսեսի մահը.

Կոռապաշտութիւն. — Աբրահամ եւ Ղովտ. Մելքիսեդեկ քահանայ. — Ծնունդ Խսմայելի .....	16
--	----

Սողոմ Գոմորայ կործանումը. — Խա-  
հակայ ծնունդը. Խսմայել եւ Խսմայելացիք. 19

Արքահամու հաւատքն ու հնազանդութիւնը . — Եսաւ եւ Յակոբ .....	22
Որդիք Յակոբայ . — Յովսէփ կվաճառուի .....	24
Յովսէփ բանտ կդրուի , եւ փառքի կը-հասնի .....	27
Յովսէփայ Եղբարց եւ հօրը Եգիպտոս գալը . — Յովսէփ Եղբարքը կտեսնէ . — Զիրենք բանտ դնել կուտայ .....	29
Խորայելացւոց Եգիպտոսն Ելլելը .....	32
Հրեից Կարմիր ծովէն անցնիլը , եւ անապատին մէջ օրենք ընդունիլը .....	35
Խորայելացւոց ոսկի հորք պաշտելը . — Խորան վկայութեան . — Քահանայք ...	38
Խորայելացւոց նոր նոր յանցանքներն ու պատժուիլը անապատին մէջ .....	41
Ահարոնի զաւագանը կծաղկի . — Ամուր-հացիք եւ Մովաքացիք կյաղբուին . — Բադաամ . — Մովսէսի մահը .....	43
Յոր Երանելի .....	46
<b>Մովսէսի մահուանէն մինչեւ Հրեից բաւորութիւնը .</b>	
Հրեայք Աւետեաց Երկիրը կմըտնեն . — Յեսուայ քաջութիւնները .....	48

Քանանացւոց երկրին բաժանումը . —	
Գորոնիկէլ, Առովդ, Դերովդա, Բարակ ...	51
Գեղեռն, Սքիմելէք, Թովդա, Ցայիր,	
Ցեփրայէ ..... Սամփսոն, Եւ իւր քաջութիւնն ու մահը .	53 56
Հեղի քահանայ . — Սամուէլ Վերջին	
դատասոր ..... Հոռոր Եւ Ցեսսէ .....	58 60

Խորայելացւոց բազաւորութենէն մինչեւ  
Բաբելոնի գերութեան վերջը .

Սառուդ, Դաւիթ, Ցովնաքան ..... Դաւարի հայածուիլը Սառուդէն . — Սա-	62
ռուդայ Եւ Ցովնաքանու մահը ..... Հ Դաւարի բազաւորելը, մեղքն ու ապաշ-	65
խարելը . — Աքիսողոմ ..... Դաւարի Երուսաղէմ դառնալը , Ժողո-	67
վուրդը համրելն ու պատժուիլը . — Սաղմոս ..... Թագաւորութիւն Սողոմոնի . — Շինու-	69
թիւն տաճարին . — Գրուածք Սողոմոնի .. Արքովամ , Եւ Ցերոբովամ .....	71 74

Թագաւորք Խորայելի .

Ցաջորդք Ցերոբովամայ . — Աքաաք . — Ցեզարէլ . — Եղիա մարգարէ .....	76
---	----

Եղիա Երկինք կվերանայ .—Եղիսէ մար-	
գարէ . — Յեռ . . . . .	79
Յովնան մարզարէ . — Յեռայ եւ Յեր-	
բովամու յաջորդները . — Սաղմանասար , առ	
կործանումն քագաւորութեանն Խըալելի .	82
Պատմութիւն Տովբիրայ . . . . .	85
Ռորովամ , եւ իւր յաջորդները . — Գո-	
դողիա եւ Յովաս . . . . .	88
Ամասիա եւ իւր յաջորդները . — Եցե-	
կիա եւ Եսայի մարզարէն . . . . .	94
Եցեկիա եւ Սենեքերիմ . — Մանասէ .	
— Յուղիթ .—Ամոն . — Յովսիա . . . . .	94
Յովաքազ . — Երեմիա մարզարէ . —	
Առաջին եւ Երկրորդ գերութիւն Հրեից ի-	
Բարելոն . — Յեքոնիա . . . . .	97
Կործանումն քագաւորութեան Յուղայ .	
— Դանիէլ եւ Երեք Մանկունք . . . . .	99
Դանիէլի մարզարէութիւնները . — Դա-	
րեն Մար եւ Կիւրոս . — Մարզարէք .	103
Բաբելոնի գերութեան լեշանալին մին-	
չեւ Քրիստոփ ծնունդը .	
Կիւրոս . — Զօրաբարէլ եւ Եզր . —	
Եսրեր . . . . .	105
Նեեմի . — Հրեից ու Մամարացոց ա-	
տելութեան սաստկանալը . — Մեծին Ա-	
ղեքսանդրի Երոսաղէմ Երբալը . . . . .	109

Պտղոմեոս Սուտեր . — Պտղոմեոս Եղ-	
քայրասէր , որ եւ Աստուածաշունչը քարգ-	
մանել կուտայ . — Պտղոմեոս Փիլոպատոր .	112
Անիա քահանայապետ . — Հեղիոդորոս .	
— Յասոն . — Նահատակութիւն Եղիազարու	
իւ եօրն եղբարց ..... 114	

Իշխանութիւն Մակաբայեցւոց .

Մատարիա քահանայ եւ հինգ որդիքը .	
— Յուղա Մակարէ . — Շմաւոն եղբայրը .	
Ցովհաննէս Հիւրկանոս ..... 117	

Երկրորդ քագաւորութիւն Հրեից .

Արիստարուդոս՝ քագաւոր Հրեից . —	
— Յաննէս , Աղեքսանդրա եւ Հիւրկանոս	
Բ. — Անտիգոնոս ..... 121	





ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ՆՈՐ ԿՏԱԿԱՐԱՆԻ .

Նոր Կտակարան . — Ծնունդ Ցովհան-	
նու . — Աւետումն սրբոյ Կուսին . — Ծը-	
նունդ Տեառն Յիսուսի ..... 125	
Անմեղ մանկունք . — Փարիսեցիք եւ	
Սաղուկեցիք . — Յիսուսի մանկութիւնը .	
— Ցովհաննէս Մկրտիչ . — Մկրտութիւն	
Յիսուսի ..... 129	


- Յիսուս անապատ կքաջուի. — Առաքեալք. — Ինն երանութիւնք. — Առաջին հրաշագործութիւն Յիսուսի. — Քարոզութիւնք Յիսուսի ..... 132
- Անառակ որդույն առակը. — Քարոզութեանը երկրորդ տարին Յիսուսի ըրածները ..... 13
- Փարիսեցիք, դպիրք, եւ ուրիշ բշնամիք Յիսուսի. — Մեղաւոր կին մը. — Յիսուսի այլակերպիլը Թարոր լեռան վրայ. 137
- Ոտնալուայ. — Խորհուրդ սուրբ հաղորդութեան. — Յուղայի մատնութիւնը. — Յիսուսի խաչելութիւնը, մահը, քաղումը, յարութիւնը եւ երկինք համբառնալը .... 139
- Գալուստ Հոգևոյն Սրբոյ. — Առաքելոց եւ աշակերտաց քրիստոնէութիւն քարոզելը. — Բարբուդիմեոս եւ Թաղեոս. — Քրիստոնեայ անունը. — Նախավկայն Ստեփանոս. — Սուրբ Սանդուխտ ..... 142
- Սօդոս, որ եւ Պօդոս առաքեալ. — Չորս աւետարանք ..... 145







1961



150